


Рукописи письма
от лица присяжн

342
V-91

1940



01 MAR 1940

ԲԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈՐԵՍՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա.Ի. 1-Ն ՀԱԽԵՄԻ 1940 Փ.



ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՐԴՅՈՒՆՎՈՐԱՑԻ
ԵՐԵՎԱՆ • 1940

347
U-II

ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ
ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա.Պ 1-Ն ՀՈՒԼԻՍԻ 1940 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ԱՐԴՅՈՒՆՎՈՒԹՅԻ
ՑԵՐԵՎԱՆ ● 1940

05 AUG 2013

[351x : 323.32]

37.377



35186 кн.



8259-53

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ
ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՅԵՎ ԲՆԱԿՑՈՒԴԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴՈՒ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ
ՅԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻ
ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդա-
կան Կոմիսարների Խորհրդի 1937 թվի հոկտեմբերի
17-ի վորոշումը (ԽՍՀՄ Որ. Ժոդ., № 69, հոդ. 314)

Սոցիալիստական ինդուստրացման հաջողությունները,
վորոնք առաջացրին բնակչության բուռն աճում հինգա-
դաշներում և նոր խոշոր արդյունաբերական կենտրոնների
ստեղծում, պայմանավորեցին բնակարանների պահանջի
խիստ այլելացումը:

Աշխատավորության նյութական-կենցաղային մակար-
դակն անշեղորեն բարձրացնելու նպատակով բնակարանային
քաղաքականությունն իրագործելով՝ Խորհրդային պետա-
թյունը տարեցտարի ամենացնում է պետական միջոցների
ներդրումները նոր բնակարանային շինարարության մեջ:
Մինչև 1937 թ. հունվարի 1-ը կառուցված ե 54 միլիոն
քառակուսի մետր բնակելի տարածություն, տասներկու և
կես միլիարդ ոուրլու արժողությամբ: Այս ամբողջ նոր
բնակարանային ֆոնդը, չոկտեմբերյան հեղափոխության
կողմից կապահանջական տնատերելքից բանադրաված
տների հետ միասին, համաձայն ԽՍՀ Միության Սահմանա-
դրության 6-րդ հոդվածի, հանդիսանում է պետական սե-
փականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք:

Աշխատավորության աճած նյութական և կուտառա-

կան մակարդակը սլահանջում և որինակելի կերպով պահել պետական բնակարանային ֆոնդը:

Մինչդեռ այդ հսկայական բնակարանային ֆոնդի կառավարման և ոգտագործման բնագավառում գոյություն ունեցող կարգը վո՞չ միայն չի համարատասխանում բնակարանային ֆոնդը, վորպես պետական ունեցվածք, պահպանելու և այն որինակելի կերպով պահելու պահանջներին, այլ, ընդհակառակը, արդելակում և բնակարանային տընտեսության հետագա բարելավման դործին: Տների կառավարման և բնակարանային շինարարությունը, բնակարանների բաշխումը և ոգտագործումը կարգավորող որենսդրության մեջ պահպանվել են ժողովրդական տնտեսության այն ժամանակաշրջանի վնասակար մնացորդները, յերբ տեղական խորհուրդները, իրենց կազմակերպական և տնտեսական թուրության պատճառով, հարկադրված ելին տների կառավարման, բնակելի տարածության բաշխման և ոգտագործման իրավունքները հանձնել բնակելիչների առանձին կոլեկտիվներին—բնակարանային վարձակալական կոռպերատով ընկերություններին: Դրա հետևանքով, տների պետական բաշխման և ոգտագործման փոխարեն, վոր պետք է իրագործվեր տեղական խորհուրդների միջոցով, պետական բնակարանային ֆոնդը գործնականում զգալի չափով, ըստ եյության անկոնտրու, տեղական խորհուրդներից անկախ, բնակելիչների մանր կոլեկտիվների ձեռքն անցավ, վորոնք միայն ձեռականորեն միավորվել ելին բնակարանային-վարձակալական կոռպերացիայի միություններում: Իրենք, տեղական խորհուրդները, ինչպես և կոմունալ տնտեսության ժողովամանները, վոչ միայն չելին նախաստում այդպիսի, մանգամայն անթույլատրելի, սրբակարիկան վերացնելուն, այլ ընդհակառակը, բնակարանային տնտեսության կառավարման իրենց իրավունքները հաճույքով զիջում ելին բնակարանային-վարձակալական կոռպերատիվներին:

Դրա հետևանքով, բնակարանային-վարձակալական կոռպերացիայի կողմից կառավարվող բնակարանային ֆոնդը, վոր կազմում և 53 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն, միանդամայն անբավարար վիճակում է

դատավում: Բնակարանային-վարձակալական կոռպերատիվ ընկերությունները (ԲՆԱԿՎԱՐՁԿՈՒՊՊ-ՆԵՐԸ) ճնշող մեծամասնությամբ գործնականում չեն կառավարում տները, հոգ չեն տանում դրանց նորոգման մասին, չեն պահպան կուլտուրական վիճակում: Տների կառավարման ասպարեզում գոյություն ունեցող անտնտեսությունը հաճախ հասցնում է դրանց կիսավեր վիճակի:

ԲՆԱԿՎԱՐՁԿՈՒՊՊ-ՆԵՐԸ տներում անպատճականատու կերպով կատարվում են մասսայական վերակառուցումներ, առանձնապես ընդհանուր խոհանոցները վերասարչավորվում են վորպես բնակելի չենք, իսկ այլ դեպքերում բնակելի չենք բերում կերակուր պատրաստելու համար պլիտաներ են սարքվում, վորը վատթարացնում և բնակարանային-կենցաղային պայմանները և ուժեղացնում հրդեհների վտանգը: Հոգս չի տարվում, վորպեսզի ընդհանուր ոգտագործման տեղերը (խոհանոցներ, վաննաներ, միջանցքներ, արտաքնոցներ, լիֆտեր) մաքուր և կարգին պահվեն: Տարբական սանհիտարական-առողջապահական պահանջները չեն պահպանվում: Բնակարանային վարձի վերաբերյալ որենքը, ինչպես վարձը հաշվելու, նույնական ժամանակին մուծելու տեսակետից խախտվում է, վորի հետևանքով տնային տնտեսությունը չի ստանում գգալի միջոցներ:

Բացի դրանից, քիչ չեն այնպիսի ԲՆԱԿՎԱՐՁԿՈՒՊՊ-ՆԵՐԸ, վորոնք նպաստում են բնակելի տարածության սպեկուլացիային:

Բնակարանային կոռպերացիայի սիստեմը, վորը բաղկացած է բազմաթիվ ողակներից—յենթառայոնական բնակմիություններ, ուայոնական բնակմիություններ, քաղաքային, մարզային (յերկրամասային) և հանրապետական բնակմիություններ—տարեկան ծախսում և միությունների ապարատը պահելու համար մոտավորապես քառասուն միլիոն ոտրդի, բայց չի ապահովում բնակարանային ֆոնդի պատշաճ կառավարումն ու պահպանումը:

Անբավարար վիճակում են գտնվում այն բնակելի տները, վորոնք անմիջապես կառավարվում են տեղական խորհուրդների ու գերատեսչությունների կողմից, ինչպես նաև

բնակարանային-շինարարական կոռպերացիային պատկանող տները:

Շինարարական կոռպերացիայի կառուցած և պետության վրա 1,5 միլիարդ ռուբլի նստած բնակարանային ֆոնդը փաստորեն դարձել է բնակարանային-շինարարական կոռպերատիվների առանձին անդամների անձնական սեփականությունը:

Բնակարանային կոռպերացիայի վերաբերյալ 1924 թվի ոգոստոսի 19-ի Կանոնադրության և բանվորական բնակարանների շինարարությանն աջակցելու միջոցառումների վերաբերյալ 1927 թվի հունիսի 15-ի Կանոնադրության համաձայն՝ բնակարանային-շինարարական կոռպերատիվները Կոմունալ և բնակարանային շինարարության Փինանսավորման բանկի միջոցով ստացել են յերկարատև (մինչև 60 տարվա) շինարարական փոխառվություններ՝ տների արժեքի 80—90 տոկոսի չափով, իսկ յերբեմն նույնիսկ 90 տոկոսից ել ավելի: Դրա չնորհիվ, կոռպերացիայի փայտերերը պետության հաշվին բնակարաններ ստացան անժամկետ և անվերադրձ կերպով ողտագործելու համար և փաստորեն սեփական միջոցների անհշան ներդրումով դարձան բնակելի տարածության արտօնյալ սեփականատերեր:

Պետական բնակարանային ֆոնդի վատնման միևնույն ուղու վրա կանգնեցին շատ պետական հիմնարկություններ և արդյունաբերական ձեռնարկություններ, վորոնք բնակարանային-շինարարական կոռպերացիային պետական խոշոր միջոցներ են հանձնել միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների վորոշումների (ԽՍՀՄ Ժողովրդի 1927 թվի նոյեմբերի 15-ի վորոշման և մյուս հանրապետությունների համաման վորոշումների) հիման վրա, վորոնցով պետական որդաններին տրվում եր բնակարանային-շինարարական կոռպերացիային այդպես Փինանսավորելու իրավունք: Այդ միջոցներով կառուցված տներում բնակելի տարածությունն այնուամենակ անցնում եր բնակարանատերերի լիակատար կարգադրության տակ:

Այսպիսով, բնակկոռպերացիան, բնակարանային շինա-

րարությունն ուժեղացնելու համար բնակչության միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու փոխարեն, կառուցում եր գրեթե ամբողջովին պետական միջոցների հաշվին, և միենաւին ժամանակ կոմունալ տնտեսության որդանների համար չեր ապահովում կառուցված տների ոգտագործման և կառվարման համապատասխան իրավունքները:

Բնակարանային-շինարարական կոռպերացիան տարեցարի մեծացնելով փայտերերի թիվը, չեր բավարում նրանց բնակելի տարածությամբ: Այդ փայտերերից հավաքված միջոցների զգալի մասը հատկացվում եր անտնտեսության հետևանքով կոռպերատիվ շինարարության մեջ առաջացած վնասները ծածկելուն:

Բնակարանային որենսդրությունը, վորը թույլ եր տակիս կոռպերատիվ բնակարանային շինարարության վրա ծախսել պետական միջոցներ և պետության հաշվին կառուցված տները փաստորեն տալիս եր քաղաքացիների առանձին խմբերին (բնակարանային-շինարարական կոռպերատիվներին) վորպես սեփականություն, ինչպես և թույլ եր տակիս քաղաքացիների առանձին խմբերի (բնակարանային-շինարարական կոռպերատիվ ընկերությունների) անմիջական կառավարմանն ու ոգտագործմանը հանձնել պետությանը պատկանող կամ պետական ճենարկությունների և հիմնարկությունների կառուցած տները, մշակվել եր 1924—1930 թվականների ժամանակաշրջանում, յերբ տեղական խորհուրդները և պետական ձեռնարկությունները չեյին կարողանում ապահովել բնակարանային ֆոնդի համապատասխան կառավարումը: Այդ որենսդրությունն այժմ՝ տեղական խորհուրդների, ինչպես նաև պետական ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատանքը զգալի չափով բարելավելու պայմաններում, միանգամայն չի արդարացնում իրեն և շատ բանում արգելակում եր բնակարանային տնտեսությունն առողջացնելու գործին: Այդ առանձնապես վերաբերում ե հետևյալ որենքներին:

ա) «Կանոնադրություն բնակարանային կոռպերացիայի մասին», հաստատված ԽՍՀ Միության կենտրոնականի ժողովում կոմիսի կոմիտեի կողմից 1924 թ. ոգոստոսի 19-ին:

բ) «Կանոնադրություն բանվորների և ծառայողների կենցաղի բարելավման ֆոնդի մասին», հաստատված ԽՍՀ Միության կենտպորձկոմի և ժողկոմի խորհրդից 1928 թ. հունիսի 27-ին: ԽՍՀ Միության կենտպորձկոմի և ժողկոմի խորհրդի 1927 թ. հուլիսի 6-ի վորոշումը՝ «Բնակորների և ծառայողների կենցաղի բարելավման ֆոնդի հաշվին պետական ձեռնարկությունների կառուցած բնակելի շինությունները բանվորական բնակարանային-վարձակալական կոոպերատիվ ընկերություններին հանձնելու մասին» և ՌԽՖՍՀ ժողկոմի խորհրդի 1927 թ. նոյեմբերի 15-ի վորոշումը՝ «Քաղաքային բնակավայրերում բնակարանային տնտեսության վերաբերյալ միջոցառումների մասին»:

գ) Որենքներ, վորոնք սահմանափակում են ազատվող բնակելի տարածությունը տեղական խորհուրդների կողմից տնօրինելու իրավունքները և նեղ-գերատեսչական շահերով զանազան պետական հիմնարկություններին և հասարակական կազմակերպություններին (միութենական հանրապետությունների ուղղիչ-աշխատանքային հիմնարկությունների գլխավոր վարչություն, միլիցիա, գիտական աշխատողների սեկցիա և այլն) իրավունք են տալիս բնակեցնել և ողտագործել այդ բնակելի տարածությունը:

Կառուցման իրավունքի վերաբերյալ գործող որենքները—ՌԽՖՍՀ 1922 թ. դեկտեմբերի 31-ի՝ Քաղաքացիական Որենսգրքի 156-րդ և 166-րդ հոդվածները և ԽՍՀ Միության ժողկոմի խորհրդի 1928 թ. ապրիլի 17-ի՝ «Մասնավոր կապիտալի հաշվին բնակարանների շինարարությունը խրախուսելու միջոցառումների մասին» վորոշումը կառուցման իրավունքով տնտեսեր հանդիսացողների կողմից ոգտագործվում են, առանձնապես ամառանոցային վայրերում, որենքով չսահմանափակված բնակարանային վարձ գանձելու նպատակով և բնակելի տարածության սպեկուլացիայի համար:

Անհրաժեշտ համարելով կասեցնել պետական բնակարանային ֆոնդն ուղղակի և անուղղակի վատմելու բոլոր և ամեն տեսակ ճանապարհները և վերջ տալ բնակելի տարածության սպեկուլացիային, ինչպես և անհրաժեշտ համա-

րելով կազմակերպել բնակարանային տնտեսության պատշաճ կառավարումը ԽՍՀ Միության քաղաքացիների կուլտուրական բնակարանի հարածուն պահանջները բավարարելու համար, ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են.

I. Բնակարանային-վարձակալական կոռպերացիան և բնակարանային-շինարարական կոռպերացիայի միությունները վերացնելու մասին

1. Վերացնել բնակարանային-վարձակալական կոռպերացիան՝ ԲՆԱԿՎԱՐՁԿՈՒՊ-ՆԵՐԸ և նրանց յենթաշրջանային, շրջանային, քաղաքային, մարզային (յերկրամասային), հանրապետական միությունները, բնակարանային շինարարական կոռպերացիայի Մոսկվայի ու Լենինգրադի քաղաքային միությունները, ինչպես և յերկաթուղային ու ջրային տրանսպորտի բնակարանային կոռպերացիայի միությունները, բնակարանային կոռպերացիայի համամիութենական Խորհուրդը և այն բնակարանային-շինարարական կոռպերատիվները, վորոնք չեն համապատասխանում այս վորոշման գործ հոդվածով նախատեսված պայմաններին:

2. Բնակարանային-վարձակալական կոռպերացիայի կողմից ոգտագործվող աները հանձնել տեղական խորհուրդների և պետական ձեռնարկությունների անմիջական կառավարմանը: Պետական ձեռնարկություններին հանձնվում են այն տները, վորոնք տրվել են կոռպերացիային ԽՍՀ Միության կենտրոնային և ժողկոմի 1927 թ. հուլիսի 6-ի՝ «Բնակությունների և ծառայողների կենցաղը բարելավելու ֆունդի հաշվին պետական ձեռնարկությունների կառուցման կելի տները բանվորական բնակարանային-վարձակալական կոռպերատիվ ընկերություններին հանձնելու մասին» վորոշման համաձայն:

3. Այն տները, վորոնք կառուցվել են և կառուցվում են բնակարանային-շինարարական կոռպերացիայի կողմից հիմնականում ի հաշվով պետական միջոցների, հանձնել՝

ա) տեղական խորհուրդների տնօրինությանը, յեթե նրանց շինարարությունը Փինանսավորվել է Յեկորանկի

(ԿԵՆՏՐՈՆԱԼԱՆԻ կոմունալ բանկի) և տեղական կոմունալ բանկերի ուղղակի վարկերով՝ ի հաշիվ հասուլ կապիտալ ների.

բ) համապատասխան կազմակերպությունների, հիմնարկությունների և ձեռնարկությունների տնօրինությանը, յեթե շինարարությունը ֆինանսավորվել է ի հաշիվ նրանց միջոցների:

4. Ի բացառումն այս վորոշման յերբորդ հոդվածից, բնակարանային-շինարարական կոոպերատիվների տնօրինության տակ թողնել նրանց կառուցած տները, յեթե այս վորոշումը հրատարակելու պահից 6 ամսվա ընթացքում այդ բնակարանային-շինարարական կոոպերատիվները լրիվ կմարեն պետությունից ստացած փոխառվությունը:

Սահմանել, վոր այսուհետեւ բնակարանային-շինարարական կոոպերատիվները տներ և ամառանոցներ կարող են կառուցել միմիայն իրենց սեփական միջոցներով։

Արգելել պետական հիմնարկություններին ու ձեռնարկություններին իրենց պատկանող ֆինանսական և նյութական միջոցները վորեւ ձեռքել ներդրել բնակարանային-շինարարական կոոպերատիվների կողմից իրագործվող տների և ամառանոցների շինարարության մեջ։

5. Ամառանոցային Փոնդը պահպանելու և բարելավելու նպատակով, առաջարկել քաղաքային խորհուրդներին՝ իրենց տնօրինության տակ ամառանոցային զգալի տարածություններ լինելու դեպքում՝ կազմակերպել (բնակարանային վարչության կազմում) ամառանոցային տրեստներ, տնտհաշվարկային հիմունքներով։ Ամառանոցային տրեստների վրա դեռև ամառանոցային աշխաների կոմունալ տնտեսությունը (ջրմուղ, կոյուղի, ճանապարհներ և այլն) կառավարելու ու զարգացնելու պարտականությունը։

Լուծարքի յենթարկել ամառանոցային-շինարարական միությունները և ամառանոցային շինարարական այն կոոպերատիվները, վորոնք ամառանոցներ են կառուցել կամ կառուցում են պետական միջոցների մասնակցությամբ՝ շինարարության արժեքի 50 տոկոսից ավելի չափով։

Պահպանել ամառանոցային-շինարարական այն կոոպե-

րատիվները, վորոնց ֆինանսավորումն ի հաշիվ պետական միջոցների կազմում է 50 տոկոսից պակաս, այն պարբերաբար վորոնց կարգով պարտավորությունների մատանքների վորոշումը հրապարակելու որից 6 ամսվա ընթացքում։

Այն ամառանոցները, վորոնք կառուցել են և կառուցում են ամառանոցային-շինարարական կոոպերատիվները բանկային վարկերի կամ պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների միջոցների մասնակցությամբ շինարարության արժեքի 50 տոկոսից ավելի չափով, հանձնվում են համապատասխան վարկերով քաղաքային խորհուրդներին, պետական հիմնարկություններին և ձեռնարկություններին։ Աստ պատկանելույն։

Քաղաքային խորհուրդներին և անտեսական կազմակերպություններին իրավունք վերապահել թողնել ամառանոցները լուծարքի յենթարկված ամառանոցային կոոպերատիվների անդամներին՝ անձնական սեփականության իրավունքներով, պայմանով, վոր նրանց ստացած փոխառվությունը մարդի 6 ամսվա ընթացքում, վորի մասին կոոպերատիվների անդամները համապատասխան պարտավորաբարիվների անդամները համապատասխան գրեթե պետական հանձնարկություններին։

Այդ պայմանները չկատարվելու դեպքում, ամառանոցներն անցնում են պետության տնօրինությանը։

6. Հանձնարարել ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսարների Խորհրդին՝ մեկ ամսվա ընթացքում սահմանել։

ա) այն կարգը, վորով պետք ե լուծարքի յենթարկվելու բնակարանային վարձակալական կոոպերացիան և բնակարանային-շինարարական ու ամառանոցային-շինարարական կոոպերացիայի միությունները, ինչպես նաև բնակարանային-շինարարական և ամառանոցային-շինարարական կոոպերատիվները, վորոնք չեն բավարարում 4-րդ և 5-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին։

բ) Նրանց արամադրության տակ գտնվող տներն ու ամառանոցները տեղական խորհուրդներին և համապատասխան հիմնարկություններին ու կազմակերպություններին հանձնելու կարգը։

գ) բնակարանային-շինարարական և ամսուանոցային կոռպերացիայի փայտառերերի հետ հաշիվները մաքրելու կարգն ու ժամկետները, ինչպես նաև վորոշել բնակարանային-շինարարական և ամսուանոցային կոռպերացիայի փայտառերին նրանց փայտավճարները վերադարձնելու կարգն ու ժամկետները:

7. Թույլատրել տնտեսական որդաններին և տեղական խորհուրդներին առանձին վայրերում աջակցություն ցույց տալ աշխատավորներին (շինանյութերով և 5 տարուց վոչ ավելի ժամկետով բանկային վարկով) իրենց համար բնակելի տներ կառուցելու:

II. Պետական բնակարանային փոնդի կառավարման կարգի մասին

8. Պետական բնակարանային Փոնդի անմիջական կառավարումը և նրա պահպանման լիակատար պատասխանատվությունը գնել տեղական խորհուրդների և պետական հիմնարկությունների ու արդյունաբերական ձեռնարկությունների վրա՝ նրանց տնորինության տակ գտնվող տների նկատմամբ:

Վերացնել տեղական խորհուրդներին պատկանող տները պետական հիմնարկություններին, ձեռնարկություններին և հասարակական կազմակերպություններին ամրացնելու կարգը: Տեղական խորհուրդների տները կարող են այդ խորհուրդների կողմէց պետական հիմնարկությունների, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների ոգտագործմանը հանձնվել միաժիայն յերկարատև վարձակալական այնպիսի պայմանագրերի հիման վրա, վորոնք ապահովում են այդ տների լիակատար պահպանումը:

9. Սահմանել, վոր տեղական խորհուրդները (քաղաքային, սայոնական՝ խոչոր քաղաքներում, ավանային) իրականացնում են՝

ա) իրենց պատկանող բնակարանային Փոնդի անմիջական կառավարումը.

բ) մնացած ամբողջ բնակարանային Փոնդի տեխնիկական և սանիտարական հսկողությունը, ինչպես և պահպան-

մանը ու նորոգմանը հետեւը և վերահսկելը, անկախ նրանից, թե ում անորոշության տակ ե գտնվում այն:

10. Պարտավորեցնել տեղական խորհուրդներին՝ վերոհիշյալ խորհրդներն իրագործելու համար կազմակերպել բնակարանային վարչություններ (կոմունալ անտեսության բաժինների կազմում):

Ծանօթություն 1. Ռայոնական խորհուրդները՝ խոչոր քաղաքներում և ավանային խորհուրդները, վորոնց կազմում կոմունալ տնտեսության բաժիններ չկան, բնակարանային վարչություններ են կազմակերպում իրենց բաժինների իրավունքներով:

Ծանօթություն 2. Մուկա և Լենինգրադ քաղաքների առավել խոչոր առանձին ուայններում, ՌիֆՍՀ կոմունալ Տնտեսության Ժողկոմատի համաձայնությամբ, թույլ տալ մեկ սայոնականի փոխարեն կազմակերպել յերկու աերիտորիալ բնակարանային վարչություն ուայնականների իրավունքներով:

11. Առանձին տան (աների խմբի) անմիջական կառավարումը հանձնարկել տեղական խորհրդի բնակարանային վարչության կողմէց նշանակված տան կառավարչին:

Տան կառավարիչը առային մնտեսությունը վարում ե տնտեսաշվարչի հիմունքներով, համաձայն բնակարանային վարչության հաստատած տնտեսական-Փինանսական պլանների:

12. Սահմանել վոր տան կառավարիչ և նշանակվում՝

ա) 3000 քառակուսի մետրից ավելի բնակելի տարածություն կամ 500 հոգուց ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր տան համար.

բ) տների վորքը խմբի համար՝ բարկացած տեղիտորիայով իրար կից 3—5 տներից, 2000 քառակուսի մետրից մինչև 3000 քառակուսի մետր բնակելի ընդհանուր տարածությամբ.

գ) 1500-ից մինչև 2500 քառակուսի մետր բնակելի ընդհանուր տարածություն ունեցող մինչև 10—15 փոքր տների խմբի համար (նրբանցք, փողոցի մի մասը):

13. Տան կառավարիչը պատասխանատու յե՝

ա) տնային տնտեսությունը ճիշտ վարելու համար.

բ) տունը ժամանակին նորոգելու և նորոգման պատշաճ վորակի համար.

գ) տունը և նրա սանիտարա-տեխնիկական սարքերն ու բնակարանների ընդհանուր ոգտագործման տեղերը (ջեռուցում, լուսավորություն, խոհանոց, սանդուխք, արտաքնոց, գազ, վանսա, լիֆտ և այլն) կանոնավոր պահելու համար:

14. Սահմանել, վոր այն դեպքերում, յերբ բնակարանում կան ինքնուրույն կերպով բնակելի տարածություն վարձող միջանի անձեր, տան կառավարիչը, նրանց հետ համաձայնության գալով, առավելապես տնային տնտեսուչիներից նշանակում և բնակարանի համար պատասխանատու մեկին, վորի վրա պարտականություն և դրվում հսկել ընդհանուր ողտագործման տեղերին և հետեւ, վոր բոլոր բնակիչները պահպանեն բնակարանի ներքին կանոնները: Այդ պարտականությունները կատարելու համար բնակարանի պատասխանատուն ստանում և վոչ մեծ վարձատրություն, տան կառավարչի վորոշած չափով:

15. Տան հասանելիք բոլոր վճարումները պետք են մուծվեն տնային վարչության ընթացիկ հաշվին, վորի տնորինողն և հանդիսանում տան կառավարիչը:

16. Սահմանել, վոր խոշոր յեկամտարեր տների ստացած միջոցներից չի կարելի փոխարինաբար վերցնել դեֆիցիտային տները նորոգելու համար. այդ միջոցները պետք են գործադրվեն նույն այդ խոշոր տների ընթացիկ ու հիմնական նորոգման ու նրանց բարեկարգության բարձրացման վրա: Այս կանոնից բացառում թույլատրվում է բացառիկ դեպքերում, տեղական խորհուրդների գործադրի կոմիտեների վորոշումներով, 5 տարուց վոչ ուշ վերադարձնելու ժամկետով:

17. Թույլատրել տեղական խորհուրդներին իրենց պատկանող փոքր տները (60 քառակուսի մետրից վոչ ավելի բնակելի տարածությամբ) հանձնել առանձին քաղաքացիներին ոգտագործելու համար 5-ից մինչև 10 տարի ժամանակով, ԽՍՀ Միության ժողկոմիորհի կողմից հաստատելիք տիպային պայմանագրի հիման վրա կնքվող յերկարաժեղական վարձականագրերով:

18. Սահմանել, վոր քաղաքի կամ արդյունաբերական կետի բոլոր տներում առևտրական և գրասենյակային չենքերն այդ տների տեր չհանդիսացող պետական, հասարակական և կոռպերատիվ կազմակերպություններին ողտագործման տրվում են բացառապես տեղական խորհրդի բնակարանային վարչության կարգադրությամբ (որդերով):

Բոլոր տներում այդ չենքերի ողտագործումը ձեւակերպվում են տան կառավարչի հետ կնքվող գրավոր պայմանագրով՝ տեղական խորհրդի կոմունալ տնտեսության բաժնի բնակարանային վարչության սահմանված ժամկետով:

19. Տեղական խորհուրդների տներում վոչ-բնակելի չենքերից (խանութներ, գրասենյակներ, արհեստանոցներ, ճաշարաններ, պահանջուններ և այլն) ստացվող վարձավճարի 5 տոկոսը մացվում է տան ընդհանուր յեկամտի մեջ՝ տունը պահպանելու և կառավարելու ծախսերի համար և 95 տոկոսը հատկացվում է տեղական խորհուրդներին պատկանող տների հիմնական նորոգումը Փինանսավորելու համար, անկախ նրանից, թե վոր տնից են ստացվել այդ յեկամուտները:

Նույնպիսի կարգ սահմանել գերատեսչությունների, հիմնարկությունների և ձեռնարկությունների տների համար այն հաշվով, վոր վոչ-բնակելի չենքերի վարձավճարից ստացվող միջոցների 95 տոկոսը հատկացվում է այդ հիմնարկությունների, ձեռնարկությունների և գերատեսչությունների նորոգմանը:

20. Պարտավորեցնել իրենց տնորինության տակ բնակելի տներ ունեցող պետական հիմնարկություններին, ձեռնարկություններին և հասարակական կազմակերպություններին՝ այդ տների կառավարումը կազմակերպել 12, 13, 14, 15 և 16 հոգվածներում նախառեսված հիմունքներով, ըստվորում տան կառավարիչը նշանակվում է համապատասխան հիմնարկության, ձեռնաշկության կամ կազմակերպության դեկավարի կողմից:

Պարտավորեցնել ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների այն ժողկոմատներին, վորոնք իրենց տնորինության տակ ունեն 200 հազար քառակուսի մետրից

վոչ պակաս բնակարանային ֆոնդ, կազմակերպել բնակարանային բաժիններ, վորոնց վրա պարտականություն դնել կառավարել ժողկոմատի տնօրինության տակ դտնվող բնակարանային տնտեսությունը, կազմել բնակարանային շինարարության ու տների հիմնական նորոգման սլանը և վերահսկել դրա կատարմանը:

21. Յերկրամասային ու մարզկոմների կոմունալ տնտեսության բաժինների կազմում և ավտոնոմ հանրապետությունների կոմունալ տնտեսության ժողովրդական կոմիսարիատներում ստեղծել բնակարանային տնտեսության վարչություններ, իսկ միութենական հանրապետությունների կոմունալ տնտեսության ժողոմատներում՝ բնակարանային տնտեսության գլխավոր վարչություններ:

Հանձնարարել միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին՝ մեկ ամսվա ընթացքում հրատարակել բնակարանային վարչությունների կանոնադրությունները:

22. Բնակարանային վարչություններին կից տնտհաշվարկի հիման վրա կազմակերպել նորոգման կապալային դրասենյակներ և արհեստանոցներ, տրանսպորտային ու մատակարարման գրասենյակներ և ոժանդակ ձեռնարկություններ՝ տները նորոգելու համար տեղական շինանյութեր ու մանր սարքավորում արտադրելու և մշակելու նախարկում:

III. Բնակարանային ֆնанդն ոգտագործելու կարգի մասին

23. Սահմանել, վոր տեղական խորհուրդների տներում ազատ բնակելի շենքերն ոգտագործման համար քաղաքացիներին արգում են բացառապես տեղական խորհրդի կոմունալ տնտեսության բաժնի բնակարանային վարչության կարգադրությամբ (որդեգներով):

Պետական հիմնարկությունների, ձեռնարկությունների և համարակական կազմակերպությունների տներում պահանջման առաջնային նորմաների հանդեպ ավելացնելու հրանց վարձակալած տներում ազատ բնակելի շենքերն ոգտագործելու համար արվում են նրանց աշխատողներին՝ այդ հիմնարկությունների, ձեռնարկությունների ու

կազմակերպությունների վարչության կարգադրությամբ:

24. Բոլոր աներում բնակելի շենքերի ոգտագործման իրավունքը ձեռակերպվում է դրավոր պայմանագրով, վորը կնքում է վարձողը տան կառավարչի կամ տան վարձակալի հետ, ընդունելում պայմանագրում ճշտիվ վորոշվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները և դրանց իսկաման հետևանքները:

Պայմանագրերը կնքվում են վորոշ ժամկետով, բայց վոչ ավելի քան 5 տարով:

25. Բնակարանային-շինարարական կոոպերատիվների այն փայտառերը, վորոնք բնակվում են նախկին կոոպերատիվ տներում, պահպանում են իրենց գրաված բնակելի տարածությունը, սակայն վարձակալական պայմանագրի հիմունքներով:

259 26. Վերապահել՝

ա) այն քաղաքացիներին, վորոնք բնակվում են տեղական խորհուրդների, պետական հիմնարկությունների, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների տներում, այդ թվում նաև նախկին կոոպերատիվ տներում, ինչպես և առանձին քաղաքացիներին պատկանող տներում, իրենց գրաված բնակելի շենքի համար պայմանագրի կնքելու նախապատվության իրավունք.

բ) այն քաղաքացիներին, վորոնք կատարում են պայմանագրով ստանձնած բոլոր պարտականությունները և բարեխղճորեն են վերաբերում իրենց ոգտագործման տըրված բնակարանի պահպանմանը, պայմանագրերը վերակընքելու նախապատվության իրավունք՝ նրա գործողության ժամկետը լրանալուց հետո:

27. Արգելել վարձակալական պայմանագրի գործողության ընթացքում վարձողի մոտ սահմանված բնակարանային նորմաների հանդեպ ավելորդ բնակելի տարածություն դոյցնա, առանձնացած սենյակի ձեռվ, տեղական խորհուրդը կամ, համապատասխանորեն պետական հիմնարկության, ձեռնարկության ու

Յեթե պայմանագրի գործողության ընթացքում վարձողի մոտ սահմանված բնակարանային նորմաների հանդեպ ավելորդ բնակելի տարածություն դոյցնա, առանձնացած սենյակի ձեռվ, տեղական խորհուրդը կամ, համապատասխանորեն պետական հիմնարկության, ձեռնարկության ու

Հասարակական կազմակերպության վարչությունը կարող է սպառագործել այդ ավելորդ տարածությունն իր հայեցողությամբ:

Սահմանել, վոր տեղական խորհուրդները վերոհիշյալ ավելորդ բնակելի տարածությունն ողտագործելու իրավունք են ստանում միայն այն դեպքում, յեթե վարձողը, բնակարանային վարչության կողմից համապատասխան նախագուշացում արվելուց հետո յերեք ամսվա ընթացքում, իր մոտ գոյացած ավելորդ բնակելի տարածությունը չի տրամադրել վորեւ մեկին՝ իր հայեցողությամբ:

28. Բնակելի շենքեր վարձողներին իրավունք տալ իրենց գրաված տարածությունը փոխանակել այլ վարձողների հետ, փոխադարձաբար իրար հանձնելով վարձակալության պայմանագրերից բախող իրավունքներն ու պարտականությունները, միմիայն տեղական խորհրդի բնակարանային վարչության կամ, համապատասխանորեն, տանտեր հանդիսացնել կամ վարձակալող տեղական հիմնարկության, ձեռնարկության ու հասարակական կազմակերպության թույլտությամբ:

29. Բնակելի շենքեր վարձողները և նրանց ընտանիքի անդամները պարտավոր են խստիվ պահպանել բնակարանի համար սահմանված ներքին կարգուկանոնները, միանգամայն կանոնավոր պահել շենքը, խնամքով վարվել ընդհանուր ողտագործման բոլոր սարքերի հետ և մաքրություն պահպանել շենքերում ու ընդհանուր ողտագործման տեղերում:

Այն դեպքերում, յեթե վարձողը կամ նրա ընտանիքի անդամները քանդում կամ փչացնում են բնակելի շենքը իւստ ընդհանուր ողտագործման տեղերը, անհրաժեշտ նորոգումներն անհապաղ կատարում են տնային վարչությունը, դնելով բոլոր ծախսերը մեղավոր վարձողի վրա:

30. Սահմանել¹, վոր բնակելի տարածություն տալու դրամականացում:

Սահմանել, վոր կազմակերպությունների, հիմնարկների և ձեռնարկներին հատկացվող լուծարքի յենթարկված բնակչիներուն աղբող անձերը, համաձայն ԽՍՀՄ կենտրոնական գողկումների 1937 թ. հոկտեմբերի 17-ի վորոշման 31 հոդվածի «ա», «բ» և «դ» կետերի, յենթակա չեն վտարման, բացառությամբ այն անձերից, վորոնք

վերաբերյալ պայմանագիրը կարելի յե խզել դատական կարգով, առանց այլ բնակելի տարածություն տալու, միմիայն հետեւյալ դեպքերում.

ա) յեթե վարձողը կամ նրա ընտանիքի անդամները սիստեմատիկաբար քանդում կամ փչացնում են բնակելի շենքը և ընդհանուր ողտագործման տեղերը.

բ) յեթե վարձողը կամ նրա ընտանիքի անդամներն իրենց վարչով մյուս բնակելիների համար անհնարին են դարձնում համակեցությունն այլ բնակարանում կամ սենյակում.

դ) յեթե վարձողը բնակարանավարձը չի մուծել վճարման ժամկետը լրանալու որից յերեք ամսվա ընթացքում:

31. Սահմանել, վոր վարձողը կարող է վարչական կարգով հեռացվել, առանց բնակելի տարածություն ստանալու, հետեւյալ դեպքերում.

ա) յեթե վարձողը, վորին նրա աշխատանքի կապակցությամբ բնակելի շենք է տրվել պետական ձեռնարկության տան մեջ կամ այդ ամսվա ընդհանությունը կազմակեցությամբ կամ աշխատանքի վրա, վորոնք իսկական ծառայության են կանչըլել Բանվորագյուղական կարմիր Բանակը.

Ծանօթություն. Այդ չի տարածվում այն աշխատանքը վրա, վորոնք արձակված են հաշմանդամության կամ խեղանդամության կամ կազմակեցությամբ և այն աշխատանքը բնակչիների վրա, վորոնք իսկական ծառայության են կանչըլել Բանվորագյուղական կարմիր Բանակը.

բ) յեթե վարձողը, վորին նրա աշխատանքի կապակցությամբ բնակելի շենք է տրվել պետական հիմնարկության կամ հասարակական կազմակերպության տան մեջ, կամ նրանց վարձակալած տան մեջ, արձակված է սեփական ցանկությամբ, կամ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար, կամ գործած հանցանքի համար,

դ) համաձայն ԽՍՀ Միության կենտրոնական ժողովի 1936 թ. հունիսի 21-ի «Մոռկլիա, Լենինգրադ

աշխատանքային պայմանագրի համաձայն նույն ձեռնարկից կամ հիմնարկից ստացել են բնակելի տարածություն, վորոնց իրավասության են հանձնվել տունը: ԽՍՀՄ ժողովությունի 1937 թ. նոյեմբերի 25-ի վորոշման 8 հոդվածը (ԽՍՀՄ Ո. Ֆուլ. 1937 թ. № 74, հոդ. 360):

ու կեկ քաղաքներում քանդվելիք և հիմնական վերակառուցման յենթարկվելիք բնակելի տներից հեռացնելու կարգի մասին» վորոշման.

դ) ԽՍՀ Միության Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. ոգոստոսի 17-ի՝ «Պաշտպանության ժողկոմատի որդաններին պատկանող տներից Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի շաբերում չգտնվող անձերին արտարնակեցնելու մասին» և 1931 թ. Գետարվարի 13-ի՝ «Տրանսպորտի որդաններին պատկանող շենքերից տրանսպորտի կողմանակի անձերին արտարնակեցնելու և տրանսպորտի աշխատողներին վերաբնակեցնելու մասին» վորոշումներին համապատասխան, ինչպես նաև ԽՍՀՄ ժողկոմխորհի 1939 թվի սեպտեմբերի 22-ի՝ «ԽՍՀՄ ՆԳԺԿ որդաններին պատկանող բնակելի տներից ԽՍՀՄ ՆԳԺԿ որդաններում և զորքերում ծառայության մեջ չգտնվող անձերին արտարնակեցնելու մասին» վորոշման համապատասխան:

[ԽՍՀՄ ժողկոմխորհի 1939 թ. սեպտեմբերի 22-ի վորոշում (ԽՍՀՄ Որ. Ժող. 1939 թ. № 53, հոդ. 462):

«Ե) յեթե վարձողին տրված է յեղել բնակելի շենք, զոր պահպանված է այնպիսի անձի համար, զորը դորձուղված է արտասահման, ինչպես նաև Կոլա թերակղզի, Հեռավոր Արևելք և Արկտիկա»:

[ԽՍՀՄ ժողկոմխորհի 1939 թ. մարտի 10-ի վորոշումը (ԽՍՀՄ Որ. Ժող. 1939 թ. № 18, հոդ. 117):

32. Մյուս բոլոր զետքերում բնակիչներին՝ նրանց զբաղեցրած շենքերից հեռացնելը կարող է թուլաւարվել միմիայն դատական կարգով և միայն հեռացնող որդանների վրա պարտականություն գնելով, զոր հեռացվողին տրվի բնակելության համար պիտանի մի այլ շենք:

33. Վերացնել բնակելի շենքերի պահպանումն իրենց ընտանիքներով մեկնած անձերի համար, բացառությամբ այն դեպքերի, յերբ նրանք աշխատանքի յեն մեկնում արտասահման, ինչպես և Կոլա թերակղզի, Հեռավոր Արևելք ու Արկտիկա: Արկտիկա, Հեռավոր Արևելք և Կոլա թերակղզի գործուղված անձերի համար շենքը պահպանվում է մինչև 2 տարի ժամանակով, իսկ արտասահման գործուղ-

ված անձերի համար, — նրանց արտասահմանում մհալու ամբողջ ժամանակված համար:

[ԽՍՀՄ ժողկոմխորհի 1939 թ. մարտի 10-ի վորոշումը (ԽՍՀՄ Որ. Ժող. 1939 թ. № 18, հոդ. 117):

34. Իրենց ընտանիքով ժամանակավորապես մեկնած վարձողների համար բնակելի շենքերը, վորպես կանոն, պահպանել միայն 6 ամսվա ընթացքում: Այլ ժամկետը կարող էն յերկարացնել յուրաքանչյուր առանձին դեպքում համապատասխանորեն տեղական խորհրդի կոմունալ տնտեսության բաժնի բնակարանային վարչությունը կամ պետական հիմնարկության, ձեռնարկության և հասարակական կազմակերպության ղեկավարները:

35. Վերացնել տուն կառուցողներին տրվող արտոնությունները և նախապատվությունները, այն ե՛ նորմաներով շսահմանափակված բնակարանավարձ վերցնելու իրավունքը, բնակարանը վարձով տալիս՝ բացի պարբերական վճարումներից՝ նաև միանվագ (մուտքի) վարձ վերցնելու իրավունքը. առանց վորեե նորմայով սահմանափակվող բնակելի տարածություն վարձով տալու իրավունքը և բնակելի շենքը վարձով տալու պայմանագիրը լրանալուց հետո բնակելիներին հեռացնելու իրավունքը (ՈՒԽՄՍՀ Քաղաքացիական Որենսգրքի 156-րդ և 166-րդ հոդվածները և մյուս միութենական հանրապետությունների քաղաքացիական որենսգրքերի համապատասխան հոդվածներն ու ԽՍՀՄ ժողկոմխորհի 1928 թվականի ապրիլի 17-ի վորոշումը՝ «Բնակարանների շինարարությունն ի հաշիվ մասնավոր կապիտալի խրախուսելու միջոցների մասին»):

36. Թուլաւարել այն տներում, վորոնք պատկանում են առանձին քաղաքացիներին կառուցման իրավունքով և անձնական սեփականության իրավունքով, կամ նրանց կողմից տեղական խորհուրդներից վարձակալված տներում, վերադիրներ դանձել որենքով սահմանաված բնակվարձի դրույքների 20 տոկոսից վոչ ավելի:

IV

37. Հանձնարարել ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդին և միութենական հանրապետություն-

ների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին՝ գործող որենսդրությունը համապատասխանեցնել այս վորոշմանը:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ, ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՅԵՎ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՄ ՉԱՐԱՇԱՀՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միարքյան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, Համամիարքենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական կոմիտեյի և Արհեստական միությունների Համամիարքենական Կենտրոնական Խորհրդի վորոշումը: Որ. Ժող. 1939 թ. № 1, հոդ. 1:

12. ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1937 թվի հոկտեմբերի 17-ի՝ «Քաղաքներում բնակարանային Փոնդի պահպանման և բնակարանային տնտեսության բարելավման մասին» վորոշման (ԽՍՀՄ Որենքների Ժողովածու, 1937 թ. № 69, հոդ. 314) 31-րդ հոդվածի հիման վրա սահմանվում է, վոր այն բանվորներն ու ծառայողները, վորոնց տվյալ ձեռնարկության մեջ նրանց աշխատանքի կապակցությամբ բնակելի շենք և տրամադրված պետական ձեռնարկության, հիմնարկի կամ հասարակական կազմակերպության տան մեջ (կամ այդ ձեռնարկությունների ու հիմնարկների կողմից կապալով վերցված տան մեջ) այն դեպքում, յերբ նրանք այս վորոշումը հրապարակելուց հետո ձեռնարկությունից կամ հիմնարկից հեռանում են սեփական ցանկությամբ կամ հիմնարկից հեռանում են աշխատանքային կարգապահությունը խախտելու համար, ինչպես նաև հանցագործություն կատարելու համար—յենթակա յեն տամորյա ժամկետում պարտադիր արտաքնակեցման վարչական կարգով, առանց բնակելի տարածություն տրամադրելու:

3. ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՄԵՐՁ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՅԵՎ
ԲՆԱԿԱՐՁ ԴԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՃԽՍՀ Ժողովովխորհի 1938 թ. հուլիսի 5-ի վորոշումը (Արձանագրություն № 23, կետ 19):

Հայկական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը վորոշում ե՝

1) Սահմանել, վոր Յերևանի քաղաքամերձ ավաններում (Սովետացին, Խարբերդ, Արաբկիր, Սեբաստիա, Մալաթիա, Տիգրանակերտ և Քդի) բնակարանային Փոնդի պահպանման, բնակարանային տնտեսության կառավարման և բնակվածին վերաբերող հարցերը կարգավորվում են ընդհանուր հիմունքներով գործող որենսդրության համաձայն (ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1937 թ. հոկտեմբերի 17-ի վորոշումը՝ «Քաղաքների բնակարանային Փոնդը պահպաններու և բնակարանային տնտեսությունը բարելավվելու մասին», «ՃԽՍՀ ԿԳԿ և ԺԿԽ 1928 թ. մայիսի 10-ի վորոշումը՝ «Քաղաքներում, ըրջանային կենտրոններում և բանվորական ավաններում սահմանվող բնակարանային վարձի մասին» և այլն):

2) Առաջարկել Յերևանի Քաղկորհրդին հրապարակել հրահանդ այս վորոշման կիրառման մասին:

4. «ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ» ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՄԱԳԱՅՆ ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄՄՈՒՀԻ 1937 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ի՝ «ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՄԵՐՁ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎՈՐՈՇՄԱՆ

ՃԽՍՀ ԿԳԿ և ԺԿԽ 1938 թ. ապրիլի 27-ի վորոշումը (ՃԽՍՀ Որ. Ժող. № 4, հոդ. 14)

Համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1937 թվի հոկտեմբերի 17-ի՝ «Բնակարանային Փոնդը պահպա-

նելու և քաղաքներում բնակարանային տնտեսության բարելավման մասին» վորոշման (ԽՍՀՄ Որ. և Կարգ. Ժող. 1937 թվի № 69, հոդ. 314), Հայկական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վկրթական են:

1. Ուժը կորցրած համարել—

1) Հայկական ԽՍՀ Կենտրոնակոմի և Ժողկոմխորհի 1926 թ. նոյեմբերի 24-ի՝ «Ամրացված աների մասին» վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1927 թ., № 1, հոդ. 2):

2) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1928 թ. մարտի 23-ի՝ «Հայկական ԽՍՀ քաղաքներում բանվորական բնակարանային շինարարության կարիքների համար բնակարանային նպատակային հարկ սահմանելու մասին» վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1928 թ., № 5, հոդ. 54):

3) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1928 թ. հուլիսի 11-ի՝ «Բնակարանների հետ անխնա վարդող անձերի նկատմամբ պատասխանատվությունն ուժեղացնելու մասին» վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1928 թ., № 11, հոդ. 108):

4) Ներքործքովածի հրահանդը՝ «Հայկական ԽՍՀ Կենտրոնակոմի և Ժողկոմխորհի 1928 թ. հուլիսի 26-ի բնակարանային շինարարությունը խրախուսելու վերաբերյալ վորոշումը կիրառելու մասին», հաստատված Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի կողմից 1928 թ. նոյեմբերի 9-ին (Որ. և Կարգ. Ժող., 1928 թ., բաժին 2-րդ, № 6, հոդ. 76):

5) Կենտրոնակոմի և Ժողկոմխորհի 1928 թ. հուլիսի 26-ի՝ «Բնակարանային շինարարության խրախուսման ձեռնարկումների մասին» վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1928 թիվ, № 11, հոդ. 120):

6) Հայկական ԽՍՀ Տնտեսական Խորհրդակցության 1929 թ. հունվարի 18-ի վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1929 թ., № 2, հոդ. 24):

7) Հայկական ԽՍՀ Ներքործքովածի հրահանդը, հաստատված Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի կողմից 1929 թվի փետրվարի 2-ին (Որ. և Կարգ. Ժող., 1929 թ., բաժին 2-րդ, № 1, հոդ. 3):

8) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1929 թ. մարտի

22-ի՝ «Բնակարանային շինարարության ձեռնարկումների մասին» վորոշման 8, 9, 11, 12, 13 և 14 հոդվածները (Որ. և Կարգ. Ժող., 1929 թ., № 4, հոդ. 49):

9) Հայկական ԽՍՀ Ներքործքովածի և Արդյուղիումատի հրահանդը, հաստատված Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի կողմից 1929 թ. մայիսի 27-ին (Որ. և Կարգ. Ժող., 1929 թ., բաժ. 2-րդ, № 3, հոդ. 32):

10) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1930 թ. ապրիլի 2-ի՝ «Բնակչինկոռպ Ընկերությունների կողմից կառուցված շենքերի արժեքը շիջուցանելու մասին» վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1930 թ., № 5, հոդ. 87):

11) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1930 թ. ապրիլի 7-ի՝ «Բնակ. վարձակարող կոռպերատիվների ամրացման ձեռնարկումների մասին» վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1930 թ., № 5, հոդ. 90, 1930 թ. № 11, հոդ. 171):

12) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1932 թ. փետրվարի 13-ի՝ «Տնային տրեստներն ու քաղաքայնացված բնակ. Փոնդին պատկանող բնակարանները վարձակալող կոռպերատիվ ընկերությունները տնտեսական հաշվարկի անցկացնելու մասին» վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1932 թ., № 1, հոդ. 30):

13) Հայկական ԽՍՀ Կենտրոնակոմի և Ժողկոմխորհի 1933 թ. հուլիսի 2-ի՝ «Գիտական աշխատավորների բնակարանային պայմանները բարելավելու մասին» վորոշման 2, 4, 5, 6 և 8 հոդվածները (Որ. և Կարգ. Ժող., 1933 թ., № 2, հոդ. 53, 1933 թ. № 6, հոդ. 103):

14) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1935 թ. նոյեմբերի 20-ի՝ «Զբաղեցրած բնակելի շենքերը ինքնազլուխ ներս մտնողների դեմ՝ պայքարելու մասին» վորոշման 4-րդ հոդվածը (Որ. և Կարգ. Ժող., 1935 թ., № 11, հոդ. 109):

15) Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1935 թ. դեկտեմբերի 25-ի՝ «Հայկական ԽՍՀ բնակարանային տնտեսության բարելավման ձեռնարկումների մասին» վորոշման «բ» և «ե» հոդվածները (Որ. և Կարգ. Ժող., 1935 թ., № 12, հոդ. 118):

16) Հայկական ԽՍՀ Կենտրոնակոմի և Ժողկոմխորհի

1935 թ. գեկտեմբերի 14-ի՝ «Քաղաքայնացված և աղքայնացված տները բաշխելու և ողագործելու կարգի մասին» վորոշումը (Որ. և Կարգ. Ժող., 1935 թ., № 12, հոդ. 112):

2. Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմի խորհրդի 1928 թ. մարտի 10-ի՝ «Քաղաքներում, շրջանային կենտրոններում և բանկորական ավաններում բնակարանային վարձ սահմանելու մասին» վորոշման (Որ. և Կարգ. Ժող. 1928 թ., № 4, հոդ. 31) 11-րդ հոդվածից համել «Ճներ՝ շինված կառուցման իրավունքի հիման վրա (166 հոդ. ժանթությունը), կառուցված, վերակառուցված և ավարտված տները» բառերը:

3. Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմի խորհրդի 1928 թ. մարտի 10-ի՝ «Քաղաքներում, շրջանային կենտրոններում և բանկորական ավաններում բնակարանային վարձը սահմանելու մասին» վորոշման 11-րդ հոդվածի ծանոթությունը (Որ. և Կարգ. Ժող. 1928 թ., № 4, հոդ. 31) փոխել և խմբագրել այսպես. «Կառուցման իրավունքի կամ անձնական սեփականության իրավունքի հիման վրա մասնավոր քաղաքացիներին պատկանող տների, կամ նրանց կողմից տեղական խորհուրդներից վարձակալած տների համար թույլատրվում ե սույն վորոշմամբ սահմանված բնակարանային վարձի դրույքներից հավելյալ գանձել 20%-ից վոչ ավելի չափերով»:

4. Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմի խորհրդի 1930 թ. մայիսի 31-ի՝ «Հայպետքաղվարչության և զորամասերի հրամմակազմի աշխատողներին բնակարաններով ապահովելու մասին» վորոշման 1-ին հոդվածից համել «Բնակարանային վարձակալող կոռպերատիվ ընկերություններին պատկանող» բառերը: Նույն այդ վորոշումից համել 4-րդ հոդվածը: (Որ. և Կարգ. Ժող., 1930 թ., № 6, հոդ. 141):

5. ԽՍՀՄ Ժողկոմի 1938 թ. վետրվարի 13-ի № 164՝ «Բնակարանային կոռպերացիայի կանոնադրության վերացման մասին» վորոշման կապակցությամբ (հոդ. 1-ին, բաժ. 1) առաջարկել Հայկական ԽՍՀ Կոմունալ Տնտեսության Ժողկոմատին կազմելու բնակարանային շինարարու-

թյան կոռպերացիայի որինակելի կանոնադրության նախագիծ և 10 որվա ընթացքում ներկայացնել Հայկական ԽՍՀ Ժողկոմի խորհրդին ի հաստատություն:

5. ՀԽՍՀ «Բնակարանային ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ» ՓՈՓՈ-ԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԽՍՀՄ ԿԳԿ ՅԵՎ ԺՈՂԿՈՄ-ԽՈՐՀԻ 1937 թ. ՀՈԿՑԵՄԲԵՐԻ 17-Ի «ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԵՍԵԼՈՒ ՅԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՎՈՐՈՇՄԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎՈՐՈՇՄԱՆ

ՀԽՍՀ Ժողկոմի խորհրդի 1940 թ. մայիսի 11-ի վորոշումը: Համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1937 թ. հոկտեմբերի 17-ի՝ «Բնակարանային ֆոնդը պահպանելու և բաղաքների բնակարանային տնտեսությունը բարելավելու մասին» վորոշման (Որ. Ժող. № 69, հոդ. 314):

Հայկական ԽՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը վորոշում է

1. Ուժը կորցրած համարել

ա) ՀԽՍՀ Ժողկոմի խորհրդին և Ժողկոմի խորհրդի 1931 թ. ոգոստոսի 22-ի «Կոմունալ ֆոնդի նորմաների բարձրացման մասին» վորոշումը.

բ) ՀԽՍՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ և ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ 1928 թ. ապրիլի 9-ի հրահանգը:

6. ԱԶԳԱՅԱՆԱՑՎԱԾ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՅԱՆԱՑՎԱԾ ՇԵՆՔԵՐԸ ԲԱՇԽԵՆԵԼՈՒ, ՈԳՏԱԳՈՐԾԵՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ԱՅԻ ՇԵՆՔԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԵՆԵԼՈՒ, ՊԱՀ-ՊԱՆԵԼՈՒ, ՈԳՏԱԳՈՐԾԵՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՐՃԵՔԸ ՇԻՃԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ Ժողկոմի խորհրդի 1936 թվի հուլիսի 27-ի (արձանագրություն № 11, կետ 4) վորոշումը

Վորոշման նախագիծը հաստատել համբարությամբ.

1. Ազգայնացված համարվում են՝
ա) այն շենքերը, վորոնք պատկանում եյին պետությանը մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը և շարունակվում են ողտագործվել համապատասխան գերատեսչությունների կամ նրանց տեղական որդանների կողմից.

բ) այն շենքերը, վորոնք կենտղործկոմի և Ժողկոմխորհի հատուկ վորոշումներով ճանաչված են ազգայնացված և ամրացված են կենտրոնական գերատեսչություններին, ինչպես նաև հանրապետական նշանակություն ունեցող և անմիջական կենտրոնական գերատեսչություններին յենթակա հիմնարկություններին և ձեռնարկություններին, յեթե այս վորոշումն հրապարակելու պահին այդ շենքերն ամբողջությամբ կամ մասնակի շարունակում են ողտագործել այդ գերատեսչությունները.

գ) այն շենքերը, վորոնք հանդիսանում են ազգայնացված գործարանների կամ արդյունաբերական այլ ձեռնարկությունների անհրաժեշտ պատկանելությունը, անխպելիորեն կապված են արտադրության հետ և մտնում են համապատասխան ձեռնարկությունների կանոնագիր դրամագլխիքի մեջ, անկախ նրանից, թե այդ շենքերը գտնվում են տեղյալ ձեռնարկության տերիտորիայի վրա թե վրչ.

դ) այն շենքերը, վորոնք հատկապես կառուցված են զինվորական գերատեսչության կարիքների համար։

2. Պետության սեփականություն կազմող մնացած բոլոր շենքերը համարվում են քաղաքայնացված։

3. Ազգայնացված շենքերը գտնվում են համապատասխան ժողովրդական կոմիսարիատի կամ կենտրոնական գերատեսչության տնօրինության տակ։

4. Քաղաքայնացված շենքերը գտնվում են՝ համապատասխան քաղինորդությների և գործադիր կոմիտեների տնօրինության տակ։

5. Քաղաքային խորհուրդների և ըրջանային գործկոմների տեղական տնտեսություններում պահվում են ազգայնացված և քաղաքայնացված շենքերի հաշվառման մատյաններ առանձին-առանձին։

6. Հետապայում ազգայնացված շենքերը քաղաքայնաց-

ված գարձնելը և հակառակը կատարվում են կենտղործկոմի և ժողովրդի կոմիտեների վորոշումներով քաղինորդությների և ըրջործկոմների ու շահագրգուված տեսչությունների միջնորդությունների հիման վրա։

7. Քաղինորդությներին և ըրջործկոմներին իրավունք է վերապահվում հսկելու ազգայնացված շենքերի պահպանման և ոգտագործման վրա։

8. Գերատեսչությունները, քաղինորդությներն ու ըրջործկոմներն անմիջականորեն կամ իրենց տեղական մարմինների միջոցով իրավասու յին տնօրինել ազգայնացված կամ քաղաքայնացված շենքերը Քաղ. Որենսդրքի 22-րդ հոդվածի և այդ առթիվ հրապարակված որենսդրությամբ նախատեսված կարգով։

9. Ազգայնացված ու քաղաքայնացված շենքերն ամրացվում են պետական ձեռնարկ-հիմնարկություններին ՀիՄՀ կենտղործկոմի և Ժողկոմի 1926 թ. նոյեմբերի 24-ի «Ամրացված տների մասին» և 1935 թ. դեկտեմբերի 14-ի «Ազգայնացված և քաղաքայնացված շենքերի ամրացման և նրանց ոգտագործման կարգի մասին» վորոշումներով նախատեսված կարգով։

10. Պետական այն հիմնարկություններն ու ձեռնարկությունները, վորոնց կենտղործկոմի և Ժողկոմի համապատասխան վորոշումներով ազգայնացված կամ քաղաքայնացված տներ են ամրացված, իրենց հաշվով պարտակոր են՝

ա) պահելու այդ տները բարեկարգ վիճակում։

բ) կատարելու այդ տների հիմնական և ընթացիկ վերանորոգումը և նրանց շահագործման հետ կապված ամեն աեսակի ծախքերը։

գ) ապահովագրելու հրդեհից։

դ) նույն տների աղտահորերը միացնելու կոյուղու ընդհանուր ցանցին, կատարելու ջրմուղի վերանորոգում, իսկ ջրմուղ ըլինելու գեղքում կառուցելու ջրմուղի գիծ, ընդհանրապես կատարելու նույն տների բոլոր կոմունալ ծախքերը։

11. Ամրացված տները հիմնարկությունների ու ձեռ-

նարկությունների կողմից պետք է ոգտագործվեն այն նպատակներով, վորոնց համար այդ տներն ամրացված են տվյալ հիմնարկին կամ ձեռնարկությանը:

Քաղխորհություններին ու շրջգործկոմներին իրավունք եւ վերապահվում սառուղելու այդ հանդամանքը և ամրացված տունն այլ կարիքների ու նպատակների համար ոգտագործելու դեպքում միջնորդություն հարուցել կենարործկոմի և ժողկոմիորհի առաջ՝ ազատելու այդ տներն ամրացումից:

12. Այս վորոշման 7-րդ հոդվածի հիման վրա քաղխորհություններին ու շրջգործկոմները պարտավոր են հսկելու, վորպեսզի հիմնարկներն ու ձեռնարկություններն իրենց անունով ամրացված տները պահեն բարեկարգ վիճակում, ստուգելով յուրաքանչյուր տարվա շինարարական սեղոնում պահանջվելիք վերանորոգման չափն ու տեսակը, իսկ սեղոնի վերջում այդ աշխատանքների կատարումը:

13. Այս դեպքերում, յերբ պետական հիմնարկներն ու ձեռնարկություններն անխնա կիրարերվեն դեպի իրենց անունով ամրացված տները կամ չեն կատարի պահանջվելիք հիմնարկան և ընթացիկ վերանորոգումները, քաղխորհությունները և շրջգործկոմները պետք եւ միջոցներ ձեռք առնեն սահմանված կարգով ազատելու այդ տներն ամրացումից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան պաշտոնյաններին նաև քրեական պատասխանատվության յենթարկելու:

14. Քաղաքայնացված այն տները, վորոնք կենարործկոմի և ժողկոմիորհի հատուկ վորոշումներով ամրացված են պետական հիմնարկների ու ձեռնարկությունների անունով, շարունակվում են համարվել քաղաքայնացված տներ և մնում են քաղաքորհությունների կամ գործկոմների քաղաքայնացված ֆոնդի մեջ:

15. Պետական հիմնարկներին և ձեռնարկություններին ամրացված տների նկատմամբ կիրառվում են բնակարանային վարձի և բնակելի տարածության ողտագործման այն նորմաները, վորոնք սահմանված են համապատասխան գործող որենքներով:

16. Ազգայնացված ու քաղաքայնացված տները պետա-

կան հիմնարկ-ձեռնարկություններին ամրացվում են հատուկ արձանագրությամբ: Քաղաքայնացված տների ամրացման կարգի անհրաժեշտությունը վերանալուց հետո հիմնարկը կամ ձեռնարկությունը պարտավոր եւ իր անունով ամրացված տունը վերադարձնել քաղխորհորդին կամ շրջգործկոմին հանձնողական արձանագրությամբ, մանրամասնորին մատնանշելով տվյալ տան դրությունը:

17. Պետական այն հիմնարկություններն ու ձեռնարկությունները, վորոնք անունով քաղաքայնացված տներ են ամրացված, պարտավոր են այդ տներից ողտվելու համար համապատասխան քաղխորհությունների կամ շրջգործկոմների տեղական տնտեսություններին վճարել վարձ՝ շիջեցման տարեկան վճարումների չափով: Քարե շինությունների շիջեցման վճարը սահմանել նրա շինարարության արժեքի 1,5 տոկոսը, փայտե՝ 2,5 և խառը 2 տոկոսը:

Հիմք Ժողկոմիորհի 1938 թ. 12/10 «Կոմունալ ձեռնարկությունների գույքի ամորտիվացիայի հիմնական կանոնները հաստատելու մասին» վորոշում (Որ. և Կարդ. Ժող., 1928 թ., № 14, հոդ. 158):

Ծանոթություն 1. Պետական հիմնարկներն ու ձեռնարկություններն այս հոդվածում հիշված վճարումները պարտավոր են կատարել 1937 թ. հունվարի 1-ից:

Ծանոթություն 2. Դպրոցական, հիվանդանոցիային, բարձրագույն-ուսումնական, ուսանողական հանրակացարանների ու աշխատանքի պալատի շենքերն ազատվում են շիջեցման վճարից:

18. Ամրացված քաղաքայնացված շենքերի դնահատումը կատարվում է քաղաքորհությունների և շրջգործկոմների կողմից նշանակված հանձնաժողովի միջոցով, բաղկացած քաղիտորհորդի կամ շրջգործկոմի շահագրգումած հիմնարկ-ձեռնարկության մեկական ներկայացուցիչներից, քաղաքային կամ շրջանային ճարտարապետից:

Ծանոթություն 1. Հանձնաժողովը տունը գնահատելիս պետք է նկատի ունենա կառուցման իրական արժեքն ըստ տեղական պայմանների, դուրս գալով մաշվածությունը:

Ծանոթություն 2. Հանձնաժողովի վորոշումների
դեմ կարելի յէ գանգատ տալ համապատասխան քա-
ղաքային խորհրդին կամ գործադիր կոմիտեյին գնա-
հասությունը կատարելուց վոչ ուշ քան մեկ տաս-
նորյակի ընթացքում:

19. Վերացնել ՀԽՍՀ ժողկոմիսորճի 1929 թ. հուլիսի
3-ի վորոշմամբ հասասալած ներքործքողկոմատի «Պե-
տական հիմնարկությունների և ձեռնարկությունների անու-
նով ամրացված ազդայնացված կամ քաղաքայնացված տնե-
րի պահպանման, ոգտագործման և արժեքի շիջեցման կար-
գի մասին» հրահանգը—1933 թ. հոկտեմբերի 2-ի փոփո-
խություններով:

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՑՎԱՄ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉ

7. ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ, ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ-
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ ՍՍՀՄԱՆՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ և ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐԻՐԴԻ 1928 թ. մարտի 10-ի վորոշումը

Գոյություն ունեցող բնակելի ֆոնդը պահպանելու և
բնակարանային վարձը բնակարանային տնտեսության ծախ-
քերը ծածկելու համար անհրաժեշտ չափերին ժուղեցնելու
նպատակով, համաձայն բնակարանային վարձի վերաբերյալ
ՀԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ և ԺՈՂՈՎՐԴԱ-
ԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐԻՐԴԻ 1926 թ. հունիսի 4-ի վորոշ-
ման (ԽԽՍՀ Որ. և Կարգ. Ժող. 1926 թ., № 44 հոդ. 312)
և ի վերացումն 1924 թ. հուլիսի 2-ի «Բնակարանային դեկ-
րետի» (ՀԽՍՀ Որ. և Կարգ. Ժող. 1924 թ., № 11, հոդ. 39)
և 1926 թ. հունիսի 12-ի «1924 թ. հուլիսի 26-ի բնակա-
րանային դեկրետի վոփոխման ու լրացման մասին» վորոշ-
ման (ՀԽՍՀ Որ. և Կարգ. Ժող., 1926 թ., № 2, հոդ. 8)
ՀԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ և ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴը վորոշում են՝

1. 1928 թ. ապրիլի մեկից քաղաքներում, ըրջանային
կենտրոններում և բանվորական ավաններում բարեկարդ
բնակարանի մի քառակուսի մետր (1,98 քառ. արշ.) պի-
տանի բնակելի տարածության համար սահմանվում են բնա-
կարանային վարձի ամսական հետևյալ կոպարները.

Բանվորները և ծառայողները,
փորոնք ստանում են ամսական

Վճարում են Յեղմանում,
Լինինականում և Քաղաքա-
քատիլ վայրերում:

Վճարում են Հըմանային
լինաներում:

ա)	Մէջէկ 20	ոռուլի ներառյալ	5,5 կոպ.	5,5 կոպ.	5,5 կոպ.
բ)	21 ոռուլուց մէջէկ 30 ո.	8 »	7 »	6 »	»
շ)	31 »	40 »	12 »	9 »	7 »
դ)	41 »	50 »	15 »	12 »	9 »
ե)	51 »	60 »	18 »	14 »	11 »
զ)	61 »	70 »	21 »	17 »	13 »
ը)	71 »	80 »	23 »	19 »	15 »
թ)	81 »	90 »	27 »	22 »	17 »
ժ)	91 »	100 »	30 »	25 »	19 »
ի)	101 »	110 »	33 »	27 »	21 »
լ)	111 »	125 »	36 »	30 »	23 »
իւ)	126 »	145 »	38 »	32 »	26 »
ձ)	145 ոռուլուց բարձր աշխատա- վարձի յուրաքանչյուր լրիւ 25 ո.				
	համար ավելացվում են 4-ական կոպեկ, բայց վաչ ավելի քան 80 »	60 »	40 »		

Ծանօթություն. 1. Պետական թոշակառուները
և սոցիալական ապահովագրության կարգով խնամ-
փող անձերը, վորոնք ամսական ստանում են 20 ոռու-
լուց վոչ ավելի, նաև նպաստ ստանալու իրավունք
ունեցող գործազուրկները, կարմիր-բանակայինների՝
ինքնուրույն յեկամտի աղբյուր չունեցող ընտանիք-
ները, բնակարանային վարձը վճարում են 20 ո.
վոչ ավելի աշխատավարձ ստացող բանվորների և
ծառայողների համար սահմանված դրույքներով
(1-ին հոդվածի «ա» կետ):

Պետական դպրոցների ուսանողները, վորոնք
ստանում են պետական թոշակ կամ գտնվում են պե-
տական ծառայության մեջ, բնակարանային վարձը
վճարում են բանվորների և ծառայողների համար

սահմանված դրույքներով՝ իրենց ստացած թոշակի
կամ աշխատավարձի համեմատ: (ՀԽՍՀ Կենտգործ-
կոմի և Ժողկոմի նորոգի 1933 թ. մարտի 14-ի լորոշ-
ման խմբագրությամբ Որ. և Կարդ. Ժող. 1933 թ.
№ 1, հոդ. 7):

Ծանօթություն 2. Պետական թոշակառուները,
սոցիալական ապահովության և սոցիալական ապա-
հովագրության կարգով խնամվող անձերը, վո-
րոնք ամսական 20 ո. ավելի նպաստ կամ թոշակ են
ստանում, բնակարանային վարձը վճարում են իրենց
ստացած նպաստի կամ թոշակի համեմատ՝ ամսական
20 ո. ավելի ստացող բանվորների և ծառայողների
համար սահմանված կոուղարներով (1-ին հոդվածի «բ»,
«ծ» կետերը):

Ծանօթություն 3. 1-ին ծանօթության մեջ հի-
շատակված կարմիր-բանակայինների ընտանիքների
անդամները կարող են խպառ ազատվել բնակարա-
նային վարձից տեղական քաղխորհուրդների կողմից,
իսկ վորտեղ քաղխորհուրդներ չկան—շրջանային
գործկոմների կողմից:

Ծանօթություն 4. Գրական աշխատանքով
զբաղվողները, նկարիչները, քանդակագործներն ու
գիտական աշխատավորները բնակարանավարձ վճա-
րում են բանվորների և ծառայողների համար սահ-
մանված կոպարներով:

Ծանօթություն 5. Բանվորներն ու ծառայողնե-
րը, ինչպես նաև բանվորներին ու ծառայողներին հա-
վասարեցրած անձերը, գյուղական վայրերում բնա-
կարանային վարձ են վճարում տանտիրով հետ փո-
խաղաք համաձայնության գալով, սակայն շրջանա-
յին կենտրոնների ու բանվորական ավանների համար
սահմանված բնակարանային վարձի կոպարներից վոչ
ավելի:

Ծանօթություն 6. Բանվորա-գյուղացիական
կարմիր Բանակի սահմանապահ և ԽՍՀՄ Ներքործ-
ժողկոմատի ներքին պահպանության կադրային հրա-

մանատարական և պետկազմի անձինք, ինչպես
նաև ԽՍՀՄ Ներքգործքողկոմատի պետական անդըռ-
տանգության գլխավոր վարչության՝ հասուլ կոչում
ստացած պետկազմի անձերը բնակարանային վարձը
վճարում են հասուլ որենքի համաձայն (ԽՍՀՄ Որ.
Ժող. 1936 թ. № 21, հոդ. 186) ՀԽՍՀ ԿԳԿ և ԺԿԾ 1936 թ.
հուլիսի 27-ի վորոշման խմբագրությամբ:

Մանոքություն 7. ԲԳԿԲ դինվորական ծառա-
յողների և Ներքգործքողկոմատի պետական անվտան-
գության գլխավոր վարչության պետկազմի անձերի
ուղմակրթական հաստատությունները գործողվե-
լու, ինչպես նաև ճամբարում և յերկարատե գոր-
ծուղման ստաժավորման մեջ գտնվելու գեպօռում,
յեթե նրանց ժամանակաշրջուր բնակավայրում ձրիա-
բար տրված չե բնակարան, կամ բնակարանային
վարձը չի վճարում հիմնարկությունը կամ զորամա-
սը, իբենց մշտական բնակավայրում բնակարանային
վարձը հաշվվում է նախորդ ծանոթությամբ, նրանց
համար սահմանված դրույքի 50%-ի չափով:

ՀԽՍՀ ԿԳԿ և ԺԿԾ 1936 թ. հուլիսի 2-ի վորոշ-
ման խմբագրությամբ: (ՀԽՍՀ Որ. Ժող., 1936 թ.,
№ 7, հոդ. 49):

Մանոքություն 8. ԽՍՀՄ, ԱՍՖԽՀ և ՀԽՍՀ
մեկ կամ միքանի շքանշաններով պարզեատրված
անձերը նաև անհատական թոշակառուները բռնած
բնակելի տարածության համար վճարում են 10-ից
մինչև 60% գելուզով այն տներում, վորտեղ բնակարա-
նավարձը գանձվում է որենքով սահմանված դրույք-
ներով: Զեղչի չափը սահմանում են տեղական խոր-
հուրդները՝ պարզեատրվածների յեկամուտի համե-
մատ: Բնակելի տարածության ավելցուկի և լրացու-
ցիչ տարածության համար՝ պարզեատրվածները
վճարում են սովորական չափով:

Պարզեատրվածներ՝ մահվան գեպօռում նրանց
արտոնությունները վերապահվում են նաև նրանց ըն-
տանիքի անդամներին՝ ամուսիններին, անչափահաս

յերեխաներին և նրանց խնամքի տակ գտնվող անաշ-
խատունակներին:

(ՀԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. աղ-
րիլի 27-ի վորոշման խմբագրությամբ: Որ. և Կարգ. Ժող. 1931 թ., № 2, հոդ. 96):

2. Տնայնագործներն ու արհեստավորները իրենց յեկա-
մտի համեմատ վճարում են՝

ա) նրանք, վորոնք չունեն վարձու բանվորներ կամ
ունեն մի բանվոր կամ յերկու աշակերտ և յեկամտային
հարկ չեն վճարում, —տանտիրով հետ համաձայնության
գալով, բայց վոչ պակաս քան 26 կ. մի քառ. մետրի հա-
մար այս վորոշմամբ նախատեսված բոլոր վայրերում և
վոչ ավելի քան 38 կ. Յերեան ու Լենինական քաղաքնե-
րում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. շրջանային կենտ-
րոններում ու բանվորական ավաններում.

բ) նրանք, վորոնք չունեն վարձու բանվորներ կամ
ունեն մի բանվոր կամ յերկու աշակերտ, բայց վճարում են
յեկամտային հարկ, —տանտիրով հետ համաձայնության
գալով, բայց վոչ պակաս քան 38 կ. և վոչ ավելի քան
80 կ. մի քառ. մետրի համար Յերեան ու Լենինական քա-
ղաքներում, վոչ պակաս քան 32 կ. և վոչ ավելի քան 60 կ.
այլ քաղաքներում, և վոչ պակաս, քան 26 կ. և վոչ ավելի
քան 40 կ. շրջանային կենտրոններում և բանվորական
ավաններում.

գ) նրանք, վորոնք ունեն յերկու կամ յերեք վարձու
բանվոր կամ յերեքից մինչև վեց աշակերտ, —տանտիրով
հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 88 կ.
մի քառ. մետրի համար այս վորոշմամբ նախատեսված
բոլոր վայրերում, և վոչ ավելի քան 1 ո. 60 կ. Յերեան
և Լենինական քաղաքներում, 1 ո. 40 կ. այլ քաղաքներում
և 1 ո. 20 կ. շրջանային կենտրոններում և բանվորական
ավաններում:

Մանոքություն 1. Արհեստավործական կոոպե-
րատիկ ընկերությունների (արտելների) և կանոնա-
դրության հիման վրա գործող աշխատավորական
արտելների անդամները բնակարանային վարձ են
վճարում տնայնագործների և արհեստավորների հա-

մար 2-րդ հոդվածի «ա» և «բ» կետերով սահմանված
կոպարներով:

Ծանօթություն 2. Նույն արտելների անդամ-
ները, յերբ այլ արտելները աշխատում են պետական
ձեռնարկությունների և հիմնարկությունների պատ-
վերներով, յեթե նրանք իրենց աշխատանքի համար
ստանում են վորոշ վարձատրություն և մասն չեն.
ստանում արտելի վաստակից, —ընակվարձ են վճա-
րում բանվորների ու ծառայողների համար 1-ին հոդ-
վածում սահմանված կոպարներով:

Ծանօթություն 3. Արհեստագործական կոոպե-
րացիայի ցանցում յեղած հատուկ որենքի (ԽՍՀՄ Որ.
և Կարգ. Ժող. 1930 թ. № 56, հոդ. 588) պահանջ-
ներին բավարարող արտելների անդամներին, իրենց և
ընտանիքի անդամներին ու նրանց խնամքի տակ զըս-
նըվող անձերի կողմից բանվող բնակելի տարածու-
թյան, նաև կոմունալ ծառայությունների համար
վճարում են բանվորների վերաբերյալ սահմանված
դրույքներով: (ՀԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմի 1931
թ. սեպտ. 14-ի վորոշման խմբագրությամբ:
Որ. և Կարգ. Ժող., 1931 թ., № 3, հոդ. 191):

2-ա Տնտեսավարների և ճարտարագիտական-տեխնիկա-
կան աշխատավորների համար սահմանել բնակարանային
վարձի հետեւյալ դրույքները.

Յուրաքանչյուր քառակուսի մետր տարածու-
թյան համար վճարում են

Ճարտարագիտական-տեխնի-
կական աշխատավոր-
ները, և տնտեսավարները,
վորոնք ստանում են
ամսական

Մինչև 325 ռուբլի
326 ռ. — 350 ռուբլի
351 » 375 »
376 » 400 »
401 » 425 »
426 » 450 »
451 » 475 »
476 » 500 »

Յերեանում,
Ենինական Շրջանային
և քաղաքա-
կենտրոն-
տիպ վայրե-
ներում
ըստ

44 կ. 40 կ. 36 կ.
50 » 46 » 40 »
54 » 50 » 46 »
58 » 54 » 50 »
62 » 58 » 54 »
66 » 62 » 58 »
70 » 66 » 62 »
74 » 70 » 66 »

571 ռ.—525	»	78 կ.	74 կ.	70	կ.
526 »	550 »	82 »	78 »	74 »	»
551 »	575 »	86 »	82 »	78 »	»
576 »	600 »	91 »	86 »	82 »	»
601 »	625 »	96 »	90 »	86 »	»
626 »	650 »	1,01 »	94 »	90 »	»
651 »	675 »	1,06 »	98 »	94 »	»
676 »	700 »	1,11 »	1,02 »	98 »	»
701 »	725 »	1,16 »	1,06 »	1,02 »	»
726 »	750 »	1,22 »	1,10 »	1,06 »	»
751 »	800 »	1,27 »	1,14 »	1,10 »	»
800 »	բարձր »	1,32 »	1,18 »	1,14 »	»

Այս վորոշումը գործադրել 1933 թ. հունվարի մեկից:

Ծանօթություն:—Այս հոդվածում հիշված բնա-
կարանային վարձի դրույքները տարածվում են այն
տնտեսավարների և ճարտարագետ-տեխնիկական աշ-
խատողների վրա, վորոնք ստանում են աշխատավարձ
ԽՍՀՄ ժկկ և Համկ(բ)կ 1932 թ. փետրվարի 8-ի
վորոշման համաձայն:

(ՀԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմի խորհրդի 1933 թ. փետր-
վարի 22-ի վորոշման իսկը: Որ. և Կարգ. Ժող., 1933 թ.,
№ 1, հոդ. 5):

2-ր. Տրանսպորտի մարմիններին պատկանող և քաղա-
քային բնականվայրից գուրս գտնվող բնակելի շենքերի վար-
ձի ընդհանուր հիմունքները սահմանում են ծանապահնե-
րի Հաղորդակցության ֆողովրդական կոմիսարիատի մար-
մինները, համաձայնության գալով յերկաթուղային տրանս-
պորտի պրոֆեսիոնալ միությունների կենտրոնացության
հետ.

2-դ Հոդվածում հիշված ընդհանուր հիմունքներով
պետք է նախատեսվեն վարձի տարբեր կոպարներ՝ բնա-
կարանի հարմարությունների և հեռավորության համե-
մատ:

Յուրաքանչյուր շենքի վարձի չափն այդ ընդհանուր հի-
մունքների համաձայն վորոշում են տրանսպորտի այն մար-
մինները, վորոնց պատկանում են չենքը, համաձայնության
գալով համապատասխան պրոֆմիության մարմնի հետ:

Բնակվարձի չափը տրանսպորտին պատկանող շենքում
չպետք է ավելի լինի բնակարանային որենքով սահմանված
բնակարձի կոպարներից:

(ՀԽՍՀ Կենտղործկոմի և Ժողկոմի որոշման 1933 թ. ոգոս-
տոսի 3-ի վորոշման խմբագրությամբ: Որ. և Կարգ. Ժող. 1933 թ. № 3, հոդ. 65):

3. Ազատ պրոֆեսիալի տեր անձերը, նայած իրենց յե-
կամուտներին՝ վճարում են.

ա) յեկամտային հարկ չվճարողները—38 կ. մի քառ.
մետրի համար Յերեան և Լենինական քաղաքներում, 32 կ.
այլ քաղաքներում և 26 կ. չրջանային կենտրոններում ու
բանկորական ավաններում.

բ) յեկամտային հարկ վճարողները—տնատիրոջ հետ
համաձայնության դաշտվ, բայց վոչ պակաս, քան 40 կ. և
վոչ ավելի, քան 1 ո. 60 կ. մի քառակուսի մետրի համար
Յերեան ու Լենինական քաղաքներում, 35 կ. վոչ պակաս
և 1 ո. 40 կ. վոչ ավելի այլ քաղաքներում և 30 կ. վոչ
պակաս և 1 ո. 20 կ. վոչ ավելի չրջանային կենտրոններում
և բանկորական ավաններում:

3-ա. Նկարիչներն ու քանդակագործները, յեթե նրանք
կերպարվեստի բարձրորակ աշխատողներն, իրենց մասնա-
գիտական աշխատանքների, արհեստանոցի և ստուդիայի
բռնած տարածության համար անկախ նրանից, թե այդ
տարածությունն ինչ չափի յե, բնակվարձ վճարում են սո-
վորական կոպարով:

Ծանոթություն.—Աշխատողի բարձրորակ լինելու
հանդամանքը հաստատվում է Գեղարվեստի Աշխա-
տագործների Արհեստական Միության տեղական
մարմնի կողմից տրված վիկայականով (ՀԽՍՀ Կենտ-
ղործկոմի և Ժողկոմի որոշման 4-ի վորոշման խմբագրությամբ: Որ. և Կարգ. Ժող.,
1930 թ., № 14, հոդ. 243):

4. Առևտրականները և անաշխատ կատեգորիաների այլ
անձերը, նայած իրենց յեկամուտներին, վճարում են բնա-
կարանային վարձ տնատիրոջ հետ համաձայնության դա-
շտվ, բայց վոչ պակաս քան 1 ո. 98 կ. և վոչ ավելի քան
3 ո. մի քառ. մետրի համար Յերեան և Լենինական քա-

րաժներում, 1 ո. 32 կ. վոչ պակաս և 2 ո. 40 կ. վոչ ավե-
լի—այլ քաղաքներում, և 1 ո. 32 կ. վոչ պակաս և 2 ո. վոչ
ավելի՝ չրջանային կենտրոններում և բանկորական ավան-
ներում:

5. Բանվորների և ծառայողների և նրանց հավասարեց-
րած անձերի, 2-րդ հոգվածի «ա» և «բ» կետերում հիշված
տնայնագործների և արհեստավորների, ինչպես նաև յեկա-
մտային հարկ չվճարող ազատ պրոֆեսիալի տեր անձերի
(3-րդ հոգվածի «ա» կետ) բնակարանային վարձի կոպար-
ները յենթակա յեն իջեցման:

- ա) Ելեկտրական լուսավորության բացակայության դեպքում,
յեթե տվյալ վայրում ելեկտրականություն կա. 5 %-ով
բ) բակում ջրմուղ չլինելու դեպքում 5 »
ց) միջանցիկ բնակարանների համար 8 »
դ) կիսամութ և միջանցիկ բնակարանների համար 15 »
է) տանիքի տակի բնակարանների համար 10 »
զ) նկուղային և կիսամուղային բնակարանների համար 25 »

Ծանոթություն 1. 5-րդ հոգվածի «ա», «զ»
կետերով նախատեսված՝ բնակարանային վարձի
իջեցման ընդհանուր գումարը չպետք է գերազանցի
բնակարանային վարձի 50%-ից և պետք է լինի վոչ
պակաս քան 5,5 կոպ. մի քառ. մետրի համար:

Ծանոթություն 2. Յեթե բանվորների ու ծա-
ռայողների և նրանց հավասարեցրած անձերի ծախ-
քով ու նրանց հետ միասին ապրում են ինքնուրույն
աշխատանքից զուրկ ընտանիքի այլ անդամներ, և ըն-
տանիքի աշխատող յուրաքանչյուր անդամին ընկնում
է նրա ծախքով ապրող 2 անձից ավելի, ապա սկսած
աշխատողի ծախքով ապրող 3-րդ անձից յուրա-
քանչյուրի համար բնակարանավարձը զեղչվում է
10%-ով, սակայն զեղչի ընդհանուր գումարը չի կա-
րող ամրող բնակվարձի 30%-ից ավելի լինել:

6. Վարձողները վերոհիշյալ կոպարներով բնակվարձ
են վճարում իրենց և իրենց ծախքով ապրող՝ ընտանիքի
անդամների բոնած բնակելի տարածության համար յուրա-
քանչյուրին ընկնող յոթ և կես քառ. մետր (15 քառ. արշ.)
տարածության սահմաններում:

Ծանոթություն. — Վարձողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը և նրա հետ միասեղ ապրող և ամբողջովին կամ մասամբ նրա ծախքով ապրող այլ անձերը, ինչպես և նրա տնային աշխատողները:

7. Երդ հոգվածում նախատեսված նորմայից ավելի բոնած բնակելի տարածության համար վարձողները վճարում են համապատասխան կոպարների կրկնակի չափով, բայց վոչ պակաս քան 38 կ. Յերեան և Լենինական քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. շրջանային կենտրոններում ու բանվորական ավաններում:

Ծանոթություն. — Բանվորներն ու ծառայողները և նրանց հավասարեցրած անձերը, ինչպես նաև այն անձերի կատեգորիաները, վորոնց տեղական խորհուրդների և շրջանային գործկոմների կողմից կորպի նորմայից զուրս լրացնուցիչ բնակելի տարածություն, ավելորդ բնակելի տարածության համար վճարում են սովորական չափով՝ նորմայով նրանց հասանելիք բնակելի տարածության մի յերրորդի սահմաններում:

8. Բանվորների և ծառայողների բնակարանային վարձը հաշվելիս նկատի յե առնվում նրանց ամբողջ ամսական աշխատավարձը, բացի արտաժամյա աշխատավարձից, ինչպես նաև պատասխանատու ծառայողների կոպարներով վարձարություն ստացող անձերի հատուկ հավելումից (հարց- էկա). վարձու աշխատանքի անձերը, վորոնք վարձատրություն են ստանում վորպես մասնագետներ, կամ աշխատում են համատեղությամբ, կամ բացի հաստատուն կոպարից ստանում են արտաժամյա կամ տոկոսային վարձատրություն, — բնակարանային վարձը վճարում են իրենց ամսական յեկամուտի միացյալ գումարի համեմատ:

Ծանոթություն. — Մանկավարժական աշխատանքով զբաղվող (բարձրագույն, միջնակարգ և տարրական դպրոցներում գիտություններ և առարկաներ ավանդող) անձերի բնակվարձը հաշվելիս՝ նկատի յե առնվում միայն այն աշխատավարձը, վորոն ստացվում և աշխատանքի ժամանակի՝ հատկապես նրանց վերաբերյալ սահմանաշած նորմայի համար, այդ նորմայից

դուրս կամ մի այլ դպրոցական հիմնարկում ստացվող աշխատավարձը համարվում և արտաժամյա լրացնուցիչ վարձատրություն և բնակվարձը հաշվելիս նկատի չի առնվում:

Յեթե մանկավարժական աշխատանքով զբաղվող անձը բացի հիմնական մանկավարժական դործունեյությունից համատեղության կարգով աշխատում և մի այլ հիմնարկում կամ ձեռնարկության մեջ, բնակվարձը հաշվելիս նկատի յե առնվում ավելի բարձը (մանկավարժական կամ այլ աշխատանքի համար ստացվող) աշխատավարձը: (ՀԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմի խորհրդի 1931 թ. սեպտեմբերի 14-ի վորոշման խմբագրությամբ: Որ, և Կարգ. Ժող., 1931 թ., № 3, հոդ. 191):

9. Յեթե ընտանիքի կազմի մեջ կան մի քանի անձեր, վորոնք ունեն ինքնուրույն աշխատավարձ, բնակարանային վարձը հաշվելիս նկատի յե առնվում ընտանիքի մեջ ամենաբարձը աշխատավարձ կամ յեկամուտ ունեցող անդամի աշխատավարձը կամ յեկամուտը:

10. Բանվորներն ու ծառայողները և նրանց հավասարեցված անձերը տվյալ ամսի բնակարանային վարձը վճարում են հաջորդ ամսի 10-ից վոչ ուշ, իսկ մնացած կատեգորիաները վճարում են ընթացիկ ամսի 15-ից վոչ ուշ:

Ծանոթություն. — Տեղական խորհուրդներին, տրանսպորտային և արդյունաբերական ձեռնարկություններին պատկանող շենքերում բնակարան վարձող անձերի կողմից այդ հոգվածով սահմանված ժամանակամիջոցում բնակվարձը չվճարելու գեղքում առաջին ամավա ընթացքում որական գանձվում ե բնակվարձի 0,1 տոկոսի չափով, իսկ հետագա ժամանակի համար 0,2 տոկոսի չափով: Տույժի ընդհանուր չափը (գումարը) չի կարող բնակվարձի հիմնական պարտքի 50 տոկոսից ավելի լինել: (ՀԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմի խորհրդի 1931 թ. սեպտեմբերի 14-ի վորոշման խմբագրությամբ: Որ, և Կարգ. Ժող., 1931 թ., № 3, հոդ. 191):

11. Այս վորոշման ներգործությունը տարածվում է նաև բոլոր ազգայնացված, քաղաքայնացված և մասնավոր տների վրա, բացի որով բնակվողներին վարձով տրվող հյուրանոցներից:

[ՀԽՍՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1938 թ. ապրիլի 27-ի վորոշումից (ՀԽՍՀ Որ. և Կարգ. ժողովածու 1938 թ. № 4, հոդ. 14)]:

Ծանօթուքյուն. — Կառուցման իրավունքի կամ անձնական սեփականության իրավունքի հիման վրա մասնավոր քաղաքացիներին պատկանող տների, կամ նրանց կողմից տեղական խորհուրդներից վարձակալած տների համար թույլատրվում է սույն վորոշմամբ սահմանված բնակարանային վարձի դրույքներից հավելյալ գանձել 20%-ից վոչ ավելի չափով:

[ՀԽՍՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1938 թ. ապրիլի 27-ի վորոշումից (ՀԽՍՀ Որ. և Կարգ. ժողովածու, 1938 թ., № 4, հոդ. 14)]:

12. Տնատերի կողմից վարձողներին մատուցվող կոմունալ ծառայությունների, ինչպես նաև կենտրոնական տաքացման վարձը վճարվում է յուրաքանչյուր վարձողի փաստացի սպառման չափով, անկախ նրա վճարած բնակարանային վարձի չափով:

13. Տների ծախքերը, այն ե՝ կառավարչությունը, չենքերի ու մայթերի վերաշխությունն ու ապահովությունը, գիշերապահների և դրանապահների վարձը, բակերի ու սանդուխքների լուսավորությունը, անհամար ինքնառ գնելու և այլ ընթացիկ ծախքերը, ինչպես և հարկերն ու ապահովագրական տուրքերը վճարվում են տնատերերի հաշվին:

14. Այս վորոշումը կիրարկության դնելուց հետո բնակելի չենքերի վերաբերյալ բոլոր պայմանագրերի ու իրավահարերությունների այն մասը, վորը վերաբերում է այդ չենքերի վարձի չափին և այս վորոշումով նախատեսված այլ պայմաններին, յենթակա յետի վորոշության, համաձայն այս վորոշման:

15. Այս վորոշումով նախատեսված բնակարանային

վարձի նորմաներից ավելի բնակվարձ գանձել չել թույլատրվում: Նորմայից ավելի բնակվարձ դանձողները պատասխանատվության են յենթարկվում ՀԽՍՀ Քրեական Որենսությի համաձայն:

16. Ի զարգացումն այս վորոշման հրահանգները հրատարակում են ներքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատը: (Որ. և Կարգ. ժող.՝ 1928 թ., № 4, հոդ.՝ 31):

8. ԱՄԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉԱԾՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1928 թ. մայիսի 9-ի վորոշումը (ՀԽՍՀ Որ. ժող.՝ 1928 թ., № 6, հոդ. 71):

Կենտրոնական Գործադիր կոմիտեն և ժողովրդական կոմիսարների խորհուրդը վորոշում են՝

1. ՀԽՍՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1928 թ. մայիսի 10-ի վորոշմամբ սահմանված բնակարանային վարձը («Խորդագային Հայաստան» 1929 թ. մայիսի 21 և 22, №№ 67 և 68) չի կիրարկվում այն անձերի նկատմամբ, վորոնք միայն ամառային ամիսներում բնակվում են Ղարաքիլիսայում, Ստեփանավանում, Դիլիջանում և Ծաղկաձորում (Դարաշիչագում), վորակես ամառանոցներում:

2. Հիշյալ անձերը բնակարանավարձ վճարում են բնակարանատիրոջ հետ մասնավոր համաձայնության գալով:

9. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1929 թ. դեկտեմբերի 16-ի վորոշումից (ՀԽՍՀ Որ. ժող.՝ 1930 թ., № 1, հոդ. 6)

Բանվորական ավանները բնակարանավարձի հարցում զեկավարվում են բնակարանային որենքով:

Ավանացին խորհուրդները բանվորական ավաններում քաղաքայնացված տները կառավարում են քաղաքների համար գործող համապատասխան որենքների հիման վրա:

Մանոքություն. — Համապատասխան հիմնարկների համաձայնությամբ ավանային խորհրդի կառավարչության կարող են հանձնվել նաև ազգայնացված տներ:

10. ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՅԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵԿ ԶԻՆՍՊԱՐՏՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաստատված ԽՍՀՄ Կենտգործկոմի և ժողկոմինորի
կողմից 1930 թ. ապրիլի 23-ին
(ԽՍՀՄ Որ. Ժող., 1930 թ., № 23, հոդ. 253) —

Հ Ա Տ Վ Ա Ծ Վ Լ

ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

92. Կաղըային պետկազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր, կազմից) զինվորական ծառայողները, նույնական և գերակետ ծառայության շարքային կազմի զինվորական ծառայողներն իրավունք ունեն իրենց և իրենց հետ միասին բնակվող ընտանիքի անդամների համար տեղական խորհուրդների ընդհանուր բնակարանային ֆոնդից բնակելի տարածություն ստանալ բնակվորների հետ հավասարական պետկազմիս:

Բացի դրանից կաղըային պետկազմի (բացի կրտսեր կազմից) զինվորական ծառայողներն իրավունք ունեն իրենց և իրենց հետ միասին բնակվող ընտանիքի անդամների համար բնակելի տարածություն ստանալ հատուկ բնակարանային ֆոնդից, վորոն այդ նպատակով բրոնիսաի յև յենթարկվում տեղական խորհուրդների կողմից:

93. Ժամկետավոր ծառայության կաղըային շարքային կազմի զինվորական ծառայողները և զինվորական-արտօնական ծառայության անցնող զինվորական ծառայողները՝ ծառայության առաջին յերեք ամսվա ընթացքում պահպանում են մինչև ծառայության մտնելը ունեցած բնակելի տարածությունը: Հետապայում, տեղական խորհուրդները:

միութենական հանրապետությունների որենսդրությամբ սահմանված կարգով այդ տարածությունն ոգտագործում են մինչև նրանց ծառայությունից վերադառնալը:

Ծառայությունից վերադառնալուց հետո այդ զինվորական ծառայություններն իրավունք ունեն զրավելու մինչև ծառայության մտնելն իրենց ունեցած բնակելի տարածությունը: Զինվորական ծառայությունների ծառայության մեջ գտնված ժամկետական այդ տարածության վրա բնակվող անձերը պարտավոր են աղատել այն յերկու շաբաթից վոչ ուշ:

Այս արտօնությունը կարող է ոգտագործվել արձակման որից սկսած վեց ամսվա ընթացքում:

94. Յեթե կաղըային պետկազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողը տեղավորվել է իրենց անջատ ապրող ընտանիքի բնակելի տարածության վրա, ապա նա այդ տան մեջ տարածություն ազատվելու գեպքում իրավունք ունի իր համար բնակելի տարածություն ստանալ նույն տան մյուս բնակվողների հանդեպ՝ առաջին հերթին:

Այդ նույն արտօնությունը վերապահվում է մատնանշված զինվորական ծառայողներին յերկարատև արձակուրդի, պահեստի մեջ կամ ծառայությունից բոլորովին արձակվելու գեպքում այն պայմանով, յեթե նրանք ընտանիքի բնակելի տարածության վրա տեղավորվել են արձակման որից սկսած վեց ամսվա ընթացքում:

95. Կաղըային շարքային և պետկազմի այն զինվորական ծառայողները, վորոնք արձակվել են յերկարատև արձակուրդի, պահեստի մեջ կամ բոլորովին՝ ծառայությունից, և զինվորական-արտօնագրական ծառայության անցած զինվորական ծառայողներն իրավունք ունեն տեղական խորհուրդների ընդհանուր բնակարանային ֆոնդից իրենց և իրենց հետ միասին բնակվող ընտանիքի անդամների համար բնակելի տարածություն ստանալ բնակվորների հետ հավասարապես:

Այս արտօնությունը կարող է ոգտագործվել արձակման որից սկսած վեց ամսվա ընթացքում:

96. Վարչական կարգով տներից հեռացվելու, յեթե

հման հեռացնելը թույլատրվում է որենքով, կադրային պետկազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողները, գերակետիկ ծառայության շարքային կազմի զինվորական ծառայողները, զինվորական-արտադրական ծառայություն անցնող զինվորական ծառայողները, նույնպես և այդ զինվորական ծառայողների ընտանիքները ու ժամկետավոր ծառայության կադրային շարքային և կրտսեր պետկազմի զինվորական ծառայողների ընտանիքներն ոգտվում են հետեւյալ արտոնություններից:

ա) հեռացնող հիմնարկությունը կամ ձեռնարկությունը պարտավոր է հեռացվողներին տրամադրել այնպիսի շենություն, վորոն իր չափերով համապատասխանի հեռացվողների նախկին չինության, սակայն տվյալ վայրում սահմանված նորմայից վոչ ավելի, և միաժամանակ բավարի սանիտարական պահանջներին.

բ) հեռացնող հիմնարկությունը կամ ձեռնարկությունը պարտավոր է հեռացվողներին ձրի տրամադրել տեղափոխության համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցները.

գ) հեռացումը կարող է կատարվել միմիայն միութենական հանրապետությունների որենսդրությամբ սահմանված տարվա ժամանակում:

97. Ցեֆե կադրային պետկազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողը դասընթաց անցնելու համար ուղարկվել է ուսում-ուսումնական հաստատություն, կամ գտնվում է ճամբարում, յերկարատեղ գործուղման մեջ կամ ստաժ է անցնում, ապա նա բնակելի տարածությունը պահպանում է իր ժամանակավոր բացակայության ամբողջ ժամանակի ընթացքում:

Այս հոգվածը չի տարածվում այն զինվորական ծառայողների վրա, վորոնք այդ գեպքում չեն պահպանում իրենց նախկին շտատային պաշտոնները:

98. Կադրային պետկազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողները, գերակետիկ ծառայության շարքային կազմի զինվորական ծա-

ռայոնների և այլ զինվորական ծառայողների խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները բնակարանային վարձի տեսակետից հավասարեցվում են բանվորներին: Այդ գեպքում բնակարանային վարձը հաշվվում է միայն զինվորական ծառայողի հիմնական ոռոճիկից:

Ծանրք-ություն.— Այս արտոնությունը ռեզերվում գտնվող զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների վերաբերյալ կիրառելու դեպքում, բնակարանային վարձը հաշվվում է այդ զինվորական ծառայողների այն հիմնական ոռոճիկից, վորը ստանում էին ռեզերվի մեջ հաշվվելուց առաջ Բանվորագյուղացիական Կարմիր բանակի կադրերում ունեցած ծառայությունից:

99. Ժամկետավոր ծառայության կադրային շարքային և կրտսեր պետկազմի զինվորական ծառայողների ընտանիքները, յեթե նրանցում չկան ինքնուրույն մշտական վաստակ ունեցող անձեր, բնակարանային վարձը վճարում են ամսական ամենաքիչ վաստակ ունեցող բանվորների հետ հայտարարեալուս:

100. Ցեֆե կադրային պետկազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողը դասընթաց անցնելու համար ուղարկվել է ուսում-ուսումնական հաստատություն, կամ գտնվում է ճամբարում, յերկարատեղ գործուղման մեջ կամ ստաժ է անցնում, ապա՝ ինչպես մշտական բնակալվայրում, նույնպես և ժամանակավոր ապրելու վայրում՝ այն տեղերում, վորտեղ բնակարանային վարձը գանձվում է տեղական խորհուրդների կողպարներով, վճարում է բնակելի տարածության բնակարանային վարձի միայն կեսը:

Այս արտոնությունը վերապահվում է այն պայմանով, յեթե զինվորական ծառայողին ժամանակավոր ապրելու վայրում բնակելի տարածություն չի հատկացված:

101. 9 և ավելի բարձր կատեգորիայի վերաբերյած կադրային պետկազմի զինվորական ծառայողները, առանձին զորամասերի հրամանատարներն ու կոմիսարները, նույնպես և ուսում-ուսումնական հաստատությունների

հատուկ ռազմական և ռազմա-քաղաքական առարկաների դասատուներն իրավունք ունեն լրացուցիչ սենյակի կամ լրացուցիչ բնակելի տարածության:

11. ԲԳԿԲ ԿԱԴՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԱՏՐԱԿԱՆ ՈՒ ՊԵՏԿԱԶՄԻ, ԳԵՐԱԿԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱ-ՆԱՏՐԱԿԱՆ ՈՒ ՊԵՏԿԱԶՄԻ ՅԵՎ ԳԵՐԱԿԵՏ ԾԱՌԱՅՈՒ-ԹՅԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ, ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԳԺԿ ՍՍՀՄԱՆՅԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԻՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՎԱՐՁԻ ԿՈՊԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Քաղվածք ԽՍՀ Միության ԿԳԿ և ԺԿԽ

1936 թ. ապրիլի 17-ի վորոշումից:

(ԽՍՀՄ Որ. Ժող., 1936 թ., № 21, հոդ. 186)

1. Սահմանել՝ ԲԳԿԲ կադրային հրամանատարական ու պետկազմի, ԽՍՀ Միության ՆԳԺԿ սահմանային ու ներքին պահպանության զինվորական ծառայողների, ինչպես նաև ԽՍՀ Միության ՆԳԺԿ Պագվ և Բանվորա-գյուղացիական մելիցիայի պետկազմի հատուկ կոչումներ ստացած անձանց համար՝ սրան կից աղյուսակում նշված բնակվարձի կոպարները (1937 թ. սեպտեմբերի 27—ԽՍՀՄ Որ. Ժող., 1937 թ., № 65, հոդ. 290):

2. Սահմանել՝ ԲԳԿԲ գերակետ ծառայության կադրային շարքային կազմի և գերակետ ծառայության կադրային կրտսեր հրամանատարական ու պետկազմի, ԽՍՀ Միության ՆԳԺԿ սահմանային ու ներքին պահպանության զինվորական ծառայողների համար բնակվարանավարձ՝ մեկ քառակուսի մետրին 15 կոպեկի չափով—ամսական 220 ռուբլուց վոչ բարձր ռոճիկ ստանալու դեպքում և 25 կոպեկի չափով՝ մեկ քառակուսի մետրի համար—ամսական՝ 220 ռուբլուց բարձր ռոճիկ ստանալու դեպքում:

3. 1 և 2 հոդվածներում նշված զինվորական ծառայողների և ԽՍՀ Միության ՆԳԺԿ Պագվ պետկազմի անձանց համար բնակվարանավարձի չափը վորոշելիս՝ հաշվի առնել ամբողջ ռոճիկը, բացի ծառայության տարիների հա-

մար արվող տոկոսային հավելումներից, պարենթաժնի փոխարեն վճարվող փոխհատուցումից և կենցաղային դրամներից, վորոնք վճարվում են հեռավոր վայրերում ծառայելու համար:

4. Սահմանել, վոր ԽՍՀ Միության ՆԳԺԿ որդանների մնացած բոլոր աշխատողների վրա (Բանվորա-գյուղացիական միլիցիայի, բայց հատուկ կոչումներ ստացած պետկազմին պատկանող անձերից, Հրշեղ և անտառային պահպանության վարչության, Քաղաքացիական կացության ակտերի բաժնի, Պետական գծահանման և քարտեզագրության գլխավոր վարչության, Խճուղիների գլխավոր վարչության և այլն), ինչպես նաև այլ գերատեսչությունների ուղղմականացված կազմակերպությունների աշխատողների վրա տարածվում են ընդհանուր հիմունքներով բնակարանավարձի այն կոպարները, վորոնք սահմանված են բանվորների և ծառայողների համար (1937 թ. սեպտեմբերի 27, —ԽՍՀՄ Որ. Ժող. 1937 թ., № 65, հոդ. 290):

6. Ներկա վորոշման հիման վրա բնակարանավարձը վերցնել 1936 թ. ապրիլ ամսվա բնակարանավարձից սկսած:

12. ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԳԿ ՅԵՎ ԺԿԽ 1936 ԹՎԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի «ԲԳԿԲ ԿԱԴՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԱՏՐԱԿԱՆ ՈՒ ՊԵՏԿԱԶՄԻ, ԳԵՐԱԿԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՆԱՏՐԱԿԱՆ ՈՒ ՊԵՏԿԱԶՄԻ ՅԵՎ ԳԵՐԱԿԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ, ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԳԺԿ ՍՍՀՄԱՆՅԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԻՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՎԱՐՁԻ ԿՈՊԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՎՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԿԳԿ առընթեր կոմիտեալ տնտեսության Համամիուրենական խորհրդի 1936 թ. ապրիլի 28-ի շրջաբերականը («Բյոլլ. ՀԿԿՀ», 1936 թ. № 10) (ՔԱՂՎԱԾՔ)

ԽՍՀ Միության ԿԳԿ և ԺԿԽ 1936 թ. ապրիլի 17-ի «ԲԳԿԲ և ՆԳԺԿ զինվորական ծառայողների բնակարանա-

վարժի դրույքների մասին» վորոշման 5 հոդ. հիման վրա (ԽՍՀՄ Որ. Ժող.՝, 1936թ., № 21, հոդ.՝ 186) ԽՍՀՄ կդկ առընթեր կոմունալ տնտեսության համամիութենական խորհուրդն առաջարկում է միութենական հանրապետությունների և Վրաստանի, Հայաստանի և Աղբբեջանի ԽՍՀ կոմտնտեսության ժողկոմաներին հրահանգներ հրատարակել ԽՍՀ Միության կդկ և ԺԿԽ հիշյալ վորոշումը կիրառելու կարգի մասին, ղեկավարվելով հետեւյալով.

1. ԲԳԿԲ, ԽՍՀ Միության ՆԳԺԿ սահմանային և ներքին պահպանության կադրային հրամանատարական և պետկազմի զինծառայողները և ԽՍՀ Միության ՆԳԺԿ պետական անվտանգության գլխավոր վարչության պետկազմին պատկանող և հատուկ կոչումներ ունեցող անձինք բնակարանների համար վճարում են հետեւյալ դրույքներով:

Ծանոթություն.—1-ին հոդվածում մատնանշված զինծառայողներն ավելի բնակտարածության համար վճարում են սովորական չափով:

2. ԲԳԿԲ գերակետ ծառայության կադրային շարքային կազմի և գերակետ ծառայության կադրային կրտսեր հրամանատարական և պետկազմի, ԽՍՀ Միության ՆԳԺԿ սահմանային և ներքին պահպանության զինվորական ծառայողները, ովքեր ամսական 220 սուբլուց ավելի սոճիկ չեն ստանում, բնակարանավարձ են վճարում բնակտարածության 1 քառ. մետրի համար ամսական 15 կոպեկի չափով, իսկ 220 սուբլուց ավելի սոճիկ ստանալու գեպքում՝ 25 կոպեկի չափով:

3. 1 և 2 հոդվածներում նշված անձերի համար բնակարանավարձը հաշվարկելիս նկատի յեւ առնվում նրանց ստացած ամբողջ աշխատավարձը, բացառությամբ՝

ա) ծառայության տարիների համար վճարվող տոկոսային հավելումներից.

բ) պարենբաժնի փոխարեն վճարվող փոխատուցումներից և

դ) հեռակոր վայրերում ծառայելու համար վճարվող կենցաղային դրամական միջոցներից:

4. 1 և 2 հոդվածներում նշված բնակարանավարձի դրույքները չեն կարող բարձրացվել կամ իջեցվել տեղական խորհուրդների կողմից վո՛չ բնակարանների տերիտորիալ տեղադրությունից, բարեկարգության աստիճանից և վորակեց յելնելով և վո՛չ ել բնակարանը վարձակալողի ընտանիքի կազմից յելնելով:

5. 1 և 2 հոդվածներում նշված անձերից նրանք, ովքեր պարզեատրվել են ԽՍՀ Միության մեկ կամ միքանի շքանշաններով, իրավունք ունեն բնակարանների համար վճարել ըստ իրենց ընտանիքի կամ շքանշաններով պարզեատրված անձերի համար սահմանված հիմունքներով բանվորների և ծառայողների համար յեղած դրույքներով 10 մինչև 50% գեղջով, կամ այս շրջաբերականի 1 և 2 հոդվածներում նշված դրույքներով, առանց վորեւե զեղչ կիրառելու:

6. Այն գեպքերում, յերբ 1 և 2 հոդվածներում հիշված անձերի հետ միասին ապրում են ինքնուրույն վաստակ ունեցող ընտանիքի անդամներ, բնակարանի վարձը վորոշվում ե ըստ ԲԳԿԲ զինծառայողի կամ ՆԳԺԿ Պազվետկազմին պատկանող անձի աշխատավարձի (ոռճիկի):

7. ԲԳԿԲ զինծառայողին և ՆԳԺԿ Պազվ պետկազմին պատկանող անձերի ուղղամասումնական հաստատություններն ուղարկելու, ինչպես նաև նրանց ճամբարներում, յերկարատև գործուղման կամ ստաֆիրովկայի մեջ գտնվելու գեպքում, յեթե ժամանակավոր տեղավորվելու վայրում նրանց անվճար կամ հիմնարկության կամ զորամասի կողմից առանձնապես վճարվող բնակարան չի առանձնացվել, նրանց մշտապես գտնվելու տեղի բնակարանավարձը հաշվարկվում է 1 և 2 հոդվածներում նրանց համար սահմանված դրույքների 50%-ի չափով:

8. ԲԳԿԲ զինծառայողի կամ ՆԳԺԿ Պազվ պետկազմին պատկանող անձի մահվան գեպքում, նրա մահվան որից 6 ամսվա ընթացքում, նրա ընտանիքի անդամներին իրավունք և վերապահվում բնակարանավարձը վճարել 1 և 2

Հողվածներում սահմանված դրույքներով՝ Վեց ամիս անց-
նելուց հետո բնակվարձի չափը սահմանվում է ընդհանուր
հիմունքներով:

9. Բնակարանավարձը ներկա չըջաբերականում նշված կոպարներով վճարելու իրավունքը հաստատվում է ծառայության վայրից տրված սրան կցված ձևի տեղեկանքով:

Տեղեկանքները բնակվարձակալների կողմէից ներկայացվում են բնակվարչությանը տարեկան մեկ անդամ, ինչպես նաև ոռոճիկի փոփոխության բոլոր դեպքերում:

Որոճիկի փոփոխության վերաբերյալ ժամանակին տեղեկանք չներկայացնելը, տեղեկանքների տարեկան վերացուցակագրության պահին առիթ և տալիս բնակարանավարձի վերահաշվարկման՝ սկսած ոռօճիկի փոփոխության մոմենտից, ընդհանուր հիմունքներով, հաշվարկելով նրա վրա ժամանակին չմուծած բնակարանավարձի ամբողջ գումարի տույժը:

10. Կոմունալ սպասարկումների համար (ջրմուղ, կոյուղի, լուսավորություն և գազ), խնչպես նաև կենտրոնական ջեռուցման համար և կոյուղի չունեցող տներում աղբահորերը հեղուկ կեղտություններից մաքրելու համար յեղող վարձը զինվորական ծառայողներից վերցվում և բնակարանավարձից դուրս, ընդհանուր հիմունքներով:

11. Ներկա շրջաբերականի 1 և 2 հողվածներում նշված բնակվարձի կոսպարները չեն տարածվում՝

ա) Բանվորա-գյուղացիական միլիցիայի¹, Հըշեջ և
անտառային պահպանության վարչության, Քաղաքացիական
կացության ակտուրի բաժնի, Պետական գծահանրան և
քարտեզագրության վարչության, Խճուղիների գլխավոր
վարչության և ԽՍՀ Միության ՆԳԺԿ մյուս որդան-
ների բոլոր աշխատողների վրա, բացառությամբ 1 և 2
հոդվածներում նշված ՆԳԺԿ սահմանային և ներքին պահ-
պանության գինվորական ծառայողներից և ՆԳԺԿ պետա-
կան անվտանգության գլխավոր վարչության պետկազմին
պատկանող անձերից:

¹ Բացի հատուկ կոչում ստացած պետկադմին ոլստկանող անձերից:

բ) մյուս բոլոր գերատեսչությունների ուազմականացված կազմակերպությունների աշխատողների վրա.

գ) ՆԳԺԿ սահմանային և ներքին պահպանության և Պաշտպանության ժողովը ըստական կոմիսարիատի որդանների, բոլոր ազատ ռածիկով աշխատողների, այդ թվում և հաստիքային պաշտոններ զբաղեցնող պետկազմի վրա:

13. Բնակարանավարձը, այս հրահանգում շարադրված հիմունքներով, հաշվարկվում է 1936 թ. ապրիլ ամսվա բնակարանավարձից սկսած :

14. Այս բոլորին նկատմամբ, վորոնք նախատեսված չեն
ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1936 թ. ապրիլի 17-ի վորոշման մեջ և
ներկա շրջաբերականում, կիրառվում են բանվորներից և
ծառայողներից բնակարանավարձ գանձելու համար սահ-
մանված նորմաները:

Առղիբութեղեկանքի ձևը

ՀԵՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ

ԶՈՐԱՄԱՍԻ ՇՑԱՄՊՈՅ

ՏԵՂԵԿԱՆՔԻ ԶԵՎՈ

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրված ե բնակվարչությանը ներկայացնելու համար, այս մասին, վոր 19. (դիմումության կամ հատում կոչումը) ընկ. անունը, ազգանունը և հայրանունը) 19.թ. ամսից, բացառությամբ ծառայության տարիների համար արվող տոկոսային հավելումներից, պարենքաժմի փոխարեն վճարվող փոխհատուցումներից և հեռավոր վայրերում ծառայելու համար վճարվող կենցաղային գրամներից ոռջիկ և ստանում ամսական 17-ի «ԲԳԿ» և նրանության համար 1936 թ. ապրիլի 17-ի «ԲԳԿ» և նրանության համար 1936 թ.

բնակվարձի կոպարների մասին» վորոշմամբ սահմանված
կոպարներով վճարելու (ԽՍՀՄ Որ. Ժող., 1936 թ., № 21,
Հոդ. 186):

Տեղեկանքը տվող պաշտոնատար ամփ
ստորագրությունը

Հիմնարկության կամ զորամասի կնիքը

ՀԱՎԵԼՎԱԾ № 10

Զինծառայության կադրային հրամանատարական և պետ-
կազմի և Ներքործողկամատի պետական անվտանգության
գլխավոր վարչության պետկազմի անձների
բնակարանային վարձի դրույժի

ԱԴՅՈՒՄԱԿ

Աժամական աշխատավարձի չափը	Մեկ քառակուսի մետրի բնակվարձի դրույժը
Մինչև 300 ռուբլ	30 կոպեկ
301 > 350 >	35 >
351 > 400 >	40 >
401 > 450 >	45 >
451 > 500 >	50 >
501 > 550 >	55 >
551 > 600 >	60 >
601 > 650 >	65 >
651 > 700 >	70 >
701 > 750 >	75 >
751 > և ավել	80 >

13. ԲԳԿԲ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿՑՈՒԴ ՍՏԵՂՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ ժողկոմլորի 1938 թ. ոգոստոսի 20-ի
վորոշումը (Արձանագրություն № 28, կետ 16)

Զորամասերի հրամ-քաղաքական կազմին բնակելի տա-
րածությամբ ապահովելու նպատակով Հայկական ԽՍՀ Ժո-
ղովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշում ե՝

Յերելան և Լենինական քաղաքների քաղինորհուրդների,
այլ և ժողկոմատների կազմակերպությունների կառուցած
նոր բնակելի տներում ամբողջ բնակելի տարածության
10%-անոց ֆոնդ զատել և հատկացնել բանակին:

14. ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱ-
ՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԵՐԻ
ԲՆԱԿԱՐԱՆԱՎԱՐՉԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմլորի 1937 թ.
սեպտեմբերի 27-ի վորոշումը
(ԽՍՀՄ Որ. Ժող., 1937 թ., № 65, Հոդ. 290)

ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողո-
վրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում՝ են.

1. Տարածել ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմի 1936 թ.
ապրիլի 17-ի՝ «ԲԳԿԲ, ԽՍՀՄ-ի Ներքործժողկո-
մատի սահմանային և ներքին պահպանության կադրային
հրամանատարական ու պետկազմի, գերակետիկ ծառայու-
թյան կադրային կրտսեր հրամանատարական ու պետկազմի
և գերակետիկ ծառայության կադրային շարժային կազմի
զինվորական ծառայողների բնակարանավարձի դրույժների
մասին» վորոշումը (ԽՍՀՄ Որ. Ժող., 1936 թ., № 21, Հոդ.
186) Բանվորա-գյուղացիական Միլիցիայի պետկազմի այն
անձերի վրա, վորոնք Բանվորա-գյուղացիական Միլիցիա-
յում հատուկ կոչումներ են ստացել:

2. Համաձայն այս վորոշման 1-ի հոդվածի, ԽՍՀՄ-ի
Կենտգործկոմի և Ժողկոմի 1936 թ. ապրիլի 17-ի
մատնանշված վորոշման մեջ մտցնել հետևյալ փոփոխում-
ները.

ա) 1-ին հոդվածը չարագրել հետևյալ խմբագրու-
թյամբ.

«1. Բանվորա-գյուղացիական կարմիր Բանակի, ԽՍՀ
Միլության Ներքործժողկոմատի սահմանային և ներքին
պահպանության կադրային հրամանատարական և պետկազ-
մի զինվորական ծառայողների, ինչպես և ԽՍՀ Միլության

Ներքործքողկոմատի պետական անվտանգության Գլխավոր վարչության և Բանվորա-գյուղացիական Միլիցիայի պետակազմին պատկանող անձերի համար, վորոնք ստացել են հատուկ կոչումներ, սահմանել սրան կից աղյուսակում նշշված բնակարանավարձի դրույքները»:

բ) 4-րդ հոդվածում «Բանվորա-գյուղացիական Միլիցիայի» բառերից հետո մտցնել «բացի պետկազմին պատկանող այն անձերից, վորոնք ստացել են հատուկ կոչումներ» բառերը:

15. ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎՈՐՆԵՐԻՆ, ՆՄԱՆՍՊԵՍ ՅԵՎ ՆԿԱՐԻՉՆԵՐԻՆ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԻՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՎՈՐՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

ՀԱՎԱՍԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմինորի 1927 թ. սեպտեմբերի 30-ի վորոշումը (ԽՍՀՄ Որ. Ժող., 1927 թ., № 58, հոդ. 580)

Գրական աշխատանքի գործավորների, նմանապես և նկարիչների, քանդակագործների և գիտական գործավորների բնակարանային պայմանները թեթելացնելու նպատակով ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1. ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1926 թվի հունիսի 4-ի բնակարանային վարձի և քաղաքային բնակավայրերում բնակարանից ողակնելը կարգավորելու միջոցների մասին կայացրած վորոշման (ԽՍՀ Միության Որ. Ժող., 1926 թվի, № 44, հոդ. 312) 7 հոդ. ծանոթությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Ծանօթություն. — Միութենական հանրապետությունների որենսգրությամբ ազատ զբաղմունք ունեցող անձերի առանձին կատեգորիաների համար կարող և սահմանվել բնակելի շինությունների արտոնյալ վճարքը: Գրական աշխատանքի գործավորները, վո-

րոնց համար գրական վաստակը հանդիսանում է ապրուստի միջոցների հիմնական աղբյուր, նմանապես և նկարիչները, քանդակագործները և գիտական գործադիրները, բնակելի շինությունների վճարի վերաբերյալ հավասարեցվում են բանվորներին ու ծառայողներին»:

2. Առաջարկել միութենական հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին մտցնել հանրապետական որենսգրության մեջ այն փոփոխությունները, վորոնք բարեկան են այս վորոշումից:

16. ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՎ ԲՈՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԱՎԵԼՑՈՒՅԻ ԱՐՏՈՂՅԱԼ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ:

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմինորի 1937 թ. սեպտեմբերի 29 վորոշումը (ԽՍՀՄ Որ. Ժող., 1927 թ., № 58, հոդ. 581) :

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդությունը վորոշում են՝ Առաջարկել միութենական հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին՝ նկարիչների և քանդակագործների կողմից հատուկ բանվորական արհեստանոցների համար բռնված տարածության ավելցուկի վճարի արտոնյալ նորմաներ սահմանել:

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17. ՀԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐԻ ԿՈՄԻՏԵՑԵՑԻ ՆԱԽԱԳԱՀԱՀՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԱՐՏՈՂՅԱԼԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1928 թ. հունիսի 13-ին:

ՀԽՍՀ Որ. և Կարգ. Ժող., 1928 թ. բաժին I, № 11, հոդ. 114

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը վորոշում ե.

Բացի ԽՍՀՄ կենտրոնակոմի և ժողկոմինորհի 1927թ.
հուլիսի 27-ի «Աշխատանքի հերոսների մասին» վորոշումով
(ԽՍՀՄ Որ. ժող. —1927 թ., № 45, հոդ. 456) նախատես-
ված արտոնություններից, աշխատանքի հերոսներին վերա-
պահել հետևյալ արտոնությունները.

1. Աշխատանքի հերոսները, վորոնք վարձու աշխա-
տանքով զբաղված չեն և բացի կենսաթոշակից վոչ մի յե-
կամուտ չունեն, իրենց բոնած բնակարանի համար վարձ են
վճարում բանվորների ու ծառայողների համար սահմանված
կոպարների 50%-ի չափով (ՀԽՍՀ կենտրոնակոմի և ժող-
կոմինորհի 1928 թ. մարտի 10-ի՝ «Քաղաքներում, գավա-
ռային ու գավառակային կենտրոններում և բանվորական
ավաններում սահմանվող բնակարանային վարձի մասին»
վորոշումը Որ. ժող., 1928 թ., № 4, հոդ. 31):

Ծանոթություն. —Վարձու աշխատանքով զբաղ-
ված՝ աշխատանքի հերոսների բնակարանավարձը
հաշվվում է նրանց կենսաթոշակի և աշխատավարձի
ընդհանուր գումարից, բանվորների ու ծառայողների
համար սահմանված կոպարների 50%-ի չափով:

2. Գոյություն ունեցող կանոնների հիման վրա վար-
չական կարգով վտարելու բոլոր գեղքերում աշխատանքի
հերոսներին արամադրվում են բնակարան և փոխադրական
միջոցներ:

3-րդ հոգվածը վերացված է ՀԽՍՀ կենտրոնակոմի Նա-
խագահության 1936 թ. հուլիսի 13-ի վորոշմամբ: (ՀԽՍՀ
Որ. ժող., 1936 թ., № 4, հոդ. 24):

4. Աշխատանքի հերոսների վրա տարածվում են ՀԽՍՀ
որենադրությամբ բանվորներին վերապահված բոլոր արտո-
նությունները:

5. Այս վորոշումը տարածվում է ԽՍՀՄ կենտրոնակոմի
և ժողկոմինորհի 1927 թ. հուլիսի 27-ի «Աշխատանքի հե-
րոսների մասին» և Անդրկովկասյան կենտրոնակոմի 1927
թվի հոկտեմբերի 25-ի «Աշխատանքի հերոսների մասին»
(ԱԽՖԽՀ Որ. ժող. —1927 թ., № 20, հոդ. 230) վորոշում-
ներով աշխատանքի հերոս ճանաչված անձերի վրա:

18. «ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՐՈՇ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵԹԻՆ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

[«Հայկական ԽՍՀ Աշխատանքի Դրոշ» շքանշանի կանոնա-
դրությունից բաղկած (հաստատված ՀԽՍՀ Կենտրոնակոմի
1938 թվի մարտի 20-ի վորոշմամբ)]

14. «Հայկական ԽՍՀ Աշխատանքի Դրոշ» շքանշանով
պարգևատրվածը Հայկական ԽՍՀ սահմաններում իր զբա-
ղեցրած բնակարանի տարածության համար բնակարանա-
վարձ վճարում է 10-ից մինչև 50% դեղչով: Զեղչի տոկոսը
վորոշում են տեղական խորհուրդները պարգևատրվածի յե-
կամտի համաձայն: Բնակելի տարածության ավելցուկի
համար պարգևատրվածը վճարում է միապատիկ չափով:

15. Այս կանոնադրության 14-րդ հոդ. սահմանված ար-
տոնությունները, պարգևատրվածի մահվան դեպքում, տա-
րածվում են նրա ընտանիքի անդամների՝ ամուսնու, ան-
չափահաս յերեխաների և անաշխատունակ խնամարկյանե-
րի վրա:

19. ՊԵՏԱԿԱՆ ԹՈՇԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՅԻՆ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ Կենտրոնակոմի և ժողկոմինորհի 1930 թ. հունվարի
7-ի վորոշումը (ՀԽՍՀ Որ. ժող., 1930 թ., № 1, հոդ. 14)

Կենտրոնական Գործադիր կոմիտեն և ժողովրդական
կոմիսարների խորհուրդը վորոշում են՝

1. Գետական թոշակառուները շարունակում են ոգտվել
այն բոլոր բնակարանային արտոնություններից, վոր-
ոշանք վայելում ելին իրենց ծառայության վերջին վայ-
րում՝ համաձայն 1928 թ. մարտի 10-ի բնակարանային
որենքի:

20. ՔԱՂԱՔԱՑՆԱՑՎԱԾ ՅԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՏՆԵՐԻ
ՄԵԶ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՆԱԾ ՇԵՆՔԵՐԻ
ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

(ՀԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐԻ 1927 թ. սեպտեմբերի 13-ի
վորոշումը)

Պետական և հասարակական հիմնարկությունների բըռ-
նած քաղաքայնացված և մասնավոր շենքերն իրենց յեկա-
մուտներով պահելու և այդ շենքերի վարձի վիրաբերյալ
հարցը կանոնավորելու նպատակով՝ Ժողովրդական Կոմի-
սարների Խորհուրդը վորոշում է.

1. Քաղաքայնացված, ինչպես նաև մասնավոր տներում
գրասենյակների և վոչ առևտրական ու վոչ արդյունաբե-
րական բնույթի այլ կարիքների համար բոնած շենքերի
վարձավճարի կոպարները սահմանում են տեղական գործա-
զիր կոմիտեները, հաշվի առնելով տեղական պայմանները
հետեւյալ չափով.

ա) պետական և տեղական բյուջեյով պահվող հիմնար-
կությունների պրոֆեսիոնալ, կուսակցական և այլ հասա-
րակական կազմակերպությունների համար յուրաքանչյուր
ամիս 27-ից մինչև 40 կոպեկ ամեն մի քառակուսի մետր
տարածության համար.

բ) տնտեսավարական հիմունքներով պահվող պետ.
հիմնարկությունների և ձեռնարկությունների, ինչպես և
կոռպերատիվ կազմակերպությունների համար ամիսը 56-ից
մինչև 67 կոպ. ամեն մի քառակուսի մետր տարածության
համար.

գ) շահագիտական նպատակներ չհետապնդող մասնավոր
հիմնարկությունների և ընկերությունների համար վարձա-
վճարի կոպարները սահմանվում են ամիսը մեկ ուռութիւն յու-
րաքանչյուր քառակուսի մետր տարածության համար.

դ) մնացած բոլոր հիմնարկությունների, ձեռնարկու-
թյունների և կազմակերպությունների համար վարձավճարը
սահմանվում է փոխադարձ համաձայնությամբ, բայց վոչ
պակաս այս հոդվածի «դ» կետում հիշատակված կոպարից
(1 ռուբլի):

2. Այս դեպքում, յերբ հիմնարկությունը բոնում է
ամբողջ շենքը և շենքի նորոգությունն ու պահպանության
ծախքերը կատարում են իր հաշվով, վարձավճարը սահման-
վում է՝

ա) պետական կամ տեղական բյուջեյով պահվող հիմ-
նարկությունների, պրոֆեսիոնալ, կուսակցական և այլ հա-
սարակական կազմակերպությունների համար շենքի շի-
ջուցման արժեքի չափով.

բ) մնացավարական հիմունքներով պահվող պետա-
կան հիմնարկությունների և ձեռնարկությունների, ինչպես
նաև կոռպերատիվ կազմակերպությունների համար շիջուց-
ման արժեքի չափով և կառուցման համար ծախսված կա-
պիտակի 3%-ից վոչ ավելի.

դ) մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկու-
թյունների համար շիջուցման արժեքի չափով և կառուցման
8%-ից վոչ ավելի:

Ծանրքություն.—Քարե շենքերի համար շիջու-
ցումը տարեկան հաշվվում է նրանց արժեքի մի առ-
կոսի չափով, փայտե և խառն շենքերի համար՝ յեր-
կու տոկոսի չափով:

3. Գործկոմների տրամադրության տակ յեղած վոչ-
բնակելի շենքերը (խանութներ, առևտրական գրասենյակ-
ներ, պահեստներ և այլն) պետական մարմիններին, արհես-
տակցական, կուսակցական և կոռպերատիվ կազմակերպու-
թյուններին, ինչպես նաև մասնավոր միություններին ու
անձերին վարձով տալու պայմաններն ու կարգը սահման-
վում են գործկոմների նախագահությունների առանձին վո-
րոշումներով՝ Անդրառեսրի ժողկոմատի Խորհրդային
Հայաստանի լրազնի վարչության ներկայացնեցիչների
մասնակցությամբ:

4. Այս վորոշմամբ սահմանված վարձավճարի մեջ չե
մտնում հողային ռենտայի վճարը:

5. Աշխատանքի պալատների քաղաքայնացված տնե-
րում բոնած շենքերից վարձ չի գանձվում. նրանց բարե-
կարգ վիճակում պահելու պարտականությունը դրվում է
այն որդանների վրա, վորոնց անորինության տակ դըտ-
նվում են այդպիսիները:

6. Այս վորոշման 1-ին հոդվածով սահմանված վարձական կոպարները կիրարկլում են միայն այն տարածության համար, լորը բռնված է 3,5 քառակուսի մետրի (7 քառ. արշին) սահմաններում՝ հիմնարկության մեջ փառարեն աշխատող յուրաքանչյուր աշխատակցի համար:

7. Պետական, բուժական, հաշմանդամային, դպրոցական և կուլտուր-կրթական հիմնարկությունների, այլ և այնպիսի հիմնարկությունների կողմից բռնված շենքերի համար, ինչպիսիք են գատական նիստերի դահլիճները, լաբորատորիանները, գործարանները և այլն, վարձավճարը գանձվում է 1-ին հոդվածի «ա» կետով սահմանված նորմայով, նրանց կողմից փաստորեն բռնված տարածության համար:

8. Յեթե տարածությունն ավելի յէ, քան այդ սահմանված է ոգտագործման նորմաների 6-րդ հոդվածով, այդ դեպքում հիմնարկությունները վճարում են նրանց համար սահմանված կոպարների մեկ ու կես անգամի չափով, յեթե այդ ավելորդ տարածությունը կարող է տեխնիկակես անջատվել:

Մանրություն. —Պետական և տեղական բյուջեով պահպաղ հիմնարկությունների, ինչպես և պրոֆեսիոնալ, կուսակցական և այլ հասարակական կազմակերպությունների պաշտոնատար անձերի առանձնասինյակների վարձը վճարվում է 1-ին հոդվածի «ա» կետով սահմանված կոպարներով, անկախ նրանց բռնած տարածությունից:

9. Պարտավորեցնել գերատեսչություններին՝ մտցնել իրենց նախահաշիվների մեջ հատկացումներ իրենց բռնած շենքերի վարձի համար, այս վորոշման հիմունքներով:

10. Տնտեսավարական հիմունքներով պահպաղ հիմնարկությունները, կոռպերատիվ կազմակերպությունները, պետական և տեղական բյուջեով պահպաղ հիմնարկությունները, ինչպես և պրոֆեսիոնալ ու կուսակցական և այլ հասարակական կազմակերպությունները իրենց բռնած շենքերի վարձը վճարում են 1927 թ. հոկտեմբերի 1-ից:

11. Հիմնարկությունների կողմից մինչեւ այս վորոշման

հրապարակվելը շենքերի մասին կնքած պայմանագրերի այն մասը, վորը վերաբերում է շենքի վարձի չափին, յենթակայի կոփոխության՝ համաձայն այս վորոշման:

12. Հանձնարարել ներքործողկոմատին յերկու շարաթվա ընթացքում հրատարակել հրահանդ այս վորոշումը կիրառելու մասին: (Որ. և Կարդ. Ժող., 1927 թ., № 15, հոդ. 101):

21. ԺՈՂԿՈՄԽՈՐԴԻ 1937 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-ի «ՔԱՂԱՔԱՅՆԱՅՎԱԾՎԱԾՎԱՐ» 3ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՏՆԵՐԻ ՄԵՋ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՆԱԾ ՇԵՆՔԵՐԻ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՎՈՐՈՇՈՒՄԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ՎՐԱ ՏԱՐՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՅԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ՎՐԱ ՏԱՐՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՀԽՍՀ ԺԿԽ 1937 թ. սեպտեմբերի 13-ի վորոշումը
(ՀԽՍՀ Որ. Ժող., 1927 թ. № 15, հոդ., 102)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՐԵՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ վորոշում Է՝
ԺՈՂԿՈՄԽՈՐԴԻ 1927 թ. սեպտեմբերի 13-ի «ՔԱՂԱՔԱՔԱՅ-
ՆԱԳՎԱԾ և մասնավոր տների մեջ հիմնարկությունների
բռնած շենքերի վարձի մասին» վորոշումը («Խորհ. Հայա-
տան» 1927 թ. նոյեմբերի 1-ին № 250) տարածել նաև այն
շենքերի վրա, վորոնք պատկանում են զինվորական գերա-
տեսչությանը և բռնված են այլ գերատեսչությունների
կողմից, ընդունելով, լորպես նորմա, մեկ քառակուսի
մետր տարածության համար 27-ից մինչեւ 40 կոպեկ վար-
ձավճար:

22. ՔԱՂԱՔԱՅՆԱՅՎԱԾՎԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՑԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԿԱՌՈՒՅՑՎԱԾՎԱԾ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի
1928 թ. հուլիսի 13-ի վորոշումը

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողո-
վրդական Կոմիտարեների Խորհրդի 1928 թ. հունվարի 4-ի

«Բնակարանային քաղաքականության մասին» վորոշման 11 հոդվածի (ԽՍՀՄ Որ. ժող., 1928 թ., № 6, հոդ. 49) հիման վրա կենտրոնական Գործադիր Կոմիտեն և ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը վորոշում են: —

Քաղաքային խորհուրդների, տրանսպորտի և արդյունաբերական ձեռնարկությունների կողմից՝ սկսած 1924 թ. կառուցված տների համար բնակարանավարձ և սահմանվում ՀԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և ժողովրդական Կոմիտարների Խորհուրդի 1928 թ. մարտի 10-ի «Քաղաքներում, գավառային ու գավառակային կենտրոններում և բանլորական ավաններում սահմանվող բնակարանային վարձի մասին» վորոշման (Որ. և Կարգ. ժող., 1928 թ., № 4, հոդ. 31) համաձայն, ավելացնելով սահմանված կոպարները 25%-ով: (Որ. և Կարգ. ժող., 1928 թվի, № 11, հոդ. 113):

23. ՀԱՅԹԵՏՔԱՂԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ
ՀՐԱՄԿԱԶՄԻՆ ՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1930 թվի մայիսի 31-ին

ՀԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի 1930 թ. մայիսի 31-ի վորոշումը

Անդրկենտդործկոմի և ԱԽՖՍՀ ժողկոմի խորհի 1929 թ. ոգոստոսի 19-ի «Անդրգետքաղվարչության մարմինների ու զորամասերի հրամկազմին ու աշխատակիցներին բնակարանով ապահովելու մասին» վորոշման համաձայն Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը վորոշում են: —

1. Պարտավորեցնել տեղական խորհուրդներին Հայետքաղվարչության մարմինների անունով ամրացնել այն բնակարաններն ու առանձին սենյակները, վոր Հայպետքաղվարչության մարմինների և զորամասերի հրամկազմն ու աշխատակիցները զբաղեցնում են թե՛ կոմունալ մարմինների անմիջական ոգտագործության տակ գտնվող քաղա-

քայնացված բնակելի շենքերում¹ և թե՛ մասնավոր տներում՝ որենքով սահմանված կարգով կոմունալ ֆոնդին հատկացված բնակելի շենքերի 1/3-ի հաշվին:

2. Նախորդ հոգվածում մատնանշված բնակարաններից և առանձին սենյակներից կազմել հատուկ ֆոնդ Հայպետքաղվարչության մարմինների վարչա-գործառնական կազմի և հրամկազմի ու նրանց ընտանիքների բնակարանային կարիքները բավարարելու համար:

3. 2-րդ հոդ. մատնանշված Հայպետքաղվարչության բնակարանային ֆոնդից ազատվող բնակարաններն ու առանձին սենյակները պետք է ոգտագործի Հայպետքաղվարչությունն իր աշխատակիցների և զորամասերի հրամկազմի կարիքները բավարարելու համար՝ բնակարանն ազատվելուց յերեք օրվա ընթացքում:

Այդ ժամանակամիջոցը լրանալուց հետո Հայպետքաղվարչության կողմից չողագործված՝ նրա անունով ամրացված բնակարաններն ու սենյակներն անցնում են տեղական խորհուրդների տրամադրության տակ և բաշխվում են նրանց հայեցողությամբ, ընդհանուր կոմունալ ֆոնդի ոգտագործման կարգով:

(ՀԽՍՀ Որ. և Կարգ. ժող., 1929 թ. 2-րդ բաժին, № 3, հոդ. 32) — ՀԽՍՀ Որ. և Կարգ. ժող. 1930 թ., № 8, հոդ. 141):

24. ՇԵՆՔԵՐԻ ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐԻ, ԲՆԱԿԱՐԱՆԱՎԱՐՁԻ
ՅԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ
ԺԱՄԿԵՑԱՆՑՄԱՆ ՏՈՒՅՖԻ ԶԱՓԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ ժողկոմի 1938 թ. հունիսի 3-ի վորոշումը
(Արձանագրություն № 22, կետ 11)

ԻՍՀ Միության կեկ և ժկի 1937 թ. սեպտեմբերի 14-ի «Հարկերի և վոչ հարկային վճարումների գանձման կանոնադրության 11-րդ հոդվածը փոփոխելու մասին» (ԽՍՀՄ

¹ «Թե՛ բնակարանային վարձակալական կոոպերատիվ ընկերություններին պատկանող շենքերում» պարբերությունը հանված և ՀԽՍՀ կենտրոնական գործադիր կոմիտեի և ժողովրդակոմի 1938 թ. ապրիլի 27-ի վորոշմաբ (ՀԽՍՀ Որ. և Կարգ. ժողովածու 1938 թ. № 4, հոդ. 14):

Որ. Ժող., 1937 թ., № 10, հոդ. 259, ԽՍՀ Միության ժկի 1937 թ. սեպտեմբերի 14-ի «Տնտեսական մարմինների վճարումների ժամկետանցման, տույժի չափի մասին») (ԽՍՀՄ Որ. Ժող., 1937 թ. № 66, հոդ. 260) վորոշումների համաձայն չայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Սահմանել, վոր կոմունալ ծառայությունների, բնակելի և վոչ բնակելի տների և չենքերի վարձի և այլ վճարումների ժամկետանցման դեպքում դանձվում ե տույժ յուրաքանչյուր ժամկետանց որվա համար հետեւյալ չափով.

ա) պետական, կոռագերատիլ և հասարակական ձեռնարկություններից ու կազմակերպություններից . . 0,05% :

բ) առանձին քաղաքացիներից 0,1% :

2. Արգելել վճարումների ժամկետանցման համար պայմանագրում տուժանք սահմանելը 1-ին հոդ. նշված տույժի փոխարեն կամ տույժի հետ միասին:

3. Այս վորոշմանը.

ա) վերացնել ՀԽՍՀ ժողկոմիսորհի 1932 թ. ապրիլի 16-ի «Կոմունալ ծառայությունների վերաբերյալ հաշիվները վճարելու կարգի և ժամկետների մասին» վորոշման 6-րդ հոդվածը (Որ. Ժող., 1932 թ., № 2, հոդ. 62).

բ) խնդրել կենտողրծկոմին վերացնել նաև ՀԽՍՀ կենտդործկոմի և ժողկոմիսորհի 1921 թ. սեպտեմբերի 14-ի «Տեղական խորհուրդների տրանսպորտային և արդյունաբերական ձեռնարկություններին պատկանող չենքերի բնակարանավարձի ժամկետանցման տույժի մասին» վորոշումը (Որ. Ժող., 1931 թ., № 5, հոդ. 191/9):

ՅԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՊԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

25. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՑԻՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ կդկ և ժկի 1933 թ. մարտի 27-ի վորոշումը¹
(ԽՍՀՄ Որ. Ժող., 1933 թ., № 23, հոդ. 128)

Գիտական աշխատողներին առաջել բեղմնավոր գիտական գործունեյության հանրավորություն ընձեռող բնակարանային պայմաններ ապահովելու համար ԽՍՀՄ կդկ և ժկի վորոշում էն՝

1. Առաջարկել միութենական հանրապետությունների կառավարություններին մեկ ամսյա ժամկետում ընդհանուր որենքներ հրատարակել գիտական աշխատողների բնակարանային իրավունքների մասին, նախատեսելով նրանց մեջ, մասնավորապես, հետեւյալ արտօնությունները.

ա) գիտական աշխատողներն իրավունք ունեն լրացուցիչ առանձին սենյակ ունենալու պարագամունքների համար, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ լրացուցիչ տարածություն, վոչ պակաս 20 քառ. մետրի չափով.

բ) գիտական աշխատողների գրակեցրած ամբողջ բնակելի տարածությունը (հիմնական և լրացուցիչ), անկախ նրա չափերից, հատուցվում ե սովորական չափով.

¹ ԽՍՀՄ կդկ և ժկի 1937 թ. հոկտեմբերի 17-ի վորոշման կապակցությամբ (ԽՍՀՄ Որ. Ժող., 1937 թ. № 69, հոդ. 314) այդ վորոշման մասցած մասը վերացված է (ԽՍՀՄ Վորոշումների Ժող. 1938 թ. № 7. հոդ. 45):

ե) Մահացած գիտական աշխատողի ընտանիքը յերեք ամսվա ընթացքում պահպանում է իր իրավունքը նախկին ամբողջ բնակելի տարածության, նկատմամբ (Հիմնական և լրացուցիչ), վճարելով նրա համար նույն ժամանակամիջոցում սովորական բնակվարձի չափով:

3. Պարտավորեցնել դատախազության մարմիններին ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պաշտպանելու գիտական աշխատողների բնակարանային իրավունքները, անշեղորեն դատական պատասխանատվության յենթարկելով այդ իրավունքները խախտողներին:

26. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԽԱՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1933 թ. հունիսի 2-ի վորոշումը

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. մարտի 27-ի «Գիտական աշխատողների բնակարանային պայմանները բարելավելու մասին» վորոշման հիման վրա Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում էն:

1. Իրավունք վերապահել գիտական աշխատողներին ունենալու իրենց պարագմունքների համար լրացուցիչ սենյակ, իսկ սենյակ չլինելու դեպքում, առնվազն 20 քառ. մետր լրացուցիչ բնակել տարածություն:

[2 հոդվածը վերացված է ՀԽԱՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1938 թ. ապրիլի 27-ի վորոշմամբ (Որ. Ժող., 1938 թ., № 4, հոդ. 14):]

3. Գիտական աշխատողի պաղեցրած թե՛ հիմնական և թե՛ լրացուցիչ բնակարանային տարածության համար, անկախ նրա չափից, վճարվում է սովորական նորմաներով: (Լրացուցիչ մասը յենթակա չել կրկնավճարի):

[4-րդ, 5-րդ, 6-րդ, հոդ. վերացված են ՀԽԱՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1938 թ. ապրիլի 27-ի վորոշմամբ (Որ. Ժող., 1938 թ., № 4, հոդ. 14):]

7. Մահացած գիտական աշխատողի ընտանիքին իրա-

վունք է վերապահվում Յ ամսվա ընթացքում ոգտագործել գիտական աշխատողի ամբողջ թե՛ հիմնական և թե՛ լրացուցիչ բնակարանային տարածությունը՝ վճարելով բնակարանի վարձը սովորական նորմաներով:

[8-րդ հոդվածը վերացված է ՀԽԱՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1938 թ. ապրիլի 27-ի վորոշմամբ (Որ. Ժող., 1938 թ., № 4, հոդ. 14):]

9. Առաջարկել ՀԽԱՀ Կոմբանկին և բնակարանային շենաբարական կոոպերացիայի կենտրոնական վարչությանը՝ 1934 թ. պլանով նախատեսել գիտական աշխատողների համար կոոպերատիվ շենքերի կառուցում և միջնորդություն հարուցել կենտրոնական Կոմունալ բանկի առաջ՝ համապատասխան վարկեր տրամադրելու:

10. Առաջարկել գատախազության մարմիններին՝ ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները գիտական աշխատողների իրավունքները պաշտպանելու համար: (Որ. Կարգ. Ժող., 1933 թ., № 2, հոդ. 53):

27. ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱ-ՄԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1934 թ. հունվարի 13-ի վորոշումից
ՔԱՂՎԱԾՔ

(ԽՍՀՄ Որ. Ժող., 1934 թ., № 3, հոդ. 29)

13 հոդ.: Ասպիրանտները ոգտվում են գիտական աշխատողների համար սահմանված բոլոր արտոնություններից:

28. ԳՅՈՒՏԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:

Քաղվածք ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. ապրիլի 9-ի վորոշումից (ԽՍՀՄ Որ. Ժող., 1931 թ., № 31, հոդ. 181)

95. Ոգտակար գյուտերով իրենց ցույց տված գյուտարաններն ոգտվում են բնակարանային արտոնություններով գիտական աշխատողների հետ հավասար:

Հեռնարկություններում ու հիմնարկություններում՝ աշխատող ոգտակար գյուտերով իրենց ցույց տված գյուտաբարները, յեթե բնակելի տարածություն չունեն կամ բնակվում են անբավարար պայմաններում, իրավունք ունեն ավյալ ձեռնարկության կամ հիմնարկության բնակարանային ֆոնդից բնակելի տարածություն ստանալ առաջին հերթին:

Արդյունարերական կենտրոններում տեղական խորհուրդները գյուտաբարների համար վորոշ բնակելի տարածություն պետք է բրոնիայի յենթարկեն:

105. Այս հատվածում նշված արտոնություններից (93—104 հոդվածներ) ոգտվում են հեղինակի վկայական ունեցող այն գյուտաբարները, վորոնց գյուտերը փորձարկումից հետո ոգտակար են ճանաչված ԽՍՀ Միության ժողովրդական տնտեսության համար:

Տեխնիկական կատարելագործություններ առաջարկող անձերից նրանք, վորոնց առաջարկությունները խոչըն նշանակություն ունեն, արտօնություններից ոգտվում են գյուտաբարների հետ հավասար:

29. ԳՐՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. հուլիսի 7-ի վորշումը (ԽՍՀՄ Որ., 1933 թ., № 43, հոդ. 252)

Գրողների բնակարանային պայմանների առաջովման համար, վորը կտա նրանց ավելի բեղմնավոր գրական գործունեյության ճնարագործություն, ԽՍՀՄ կենագործկոմը և Ժողկոմխորհը վորոշում են՝

1. ԽՍՀՄ-ի Խորհրդային գրողների միության անդամներին իրենց բնակարանային իրավունքների վերաբերյալ հավասարեցնել գիտական աշխատողներին, տարածելով նրանց վրա ԽՍՀՄ կական և ժկի 1933 թ. մարտի 17-ի «Գիտական աշխատողների բնակարանային պայմանների բարելավման մասին» վորոշման ներդործությունը: (ԽՍՀՄ Որ. Ժող., 1933 թ., № 23, հոդ. 128):

30. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ժկի-ի 1933 թ. հոկտեմբերի 3-ի վորշումը (ԽՍՀՄ Որ. Ժող., 1933 թ., № 62, հոդ. 373)

ԽՍՀՄ կական և ժկի 1933 թ. հուլիսի 7-ի «Գրողների բնակարանային պայմանների բարելավման մասին» վորոշման (ԽՍՀՄ Որ. Ժող., 1933 թ., № 43, հոդ. 252) ներդործությունը տարածել հանրապետական, յերկրամասային և մարզային խորհրդային կոմպոզիտորների միությունների անդամների վրա, վորոնք հանրապետական կուսաքաղաքացիություններու յեն գտնվում:

31. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1933 թ. դեկտեմբերի 14-ի վորշումը (ՀԽՍՀ Որ. Ժող., 1933 թ., № 7, հոդ. 114)

ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1933 թ. հուլիսի 7-ի «Գրողների բնակարանային պայմանները բարելավելու մասին» (Որ. և Կարգ. Ժող., 1933 թ., № 43, հոդ. 252) և ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1933 թ. հոկտեմբերի 2-ին՝ «Խորհրդային կոմպոզիտորների բնակարանային պայմանները բարելավելու մասին» (Որ. և Կարգ. Ժող., 1933 թ., № 62, հոդ. 373) վորոշումների հիման վրա, Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդը վորոշում են՝

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1933 թ. հուլիսի 2-ի «Գիտական աշխատավորների բնակարանային պայմանները բարելավելու մասին» վորոշումը հաջողակա է:

լու մասին» վորոշումն (Որ. և Կարգ. Ժող., 1933 թ., № 2, հոդ. 53) ամբողջությամբ տարածել նաև ՀԽՍՀ խոր-հըրդային գրողների և կոմպոզիտորների միությունների անդամների վրա:

ԶՈՐՈՈՐԴ ՀԱՏՎԱՅԻ

ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

32. ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ՅԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ կոմունալ տնտեսության ժողկումատի և Արդարադա-
տության ժողկումատի 1940 թ. ապրիլի 17-ի հրահանգը

1. Բնակելի չենքերի վարձակալներն իրավունք ունեն
փոխանակել իրար հետ իրենց ողտագործման տակ գտնվող
բնակելի չենքերը, փոխանցելով իրար այն իրավունքներն ու
պարտականությունները, վորոնք բղխում են այդ չենքերի
վարձակալության մասին վարձատունների հետ կնքած պայ-
մանագրերից:

Փոխանակումը կարող է տեղի ունենալ յերկու-յերեք և
ավելի բնակ-չենքերի վարձակալների միջև:

2. Բնակելի չենքեր փոխանակելու իրավունք ունեն՝
ա) նրանք, ովքեր չենք են վարձել տեղական խոր-
հուրդների, պետական հյունարկությունների, ձեռնարկու-
թյունների և հասարակական կազմակերպությունների տնե-
րում, նաև այն տներում, վորոնք պատկանում են առան-
ձին քաղաքացիներին կատուցման իրավունքի կամ անձնա-
կան սեփականության իրավունքի հիման վրա:

բ) այն անձերը, վորոնք վարձել են տեղական խոր-
հուրդներին պատկանող փոքր տներ (բնակելի տարածու-
թյամբ՝ վոչ ավելի քան 60 քմ.) այն պայմանով, վոր վար-
ձակալական պայմանագրով՝ նախատեսված իրավունքները
և պարտականությունները կարող են փոխանցվել:

3. Բնակելի չենքերի փոխանակման իրավունք չունեն՝

ա) ժամանակավոր բնակիչները և յենթավարձակալները.

բ) տնային աշխատողները, վորոնք բնակելի տարածություն են ստացել միայն աշխատանքային պայմանագրի գործողության ժամանակի սահմանում.

գ) այն անձերը, վորոնք ապրում են հյուրանոցներում, պետական հիմնարկների, ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հանրակացարաններում.

դ) վարձակալներն այն ամառանոցների, վորոնք մըտնում են տեղական խորհուրդների, պետհիմնարկների, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների ֆոնդի մեջ.

ե) ամառանոցների անձնական սեփականատերերը և կառուցղներն ու այդ ամառանոցների վարձակալները:

4. Զի թույլատրվում վարձակալին իր զբաղեցրած բնակարանը փոխանակելու,

ա) յեթե վարձակալը, վորը բնակարան է ստացել աշխատանքային պայմանագրի համաձայն պետական հիմնարկի, ձեռնարկության և հասարակական կազմակերպության տան մեջ, կամ նույն է փոխանակել բնակարանն այնպիսի անձի հետ, վորը չի աշխատում նույն հիմնարկում, ձեռնարկության կամ կազմակերպության մեջ.

բ) յեթե բնակչենքի վարձակալը, արձակված լինելով աշխատանքից, յենթակա յե վտարման պետական հիմնարկի, ձեռնարկության և հասարակական կազմակերպության տնից առանց այլ բնակարան ստանալու.

գ) յեթե փոխանակող կողմերից մեկը իրավական անձ է:

5. Բնակարանների փոխանակությունը կարող է տեղի ունենալ այն վարձակալների միջև, վորոնք ապրում են՝

ա) միևնույն տնային կառավարչության սահմաններում.

բ) զանազան տնային կառավարչության սահմաններում՝ միևնույն քաղաքի սահմաններում.

գ) այլ քաղաքներում, բանկորական և ամառանոցային ավաններում:

6. Փոխանակության որյեկտ կարող է լինել այնպիսի բնակարանը, վորը վորոշակի ու կոնկրետ եւ գտնվում է փոխանակող անձի ոգտադրժման տակ (ամբողջ սենյակը, կամ սենյակի վորոշ մասը):

7. Բնակելի տարածության փոխանակման ժամանակի պետք է լինի ընտանիքի մասին ապրող չափահատ անդամնությունը, նաև նրանը պարագաների գրավոր համաձայնությունը, նաև հաստացնուցից ժամանակավորապես բացակայողների համաձայնությունը (Յ ամսվա ընթացքում, բրոնյա լինելու դեպքում կամ ԲԳ Կարմիր Բանակում և ԲԳ Կարմիր Նավատորմում գտնվելու դեպքերում):

Սենյակի մի մասի, միջանցիկ սենյակի, կամ այնպիսի սենյակի, վորի մուտքն անցնում է այլ սենյակով, փոխանակում չի կարող տեղի ունենալ, յեթե չկա գրավոր համաձայնություն այն անձերի, վորոնք ապրում են վերև հիշված սենյակներում և չեն մասնակցում փոխանակման մեջ: Խնամակալության տակ գտնվող անձերի բնակելի տարածության փոխանակման գենքում պետք է լինի տեղական խնամակալական որդանի գրավոր համաձայնությունը:

8. Բնակտարածության փոխանակումը ձևակերպվում է՝

ա) տեղական խորհուրդների բնակարանային որդանների որդերներով, յեթե կողմերից վորեւե մեկն ապրում է տեղական խորհուրդների տանը և յեթե մնացած փոխանակող կողմերն ունեն գրավոր թույլտվություն համապատասխան կազմակերպություններից ու անձերից (Հավելված № 2):

բ) պետական հիմնարկների, ձեռնարկությունների ու հասարակական կազմակերպությունների գրավոր կարդագրություններով (որդերներով), յեթե բոլոր փոխանակող կողմերն ապրում են պետհիմնարկների, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների տներում ու ներկայացնում են գրավոր կարգադրություններ փոխանակման մասին (Հավելված № 1):

գ) սեփականատերերի, կառուցղների և վարձակալների:

բի գրավոր թույլտվությամբ, յեթե փոխանակվում է այնպիսի բնակելի տարածություն, վորը գտնվում է անձնական սեփականատերերի, կառուցողների կամ առանձին քաղաքացիների կողմից վարձված տներում:

9. Փոխանակման թույլտվությունը պետք է ներկայացնեն հետեւյալ անձերը.

ա) տեղական խորհուրդների տներում ապրողները՝ համապատասխան բնակվարչություններից կամ խորհուրդներից, կայազորներին ամրացված շենքերում ապրողները՝ համաձայն Միութենական ժողկոմիորհի 1938 թ. հոկտեմբերի 21-ի վորոշման, նույնպես բնակվարչություններից, ներկայացներով միաժամանակ համապատասխան կայազորների պետերից գրավոր թույլտվություն.

բ) պետական հիմնարկների, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների տներում ապրողները՝ վերջններիս ղեկավարներից.

գ) անձնական սեփականատերերի, կառուցողների կամ առանձին քաղաքացիների կողմից վարձված տներում ապրողները՝ այդ սեփականատերերից, կառուցողներից և վարձակալներից:

10. Բնակարանների վարձակալները փոխանակելու թույլտվություն ստանալու համար պարտավոր են ներկայացնել պատշաճ կերպով վավերացված անկետա (Հավելված № 2) և անհրաժեշտ դեպքերում այդ անկետայում հիշված լրացուցիչ փաստաթղթերը:

11. Բնակարանների փոխանակության որդերները տրվում են ըստ փոխանակուղների ընտրության այն տնային կառավարչությունից, վորի ուսունում գտնվում է փոխանակվող որդերաներից մեկն ու մեկը, կամ պետհիմնարկների, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների կողմից, յեթե փոխանակվող բնակարանները գտնվում են նրանց պատկանյալ տներում:

12. Տեղական խորհուրդների բնակվարչությունները, պետհիմնարկները, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունները, նմանապես անձնական սեփականատերերը, կառուցողները և տների վարձակալներն իրա-

վունք ունեն թույլ չտալ իրենց աներում գտնվող բնականների փոխանակությունը միայն հետեւյալ դեպքերում.

ա) յեթե փոխանակությունն ունի սպեկուլացիայի կամ կեղծ բնույթ.

բ) յեթե դատարանում հայց է հարուցված փոխանակվող չենքի վերաբերյալ պայմանագրի վերացման կամ նրա պայմանների փոփոխման մասին.

գ) յեթե փոխանակության հետեւանքով ստացվում է 5 քառ. մետրից պակաս մի անձի համար, մինչդեռ դրանից առաջ այդ նույն բնակարանում յուրաքանչյուր անձին ընկնում եր ավելի տարածություն.

դ) յեթե փոխանակության պարտք ունի բնակվարձի և տնային տնտեսության այլ վճարումների վերաբերյալ (մինչև այդ պարտքերի մարումը).

ե) յեթե վարձակալի փոխանակելի բնակարանում, վորը գտնվում է տեղական խորհրդի տանը, կա ավելորդ տարածություն, իբրև առանձին սենյակ և յենթակա յեթ բնակեցման համաձայն ԽՍՀ Միության կենտրոնական գործադրությունի և Ժողովորհի 1937 թ. հոկտեմբերի 17-ի վորոշման 27 հոդ. (Որ. Ժող., 1937 թ., № 69, հոդ. 314).

զ) յեթե այս հրահանգի 7-րդ պարագրաֆում հիշատակված անձերի համաձայնությունը չկա փոխանակության մասին:

13. Այս հրահանգի 2-րդ պարագրաֆում թված անձերը, վորոնք մերժում են ստանում իրենց զբաղեցրած բնակելի շենքերի փոխանակության մասին, կարող են բողոքարկել դատական կարգով:

ա) բնակվարչությունների մերժումը տեղական խորհուրդների տներում գտնվող բնակարանների փոխանակության վերաբերյալ.

բ) պետհիմնարկների, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների մերժումն այն բնակելի տարածության վերաբերյալ, վոր վարձակալներն ստացել են նրանց տներում վոչ աշխատանքային պայմանագրով, այլ փոխանակության, տեղափոխության և այլ կարգով.

գ) անձնական սեփականատերերի և կառուցողների մեր-

Ժումը նրանց տնելում զբաղեցրած բնակելի տարածության վերաբերյալ .

գ) այս Հրահնակի 7-րդ պարագագում հիշատեկած անձերի և իննամակալության որոշանի մերժումը:

14. Պետհիմնարկի, ձեռնարկության և հասարակական կազմակերպության մերժումն այնպիսի բնակելի տարածության վերաբերյալ, վորը վարձակալը զբաղեցրել է աշխատանքային պայմանագրի կապակցությամբ, կարելի յե բողոքարկել միայն վարչական կարգով այն որպանին, վորին յենթարկվում ե տնատիրությունը կամ տունը վարձող հիմնարկը, ձեռնարկությունը կամ կազմակերպությունը:

15. Փոխանակությունը կեղծ է համարվում, յեթե փոխանակության անվան տակ կատարվում է բնակելի տարածության գիշում։

16. Բնակարանի փոխանակության համար դրամ կամ այլ արժեքներ տալն ու ստանալը հետապնդվում է քրեական կարգով, բնչպես բնակարանների և սենյակների առ ու ծախս (Քր. Որ. 122 հոդ.) :

17. Բնակելի տարածության փոխանակությունն որինական ուժ և ստանում այն մոմենտից, յերբ փոխանակող կողմերն ստանում են այս հրահանգի 8-րդ պարագրաֆում հիշված փաստաթղթերը։ Այդ փաստաթղթերը չենթալ համարելի թույլատրում ե միայն դատական կարգով։

18. Φοινικανακοπείτησαν ορφεύρωντες τωαρτού ζωμαρι φοινικανακοπείτησαν ηρομέρητη φοιξ μή φεδωρι ψη φωνάδησηπειμ:

19. Փոխանակող կողմերը մինչև փաստորեն տեղափոխվելը պարտավոր են համապատասխան տնային կառավարություններին տալ ստացականով փոխանակության որդեռները, վորոնք հանդիսանում են միակ որինական հիմքը փոխանակած բնակարանն զբաղեցնելու համար:

Փոխանակողները նմանապես պարտավորվում են փոխանակվող տարածության վերաբերյալ պայմանագրի վրա մակագրություն կատարել այն մասին, վոր հանձնում և վերցնում են իրենց վրա այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, վորոնք բղխում են այդ պայմանագրերից :

Այս առնձեւը, վորոնք կղբաղեցնեն բնակելի տարածությունն առանց հիշված փաստաթղթերը տնային կառավարությանը ներկայացնելու, պետք է համարվեն ինքնագլուխ տեղափոխողներ և յենթարկվեն վտարման զբաղեցրած բնակարանից 7 որպա ընթացքում, սկսած տեղափոխության ժամանականությունը, իսկ այդ ժամկետն անցնելու դեպքում, դատավագույն առանց այլ բնակելի տարածություն տրամադրելու:

20. Տնային կառավարչությունները կամ համարակական լիան պետհիմնարկները, ձեռնարկներն ու հասարակական կազմակերպությունները, նմանապես շահագրգուված անկազմակերպությունները, ձեռնարկները, կարող են պահանջել դատական կարգով անվավեր ձերը, կարող են պահանջել դատական կարգով և սպիտակու- համարել փոխառակությունը, վորը կատարվել է սպիտակու- լատիվ նպատակով, կեղծությամբ, և պահանջել նման փո- լատիվ նպատակով, կեղծությամբ, մեջ մասնակցողներին տեղափոխել կը կի՞ լիանակության մեջ մասնակցողներին:

21. Ժամանակավոր ապրողեւը և առաջի և
ները, վորոնք չեն ազատում իրենց բնակելի տարածությու-
նը փոխանակվող բնակարաններում, կարող են վտարվել
փոխանակողների կողմից դատական կարգով, առանց այլ
բնակարան տրամադրելու:

Յենթալարձակալները, վուլուք և ու վող բնակարանում, չեն կարող յենթարկիլ վտարման յենթարձակալական պայմանագրի ժամկետի ընթացքում, յեթե չկան վտարման այլ որինական հիմունքներ :

22. Կոմտինտգողկոմատի և Արդուոլու մասնակիության
ժայիսի 15-ի հրահանգը «Բնակաբանների վոլխանակության
կարգի և պայմանների մասին» համարել չեղյալ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՎՏԱՐՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻՑ

33. ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ ԶԳՏՆՎՈՂ ԱՆՁԵՐԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՅԵՎ ՇՈՎԱՅՐԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԵՐԻՑ ՎՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի

1931 թ. ոգոստոսի 17-ի վորոշումը

(ԽՍՀՄ Ռու. ժող., 1931 թ., № 53, հոդ. 342)

I

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐԻ ԿՈՄԻՏԵՆ և ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎՈՐՈՇՈՒՄ Են՝

1. Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի մարմիններին իրավունք է վերապահվում իրենց պատկանող տներից. առաջա բոլոր ժամանակներին վարչական կարգով վարել այն բոլոր անձերին, վորոնք չեն դանվում Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում։

Վարչական վտարման իրավունքը տարածվում է Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատին հատկացված բոլոր տների վրա, անկախ այն հանդամներից, թե ինչ հիմունքներով են տրամադրված յեղել (ազգայնացում, ամրացում, կառուցման իրավունք, վարձակալություն)։

2. Տեղական խորհուրդները պարտավոր են վտարվող բանվորներին, ծառայողներին և աշխատավորների այլ կատեգորիաներին բնակության համար պետքական տարածու-

թյուն տրամադրել ավագալ վայրում գոյություն ունեցող նորմաներով, ըստվորում, թանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի յերկարատև արձակուրդի և պահեստի պետկազմի անձերի, նույնպես և Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի թոշակառուներին բնակելի տարածություն պետք է տրամադրվի առաջին հերթին։

3. Աշխատավորները վտարվում են վտարման մասին հայտարարվելու որից սկսած 2 ամսվա ընթացքում, անկախ այն հանդամներից, թե տեղական խորհուրդը վտարվողին մատնանշված ժամանակամիջոցում բնակելի տարածություն տրամադրել է, թե վո՞չ։

Անշխատ տարրերին պատկանող անձերի վտարումը կատարվում է վտարման մասին հայտարարելու որից սկսած յոթ որ անցնելուց հետո՝ առանց բնակելի տարածություն տրամադրելու։

4. Ռերիշ վայր ծառայության փոխադրվող Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի կադրային պետկազմի անձերը պարտավոր են նոր ծառայության տեղում բնակելի տարածություն ստանալու որից սկսած մեկ ամսվա ընթացքում ազատել Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի տներում զբաղեցրած բնակարանը (1 հոդ.) և հանձնել այն վերջնիս մարմիններին։

Մատնանշված ժամանակամիջոցում այդ բնակարանները չաղատող բոլոր անձերը յենթակա յեն անհապաղ վարչական վտարման, առանց բնակելի տարածություն տրամադրելու։

5. Վտարումը կատարում են միլիոնայի մարմինները, կայազորի պետի կողմից տեղական խորհուրդներին տըրպող ցուցակներով։

6. Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի կադրային պետկազմի անձերի և նրանց հետ միատեղ բնակելի նրանց ընտանիքի անդամների հեռանալու հետևանքով մունիցիպալ ֆոնդի տներում պահաված ամբողջ բնակելի տա-

բարձր մաս կը բարձր է
-ոյաք մայնաթիւ արդյունավետ
-բաժն մասնաւունութիւն է կայտագործերի պետերի տրամադրու-
-բաժն մասնաւունութիւն է բանակեցվուածութիւն կերպներիս ցուցումով:
-ամել միշտ մասնաւունութիւն է յատիշայնութիւն և
-ոյ մասնաւունութիւն է զարգացնելու մասնաւունութիւն:

II.

Հայութեան առաջնորդ պահապահութեան վեհականութիւնը առաջարկութիւնը առաջարկութիւնը առաջարկութիւնը

7. Առաջարկել Ռազմական և ծովային գործերի ժողովը կը լինի կոմիսարիատին անհապաղ սահմանել իր տնօրինության տակ գտնիող բնակելի Փոնդի (1 հոդ.) ոգտագործման այնպիսի կարող, ըստ վորության կազմակազմի Հանրակացարանների բնակարանները հատկացվեն վորոշ պաշտոնների, և վոչ թե առանձին զինվորական ծառայողների:

8. Առաջարկել միութենական հանրապետությունների կառավարություններին. ա) պարտապորտեցնել տեղական խորհրդարաններին յերեք ամսվա ընթացքում այս վորոշման կարգով իրականացնել Բազմական և ծովային գործերի ժողովադրական կոմիսարիատի տներից այն լուրջ անձերի վարչությունը, վորոնք այդ ժամանակ չեն գտնվի Բանվորա-դյուրում, վարչությունը պարզ է ամսվա ընթացքում. բ) մեկ ամսվա ընթացքում իրենց որենսդրությունը համաձայնեցնել այս վորոշման հետ:

9. Վերացնել.

ա) ԽՍՀ Միության կենտրոնական գործադիր կոմիտե-
յի և Ժողովրդական կոմիսարների Խորհրդի 1925 թ. հոկ-
տեմբերի 16-ի վորոշումը՝ Բանվորա-գյուղացիական Կառ-
միր Բանակի շարքերում կամ Ռազմական և ծովային գոր-
ծերի ժողովրդական կոմիսարիատի ճիմնարկություններում
չհաջող անձերի զորանոցային շենքերից վտարելու մա-
սնաւորագործ անձերի պարագաների համար 1925 թ., № 75, հոդ. 560).

բ) ԽՍՀ Միության կենտրոնական գործադիր զուրացը
և ժողովրդական կոմիսարների Խորհրդի 1928 թ. փետրվա-
րի 15-ի վրացումը՝ Ռազմական և ծովային գործերի ժո-
ղովրդական կոմիսարիատի մարմիններին նրանց ամրացրած
աներից վարչական կազմով վատարելու իրավունք վերապա-
հելու մասին (ԽՍՀՄ Որ. ժող., 1928 թ., № 13, հոդ. 110):

34. ԽԵՀՄ ՆԳԺԿ ՈՐԳԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ-
ՏՆԵՐԻՑ ԽԵՀՄ ՆԳԺԿ ՈՐԳԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԶՈՐՔԵ-
ՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԳՏՆՎՈՂ
ԱՆՁԵՐԻՆ ԱՐՏԱԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Ժողկումխորհի 1939 թ. սեպտեմբերի 22-ի վորոշումը
(Որ. Ժող., 1939 թ., № 53, հոդ. 462)

ԵԱՀԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱԲԾԱԿԻՐԻ ԽՈՐՀՈՒՐ-
ՊՐ ՎՈՐՈՉՈՒՄ Ե՝

1. ԽՍՀՄ ՆԳԺԿ ՈՐԴԱՆԻՆԵՐԻՆ և զորքալին ՄԵՐ ՂԱՅԱՀՆԵԼ վարչական կարգով, առանց բնակելի տարածություն հաստիացնելու, տարվա ամեն մի ժամանակ ԽՍՀՄ թյուն հաստիացնելու, տարվա ամեն մեջ չգտնալու պատկանող տներից արտարնակեցնել ԽՍՀՄ ՆԳԺԿ պատկանող տներից արտարնակեցնել ԽՍՀՄ ՆԳԺԿ որդանիներում և զորքերում ծառայության մեջ չգտնալող անձներին:

Ծանոթություն 2. Սույս կույշը և ուրածված թուղթում թոշակառուների վրա, բանվորա-դյուղացիական կարմիր բանակի և ԲԳԲՎՆ շարքերն իսկա-կան զինվորական ծառայության կանչված, արտա-սահման, Արկտիկա և Հեռավոր արևելք գործուղ-ված անձերի ընտանիքների վրա, այն աշխատողների վրա, վորոնք կառավարության վորոշմամբ ՆԳԺԿ-ի վրա, վորոնք կառավարության փոխադրվել, ինչպես սիստեմից այլ սիստեմներ են փոխադրվել, ինչպես նաև այն անձերի վրա, վորոնք բնակելի տարածու-ներ են ստացել մինչև այդ տները ՆԳԺԿ-ի որդան-թյուն հանձնելը:

մը [ԽՍՀՄ Ժողկումխորհի 1940 թ., Հունվարի 3-ը և
մը (ԽՍՀՄ Որ. Ժող., 1940 թ., № 2, Հոդ. 30)]:
2. Թույլատը և ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին՝ արտաքնակեցումը կա-
տարել արտաքնակեցման յենթակա քաղաքացիներին գրա-

վոր ձեռվ հայտարարելու սրից յերկու ամիս անցնելուց հետո :

3. Մելիքիայի որդանների վրա զնել սույն վորոշման 1-ին հոգվածում հիշատակված անձերի արարակեցումը :

ՀՅԱՀՍԴ

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմի 1931 թվի ոգոսությունից 17-ի մազմական և Ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի մարմիններին պատկանող տներից Բանվորա-գյուղացիական կարմիր Բանակի շարքերում չգտնվող անձերին վտարելու վերաբերյալ վորոշումը կիրարկելու մասին :

Հաստատված և ՀիՍՀ Ժողկոմի կողմից 1931 թ. դեկտեմբերի 2-ին.

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմի 1931 թ. ոգոսությունից 17-ի մազմական և Ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի մարմիններին պատկանող տներից Բանվորա-գյուղացիական կարմիր Բանակի շարքերում չգտնվող անձերին վտարելու մասին՝ (ԽՍՀՄ Որ. և Կարգ. Ժող., 1931 թ., № 53, հոդ. 342) վորոշումը գործնականապես իրականացնելու նպատակով՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդն առաջարկում է ՀիՍՀ բոլոր քաղխորհուրդներին և ըրջործկոմներին՝ հիշյալ վորոշումը կիրառելիս ղեկավարին հետևյալ սկզբունքներով.

1. Միութենական որենքի համաձայն՝ մազմական և Ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի մարմիններն իրավունք ունեն իրենց պատկանող տներից տարվա բոլոր ժամանակներին վարչական կարգով վտարել բոլոր այն անձերին, վորոնք չեն գտնվում Բանվորա-գյուղացիական կարմիր Բանակում. վտարման այդ իրավունքը տարածվում է ուղղմական գերատեսչության հատկացված բոլոր տների վրա՝ անկախ նրանից, թե ինչ հիմունքներով են այդ տները գտնվում թաղմական և Ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի տրամադրության տակ (աղդայնացում, ամրացում, կառուցման իրավունք, վարձակալություն) :

2. Վտարվող բանվորներին, ծառայողներին, և աշխատավորների այլ կատեգորիաներին քաղխորհուրդներն ու

ըրջործկոմները տրամադրում են սահմանադրական տեսակետից բնակության համար պետքական տարածություն՝ վտարելու պահին վտարվողի ունեցած բնակելի տարածությունից վոչ պակաս չափով:

Յեթե վտարվողը պատկանում է Հրամկագմին և գտնը վում է յերկարատե արձակուրդում կամ Բ.-Գ. Կարմիր բանակի պահեստում, կամ թե ուղղմական գերատեսչության թոշակառու յէ, ապա նրան բնակելի տարածություն է տրամադրվում առաջին հերթին:

Աշխատավորները վտարվում են՝ նրանց վտարելու մասին հայտաբարությունը տալու պահից յերկու ամսվա ժամանակամիջոցը լրանալուց հետո, անկախ այն հանգամանքից, թե քաղխորհուրդը կամ ըրջործկոմը հիշյալ ժամանակամիջոցում վտարվողին տրամադրում է բնակելի տարածություն, թե վոչ:

Յեթե վտարվողը պատկանում է անաշխատ կատեգորիային, ապա վտարումն ի կատար և ածվում վտարելու մասին հայտաբարելուց հետո 7 որվա ընթացքում, առանց բնակելի տարածություն տրամադրելու:

4. Բնակարաններից վարչական կարգով վտարման յենթակա յեն նաև Բ.-Գ. Կարմիր Բանակի կաղըային հրամագիրը ուղարկում է անձերը, վորոնք փոխադրված լինելով կազմին պատկանող անձերին, վորոնք փոխադրված լինակելի տարածուայլ վայրը, ծառայության նոր տեղում բնակելի տարածություն ստանալու որից մեկ ամսվա ընթացքում չեն ազատավում կողմից բոնած տարածությունը ուղղմական տուամ իրենց կողմից բոնած տարածությունը ուղղմական ածությունը կատարելու պահանող տներում (հոդ. 1). Հիշյալ գերատեսչության պատկանող տներում հիմունքներով են, առանց նրանց բնակելի տարածություն հատկացնելու:

5. Այս հրահանեցով նախատեսված անձերի վտարումն ի կատար են ածում միլիցիայի մարմիններն այն ցուցակներով, վոր կայազորի պետերը ներկայացնում են քաղխորհուրդներին և ըրջործկոմներին:

6. Յեթե Բ.-Գ. Կարմիր Բանակի կաղըային հրամկագմին պատկանող անձերին, այլև նրանց հետ ապահով անձերին վայրելը տեղափոխելու հետևանքով քաղաքայնացված փոնտի տներում բնակելի տարածություն և ազատավում, փոնտի տներում բնակելի տարածություն և ազատավում, ապա քաղաքային խորհուրդները պար-

տավոր են ամբողջ բնակելի տարածությունը հանձնել կայազորի պետերին ի անորինություն։ Այդ տարածությունը բնակության համար տրամադրվում է կայազորի պետերի ցուցումներով։

7. Քաղաքությունները և շրջգործկոմները պարտավոր են այս հրահանգում սահմանված կարգով յերեք ամսվա ընթացքում ուսղմական գերատեսչության պատկանող աներից վտարել այն անձերին, վորոնք այդ միջոցին այլևս ԲԳ Կարմիր Բանակում չեն գտնվում։

8. Այս հրահանգի հրատարակությամբ վերացվում են բոլոր այն վորոշումները, վորոնք վերաբերում են ուսղմական գերատեսչության պատկանող աներից բնակվող անձերին վտարելուն։

9. Պարտավորեցնել Հանրապետության դատախազին հսկելու այս հրահանգի կիրարկման վրա։

36. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆՔԵՐԻՑ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻՆ ԿՈՂՄԱԿԻ ԱՆՁԵՐԻՆ ՎՏԱՐԵԼՈՒ ՅԵՎ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ¹
ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. փետրվարի
13-ի վորոշումից (ԽՍՀՄ Որ. և Կարգ. ժող., 1931 թ.,
№ 10, հոդ. 110)

ԽՍՀ Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեն և
Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը վորոշում են։

1. Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական

¹ ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1931 թ. սեպտեմբերի 7-ի վորոշման պարզաբնամարտ ԽՍՀՄ կենտգործկոմի ու Ժողկոմխորհի 1931 թ. փետրվարի 13-ի «Տրանսպորտի մարմիններին պատկանող չենքերից տրանսպորտին կողմնակի անձերին վտարելու և տրանսպորտի աշխատողներին բնակեցնելու ժամկեց» վորոշումը (ԽՍՀՄ Որ. և Կարգ. ժողով., 1931 թ., № 10, հոդ. 110) տարածվում է նաև ԽՍՀՄ ներքործժողկոմատին կեց Խճուղային ճանապարհների գլխավոր վարչության և նրա որդանների՝ միութենական Հանրապետությունների և ավտոնոմ Հանրապետությունների ինուրդային ճանապարհային որդանների և յերկրային, մարզային ճանապարհային բաժիններին պատկանող բնակարանային չենքերի վրա։ [Տե՛ս ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1938 թ. նոյեմբերի 2 վորոշումը այս ժամկեց։ (ԽՍՀՄ Որ. և Կարգ. ժողովածու, 1938 թ., № 50, հոդ. 281)]։

կոմիտարիատի և Զրային տրանսպորտի ժողովրդական կոմիտարիատի մարմիններին իրավունք է տրվում տրանսպորտին պատկանող տներից տարվա բոլոր յեղանակներին վարչական կարգով վտարել տրանսպորտի հետ վոչ մի առնվարչական վարչով վտարել տրանսպորտի հետ կամ կորցրած անձերին։

Վարչական վտարման իրավունքը տրանսպորտի հնչաղեա տրանսպորտին հատկացված հողերի վրա յեղած կառուցածքների մեջ գտնվող չենքերի, նույնպես և քաղաքային կամ այլ նշանակության հողերի վրա յեղած կառուցածքների մեջ գտնվող չենքերի վրա, անկախ նրանից, թե ինչ ների մեջ գտնվող չենքերի վրա, անկախ նրանից, թե ինչ կմունիքներով են այդ կառուցումներն ու չենքերը հատկացվածքների մասնապորտին (ամրացում, կառուցման իրավունք, վարչակալություն) ²։

2. Տրանսպորտի մարմինները պարտավոր չեն վտարվողներին ուրիշ բնակելի տրանսպորտի տրամադրել։

3. Տեղական խորհուրդները պարտավոր են վտարվող բանվորներին, ծառայողներին և աշխատավորների ուրիշ բանվորներին, բնակության համար պետքական տրանսպորտի անձերին կողմնակի անձերին վտարելու և տրանսպորտի աշխատողների համաձայն։ Այն աշխատավորների կատեգորիանորմաների համաձայն։ Այն աշխատավորների կատեգորիանորմաների ստույգ ցուցակը, վորոնց բնակելի տրանսպորտների ստույգ ցուցակը, վորոնց բնակելի տրամադրվել, սահմանվում է միութենական հանրապետությունների որենագործությամբ։

4. Տեղական խորհուրդները պարտավոր չեն բնակելի տրանսպորտի տրամադրել այն վտարվողներին, վորոնք տարածում առանց վարչության համաձայնության դադարել են տրանսպորտի վրա աշխատելուց կամ վտարվել են՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կամ հանցանությունը կատարելու հետեւանքով։

¹ Այժմ՝ Ծովային նավատարմիկի ժողկոմատ և Զրային նավատարմիկի ժողկոմատ։

² Այս վորոշումը չի տարածվում այն տների վրա, վորոնք ձանապարհների հաղորդակցության ժողովրդական կոմիտարիատի կողմից պարզաբնամարտ կամ վարչակալական սկզբունքով 1931 թ. փետրվարի 13-ի վորոշումից առաջ։ [Տե՛ս ԽՍՀՄ կենտգործկոմի 1933 թ. մըլվարի 27-ի հրահանգը (ԽՍՀՄ Որ. և Կարգ. ժողովածու, 1933 թ., № 23, հոդ. 132)]։

5. Զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքներին վագագում պահպանվում են Բանվորա-պատշաճական Կարմիր Բանակի զինվորական ծառայողների և զինապարաների ու նրանց ընտանիքների համար գոյություն ունեցող արտօնությունների սրենսգրքով՝ նախատեսված:

Համանդամության կամ խեղանդամության պատճառով ազատված աշխատողներին կարելի յէ վարչական կարգով վտարել՝ նրանց ասլբելու համար սիփանի բնակելի շենք հատկացնելու պայմանով միայն: [1938 թ. սեպտեմբերի 22-ի վորոշումը (ԽՍՀՄ Ռ. և Կարգ. ժող., 1938 թ., № 43, հոդ. 252):

6. Վտարումը կատարվում է վտարման յենթակա քաղաքացուն այդ մասին դրավոր ձեռվ հայտնելուց յերկու ամիս անցնելուց հետո: [1938 թ. փետրվարի 13-ի վորոշումից (ԽՍՀՄ Ռ. և Կարգ. ժող., 1938 թ., № 7, հոդ. 45):

7. Տրանսպորտի մարմինները, աշխատավորներին վտարելու գեպքում, պարտավոր են տրանսպորտային միջոցներ կամ յերկաթուղային և ջրային ճանապարհներով՝ ձրի մեկնելու իրավունք տալ ինչպես իրեն վտարվողին, նույնպես և նրա հաշվով պահպող ընտանիքի անդամներին և տնային իրերի ձրի փոխադրության իրավունք տալ՝ ընտանիքին 240 կելոգրամից և նրա հաշվին ապրողներից յուրաքանչյուրին 80 կելոգրամից վոչ ավելի չափով:

[1938 թ. փետրվարի 13-ի վորոշումը (ԽՍՀՄ Ռ. և Կարգ. ժող., № 7, հոդ. 45):]

8. Տրանսպորտի մարմիններն իրավունք ունեն վարչական կարգով տեղափոխել նաև տրանսպորտի բանվորներին ու ծառայողներին այն գեպքում, յերբ այդ տեղափոխությունը ծագում է այն աշխատողներին աշխատանքի վայրում բնակարան տրամադրելու անհրաժեշտությունից, վորոնց ըստ իրենց կատարած աշխատանքի բնույթի անհրաժեշտ և բնակվել այդ բնակարաններում (գնացքների և նույնական պահպանության հետ կապված աշխատանքը, ճանապարհի, գույքի, բեռների և այլնի պահպանությունը) կամ, յերբ տեղափոխությունը բնակելի տարածության հավելյա-

ներն ոգտագործելու անհրաժեշտությամբ և թելադրված: տեղափոխության ժամանակ արանսպորտի մարմինները պարտավոր են բանվորական ուժ և տրանսպորտի միջոցներ արամադրել դրա համար:

9. Հարկադիր վտարումը և տեղափոխությունը կատարվում է՝

ա) տրանսպորտին հատկացված հողերի վրա դանվող չենքերից՝ տրանսպորտի մարմինների վարչության կողմից.

բ) մեացյալ գեպքելում՝ մելիցիայի կամ գյուղական խորհրդի կողմից տրանսպորտի մարմինների հայտարարությամբ:

10. Այն պաշտոնատար անձերի շրջանը, վորոնց իրավունք է տրվում կարգադրություններ անել վտարման կամ տեղափոխության առթիվ, աշհմանում և Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատը և Զրային տրանսպորտի ժողովրդական կոմիսարիատն ըստ պատկանելու, համաձայնության դաշտվ համապատասխան արհեստական միությունների կենտրոնական կոմիտեների հետ:

11. Միութենական հանրապետությունների կառավարություններին առաջարկվում է մեկ ամսվա ընթացքում իրենց որենսգրության մեջ մտցնել այս վորոշումից բղխող փոփոխությունները:

37. ԶԲՍՂՎԱԾ ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՔՆԱԳԼՈՒԽՆ ՄՏՆԵԼՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ Ժողկոմիսորիի 1935 թ. նոյմեբերի 20-ի վորոշումը (ՀԽՍՀ Ռ. և Կարգ. ժող., 1935 թ., № 11, հոդ. 109)

Ուրիշի ոգտագործման տակ գտնվող բնակտարածության (բնակարաններ, սննյակներ և այլն) ինքնազլուխ գրավման գեմ պայքարելու նպատակով, ժողովրդական կոմիսարների մորհուրդը վորոշում է:

1. Արդեն զբաղեցրած բնակտարածությունները կողմանակի անձերի կողմից ապրինարար ներս մտնելը, առանց նրանց ոգտագործողների համաձայնության—կտրուկ կերպով արգելվում է:

Նախքան այդպիսի բնակարանների որենքով սահման-
ված կարգով ազատվելը, նրանցում բնակվելու համար ինչ-
պիսի կազմակերպությունների կողմից և ինչպիսի հիմունք-
ներով ել որդերներ կամ թույլտվություններ տրված լինեն,
—համարիում են անվայիլեր:

2. Բնակարանն ազատ չի համարվում, յեթե նրա մեջ
վորեւ մեկն ապրում է, կամ նրա մեջ դատնվում և ժամա-
նակավոր բացակայող ողտագործողի իրեւը, թեկուզ իրե-
րի տիրոջ ժամանակավոր բացակայելը ձևակերպված եւ
չինի պատշաճ կերպով:

Ժամանակվոր բացակայողի բնակտարածությունը
պահելու որենքով սահմանված ժամկետն անցնելու գեպքում,
բնակարանը վորպես կանոն, կարող է ազատվել վոչ այլ
կերպ, քան դատարանի միջոցով:

3. Զքաղլված բնակտարածությունները մտնելու համար վորեւե հիմնարկությունից կամ կազմակերպությունից որդեռ կամ թույլավություն ստացած անձը չէ կարող բնակտարանը մտնել առանց նախորոք նրա մեջ փաստորին ասլրող ներին որենքով սահմանված կարգով հեռացնելու:

4-րդ հոդվածը վերացված է ՀԽՍՀ կենտղութեամի և Ժողովականի 1938 թ. ապրիլի 27-ի վորոշմամբ (ՀԽՍՀ Որ. և Կարգ. Ժող., 1938 թ., № 4, հոդ. 13) :

5. Զբաղված բնակտարածությունն ինքնակամ մտնող անձերը, այլև այն անձերը, վորոնք նպաստել են զբաղված բնակտարածության ինքնակամ գրավելուն—ինքնիրավշության համար յենթակա յեն քրեական պատասխանատվության:

38. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՆ ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական
Կոմիսարների Խորհրդի Վորոշումները

(ԽՍՀՄ Որ. Ժող., 1932 թ., I քաժին, № 25, հոդ. 153) ԽՍՀ Միության կենտրոնական գործադիր կոմիտեն և Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշում են.
1. Ապահովանել, մոռ լին և լլ-բգ աստիճանի դպրոցնե-

92

բի շենքելը պետք է ուղարկուծվեն բացառապես իրենց իս-
կական նպատակի, այն է՝ յերեխաների հետ գործոցակը-
թական աշխատանքներ տանելու համար:

2. Թուոյլ չտալ, վորպեսզի այդ շնչելն զբաղեցնեմ
դպրոցների հետ առնչություն չունեցող գանապան կաղմա-
կերպություններ, նույն թվում ամեն տեսակի հատուկ գա-
ռընթացներ և տեխնիկումներ (յերեկոյան տեխնիկումներ
և այլն):

3. Ժողովրդական լուսավորության որդաններին իրավունք տալ՝ տարվա բոլոր ժամանակի դպրոցական շենքերից վորոնք հարավ բոլոր ժամանակի դպրոցական շենքերից վարչական կարգով հեռացնել կողմնակի հիմնարկություններին, կազմակերպություններին, ինչպես և այն անձերին, կազմակերպություններին, — համաձայն ԽՍՀ գործնք կապ չունեն այդ շենքերի հետ, — համաձայն ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիտարքների Խորհրդի 1931 թ. փետրվարի 13-ի՝ տրամադրութիւն որդաններին պատկանող շենքերից տրամադրութիւն կապ չունեցող անձերին հեռացնելու և տրամադրութիւն գործադիրներին բնակեցնելու վերաբերյալ վորոշման (ԽՍՀՄ Ար. Ժող., 1931 թ., № 10, Հոդ. 110)

4. Առաջարկել միութենական համապատակության
կառավարություններին՝ այդ հանրապետականությունների որենսությունը համապատասխանեցնել այս վորոշմանը:
5. Առ մասունքը կիրառել 1932 թ. հունիսի 1-ից:

39. ՈՒՍՏԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻՑ ԿՈԴՄԱԿԻ ԱՆՁԵՐԻ ՎՃԱՐ-
ՄԱՆ ՄԱՍԻՆ

Պարտավորեցնել ժողովրդական կռմխսարիատներին և
քաղիւսութեազներին մինչև 1936 թ. սեպտեմբերն ազատել
ուսանողական բոլոր հանրակացարանները կողմնակի բնա-
կիչներից և ուսումնական շենքերն ամեն տեսակի ապրող-
ներից։ Այս վորոշումը չկատարող մեղավորներին յենթար-
կել պատասխանատվության։ [ԽՍՀՄ Ժողկռմխորհի և
Համկ(թ)Կ Կենտրոնական Կռմխսելի «Բարձրագույն ուսում-
նական հաստատությունների աշխատանքի և բարձրագույն
դպրոցների ղեկավարման մասին» վորոշման 5-րդ բաժնի
93 (ԽՍՀՄ Որ. Ժող., 1936 թ., № 34, հոդ. 308)]։

40. ԲՈՒՀԵՐԻ, ԲՏՈՒՀՆԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՍ-
ՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐԻՑ ԱՅՆ ԱՆՁԵՐԻՆ ՎՏԱՐԵ-
ԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՈՆՔ ՏՎՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ ԶՈՒՆԵՆ ԿԱՄ ԽՁԵԼ
ԵՆ ԿԱՊԵՐԸ

Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
1939 թ. հուլիսի 3-ի հրամանագիրը
(Արձանագրություն № 4, 1939 թ.)

1. Բուհի, բառուհի և տեխնիկումի հետ անմիջական
առնչություն չունեցող կամ այլպիսին կորցրած անձերը
յենթակա յեն այդ ուսումնական հաստատություններից հան-
րակացրաններից վարչական կարգով վտարման, վտարվե-
լու մասին նախազգուշացման որից միամսյա ժամկետը
լրանալուց հետո, առանց բնակարանային տարածություն և
փոխադրական միջոցներ տրամադրելու:

2. Վարչական կարգով վտարումը, ուսումնական հաս-
տատության գիրեկառի առաջարկությամբ, կատարում են
միլիցիայի որդպանները:

41. ԻՆՔՆԱԳԼՈՒԽ ԿԵՐՊՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԸ ԳՐԱՎԱԾ
ԱՆՁԵՐԻՆ ՎՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
1939 թ. հունիսի 11-ի հրամանագիրը
(Արձանագրություն № 4, 1939 թ.)

1. Այն անձերը, վորոնք բնակելի շենքեր են գրավել
ինքնագլուխ կերպով, առանց որենքով կամ պայմանագրով
նախատեսված բավականաչափ հիմքի, ազգայնացված,
մունիցիպալացված տնատիրություններում, վորոնք սեփա-
կանության իրավունքով պատկանում են Հասարակական
կազմակերպություններին, ինչպես և անձնական սեփակա-
նության իրավունքով, յենթակա յեն վտարման գրաված
շենքերից վարչական կարգով, տարվա բոլոր ժամանակնե-
րին, առանց բնակելի տարածություն և փոխադրական մի-

չոցներ տրամադրելու, յեթե ինքնագլուխ կերպով բնակու-
թյուն հաստատելու որից անցել է վոչ ալելի քան 7 որ:

Իսկ յեթե բնակելի շենքն ինքնագլուխ կերպով գրա-
վելու մոմենտից անցել է ալելի քան յոթ որ, ապա վտա-
րումը կատարվում է գտառական կարգով, տարվա բոլոր յե-
ղանակներին, առանց բնակելի տարածություն և փոխա-
դրական միջոցներ տրամադրելու:

2. Ինքնագլուխ կերպով բնակություն հաստատողների
վտարումը վարչական կարգով կատարում են միլիցիայի որ-
դպանները շահագրգուված տնային վարչությունների կամ
տնատերերի հայտարարությամբ, ինչպես և այն անձերի
հայտարարությամբ, վորոնց արամագրված ե այդ շենքն
ոգտագործելու համար, ընդվորում վերջինների վրա պա-
տասխանատվություն ե դրվում քաղաքացիններին նրանց
գրաված շենքերից սխալ վտարելու և սույն հրամանագիրը
խախտելու համար:

42. ԽՍՀ ՄԻԱԽԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉԻ 1938 թ.

ՀՈԿՑԵՄԲԵՐԻ 5-Ի № 1448 ՀՐԱՄԱՆԸ

ՔԱՂՎԱԾՔ

Ուսումնական հաստատությունների հանրակացարան-
ներից կողմնակի անձերին վարչական վտարման թույլտվու-
թյուն տալու մեջ դատախազների մերժումների դեմ յեղած
բուհերի դերեկտորներից ստացվող դիմումների կապակ-
ցությամբ հրամայում են՝

1. Ապահովել «Բարձրագույն ուսումնական հաստատու-
թյունների աշխատանքների մասին և բարձրագույն գպրոցի
ղեկավարության մասին» Համ. Կ(բ)Կ կկ և ԽՍՀՄ ԺԿԽ
1936 թ. հունիսի 23-ի վորոշման անշեղ կատարումը, վորո-
շաբախավորեցնում և ժողկոմաներին և քաղխորհուրդներին,
ազգատել ուսանողական հանրակացարանները կողմնակի
բնակեներից:

2. Նախկին ուսանողներին և նրանց ընտանիքների ան-
դամներին վարչական կարգով վտարելիս ղեկավարվել
ՈՒԽՄՀՀ, Համ. ԿԳԿ և ԺԿԽ 1926 թ. հունիսի 14-ի վորոշման

5. Հողվածով և միութենական հանրապետությունների կառավարությունների համաման վորոշումներով:

3. Աւտոմատական հաստատությունում կամ հանրակացարանում ունեցած աշխատանքի կապակցությամբ (վարչական, դասատրական և սպասարկությամբ) բնակելի տարածություն ստացած անձերին վտարելիս նկատի ունենալ, վոր նայած աշխատանքի սպահանագրի դադարելու սպատառին և զբաղեցրած բնակարանի բնույթին, վտարումը կարող է տեղի ունենալ կամ վարչական կարգով («բնակարանային ֆոնդը պահպանելու մասին» ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1937 թվի Հոկտեմբերի 17-ի վորոշման 31 հոդ. «բ» կետը), կամ թվի Հոկտեմբերի 17-ի վորոշման 31 հոդ. «բ» կետը), կամ դաստական կարգով (հույն որենքի 32 հոդ.): Աշխատանքի դաստական կարգով (ըստ պահպանագրելով ստացած հասուլ բնակարաններից (ըստ հերի շենքերում վարչության, դասատրական և սպասարկությամբ համար յեղած բնակելի տարածությունները) վտանկացմի դադար յեղած դատական կացով ՌԽՖՍՀ բուժք կատարի և կատարվել դատական կացով ՌԽՖՍՀ բուժքի որդիվաճի և միութենական հանրապետությունների Քաղ. Որ. 171-ա Հոդվածի և միութենական հանրապետությունների Քաղ. Որ. Համապատասխան Հողվածների հիման վրա, առանց բնակարան արամագրելու:

4. Այն դեպքերում, յերբ կողմնակի անձերի վտարումը ուսանողական հանրակացարաններից պետք է կատարվի բնակարան արամագրելով, միջոցներ ձեռք առնել տեղաբնական քաղխորհուրդների կամ համապատասխան գերատեսչությունների միջոցով վտարվողներին արագ կերպով բնակարան արամագրելու և ուսանողական հանրակացարաններն ազատելու ուղղությամբ:

5. Յենթարկել կարգապահական կամ քրեական պատասխանատվության (ՌԽՖՍՀ Քր. Որ. 111 Հոդվածով) և միութենական հանրապետությունների Քր. Որ. Համապատասխան Հոդվածներով) ուսումնական հաստատությունների և ուսանողական քաղաքների այն զեկավարներին, վորոնք միջոցներ չեն ձեռք առնում ուսանողական հանրակացարանները կողմնակի բնակվողներից ազատելու ուղղությամբ:

43. ՄԻԼԻՑԻԱՆ ՅԵՎ ԴԱՏԱԽԱՉԱԿԱՆ ՈՐԴԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԻՄՆԱՐԿՈՒՆԵՐԻՆ, ԶԵՐՆԱՐԿՈՒՆԵՐԻՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԵՐԻՑ 1937 թ. ՀՈԿՏԵՄԲՐԵՐԻ 17-ի ՈՐԵՆՔԻ 31 ՀՈԴՎԱԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎՏԱՐԵԼԻՄ

ԽՍՀՄ ՆԳ ԺՈՂՈՎԱԾԻ և ԽՍՀՄ ԴԱՏԱԽԱՋԻ
1938 թ. մարտի 27-ի հրահանգը

(ԽՍՀՄ դատախազության իրամանների ԺՈՂՈՎԱԾՈՒ,
1939 թ., եջ 117)

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀԸՐԾ-
ԴԻ ցուցումներին համապատասխան ի զեկավարություն ըն-
դունել ՀԻՄՆԱՐԿՈՒՆԵՐԻՆ, ՃԵՌՆԱՐԿՈՒՆԵՐԻՆ և ԿԱՂՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ պատկանող տներից քաղաքացիների վարչական
վտարմանը ԲԳ միլիցիայի որդանների կողմից ոժանդակու-
թյուն ցույց տալու և վարչական վտարումների որինակա-
նության վրա դատախազական որդանների կողմից հակողու-
թյուն իրականացնելու հետևյալ կարգը.

1. Հիմնարկուներին, ճեռնարկուներին և կաղմակերպու-
թյուններին պատկանող տներից վարչական վտարում թույլ
ե տրվում միայն ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1937 թ. Հոկտեմբերի
17-ի վորոշման 31 հոդվածում նշված դեպքերում (ԽՍՀՄ
Որ. Ժող., 1937 թ., № 69, Հոդ. 314):

2. Միլիցիան պարտավոր և ոժանդակություն ցույց տալ
վտարում կատարող որդաններին այն դեպքերում, յերբ
վտարվողը հրաժարվում է կամավոր կերպով թողնելու իր
զբաղեցրած բնակարանը կամ դիմադրություն ե ցույց տա-
լիս վտարման ժամանակական:

3. Միլիցիան վտարում կատարող որդաններին ոժան-
դակություն ե ցույց տալիս միայն Հիմնարկության, ճեռ-
նարկության, կաղմակերպության զեկավարի գրավոր դի-
մումը ստանալուց հետո, վորի մեջ հաստատվում ե վտար-
ման վերաբերյալ պահանջին՝ վտարվողի յենթարկվելուց
հրաժարվելու փաստը:

Հիմնարկուների, ճեռնարկուների և կաղմակերպություննե-

րի զեկավարների գրավոր դիմումները մելիցիայի որպան-ներին պետք է ունենան վարչական վտարման վերաբերյալ պահանջի որինականությունը հաստատող դատախազի վեցան:

4. Դատախազները, վեզայի համար նրանց դիմելիս, յուրաքանչյուր առանձին դեպքում ստուգում են վտարման որինականությունը, վտարվողի համար որենքով սահմանված յերաշխիքների (վտարման վերաբերյալ ժամանակին զգուշացում և այլն) պահպանումը, ինչպես նաև այն շարժառիթների հիմնավորվածությունը, վորոնց հիման վրա վտարվողը հրաժարվում է յենթարկվել վտարման վերաբերյալ պահանջին և դրանից հետո կամ վեզայի յեն տալիս կամ հրաժարվում այն տալուց:

Բացառիկ դեպքերում դատախազը, յելնելով փաստական հանդամանքներից, իրավազոր և ժամանակավորապես հետաձգել վտարումը:

5. Մելիցիայի ներկայացուցիչը ժամանելով տեղը, հաղորդում է վտարվողին վտարման որինականության մասին, առաջարկում է ազատել բնակարանը և ներկա յի լինում վտարման ժամանակ:

Վտարման ժամանակ վտարվողի ներկա լինելուց խուսափելու դեպքում՝ շենքի բանալը տեղի յե ունենում մելիցիայի ներկայացուցչի ներկայությամբ:

6. Շենքի բանալը, գույքի դուրս հանելը և այլն կատարվում է վարչական վտարում կատարող հիմնարկի, ձեռնարկի և կազմակերպության ներկայացուցիչների կողմից:

ՎԵՅՏՈՐԻ ՀԱՏՎԱԾ

ՀՅՈՒՐԱՆՈՑԻՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

44. ՀՅՈՒՐԱՆՈՑԻՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՑԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՄՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

ՀԵՍԴ Ժողկովին 1939 թ. նոյեմբերի 22-ի վորոշումը
(1939 թ., № 8, հոդ. 73)

Նշել, վոր Ռայոնական կազմակերպությունների ուշադրության անրավարարության հետևանքով հյուրանոցները չեն համապատասխանում այն պահանջներին, վոր առաջադրվում է նրանց:

Հյուրանոցները բնակեցված են մշտական բնակվողներով ու միջոցներ չեն ձեռք առնվում այն ազատելու համար: Իսկ միքանի շրջկենտրոններում հյուրանոցների յերկուական համարներ բռնել են մի ընտանիք (Սևան): Սարքավորումն ավարտելու համար բաց թողնվող միջոցները չեն իրացվում, արդյունաբերական ավրանքների հատկացված Փոնդերը վորոշ շրջգործկոմներ չեն իրացրել: Բացակայում է հյուրանոցների սանիտարական վիճակի և կուլտուրական սպասարկման համար պայքարը, այլ և հյուրանոցային տնտեսության, ինվենտարի և այլն ճիշտ հաշվառում չի տարբերվում:

Հայկական ԽՍՀ Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝

1. Պարտավորեցնել շրջգործկոմների նախագահներին՝
ա) գործնական միջոցներ ձեռք առնել հյուրանոցները

կողմնակի բնակվողներից մինչև 1940 թ. մայիսի մեջը
ազատելու ուղղությամբ.

բ) նոր կառուցվող տների բնակելի տարածությունն
առաջին հերթին հատկացնել հյուրանոցներում ապրող ան-
ձերին, այսուհետև թույլ չտալով, վոր հյուրանոցները ծան-
րաբեռնվեն մշտական բնակիչներով.

գ) ստուգել հյուրանոցների վառելիքով ապահովվածու-
թյունը, բարելավել սպասարկումը և սիստեմատիկ հսկո-
ղություն սահմանել հյուրանոցների սանիտարական դրու-
թյան մասին:

2. Առաջարկել կոմունալ տնտեսության ժողկոմ ընկ-
խաչատրյանին՝

ա) տասն որվա ժամանակամիջոցում մշակել և հաստա-
տել կողեգիայում ու տեղերն ուղարկել հյուրանոցների
ներքին կարգապահության կանոնները.

բ) 1940 թ. համար միջոցներ նախատեսել հյուրանոց-
ների նորոգման համար, ինչպես արտալիմիտային ծախքե-
րի վերաբերմամբ, նույնպես և համապատասխան միջոց-
ներ ամորտիզացիոն մասհանումներից, ամորտիզացիայի
50%-ից վոչ պակաս չափով.

գ) շրջանային հյուրանոցների համար 4-րդ յեռամսյա-
կի ֆոնդից սպասարկելենի կտոր մասհանել 37 հազար ռուբ-
լի գումարով.

դ) 2 ամսից հետո Հայկական ԽՍՀ ԺԿՄ հաղորդել այս
վորոշումը կատարելու մասին:

ՑՈՒՑԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆԳԵՐԻ ԳՆՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

45. ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ, ԿՈՂՄԻՉԵՐԱՑՈՒԿ, ՅԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԵՐԻՑ
ՇԵՆՔԵՐ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ Ժողկոմինիքի 1935 թ. սեպտեմբերի 7-ի վորոշումը
(Արանագրություն № 16, կետ 27)

1. Պետական հիմնարկությունների ու ձեռնարկու-
թյունների, կողմերատիվ և հասարակական կազմակերպու-
թյունների կողմից մասնատիրական շենքեր, ինչպես նաև
կառուցման իրավունքով մասնավոր անձերի կողմից կա-
ռուցված շենքեր գնելը թույլատրվում է միայն այն շենքե-
րի կահագործման արժեքից վոչ բարձր գնով, իսկ այն վայ-
րում, վորտեղ կահագործման չի կատարված, ապահովագրման
գնահատականից վոչ բարձր գնով:

2. Անվավեր են համարվում այս վորոշման 1-ին հոդ-
վածի խախտումով կատարված գործարքները և այդպիսի
գործարքներ կնքած սեփական որդանների, կողմերատիվ և
հասարակական կազմակերպությունների պաշտոնատար ան-
ձերը յենթարկում են պատասխանատվության:

3. Պետական հիմնարկների և ձեռնարկությունների,
կողմերատիվ ու հասարակական ձեռնարկությունների կող-
մից մասնավոր անձերից շենքեր գնելու գործարքները, ՀԽՍՀ
քաղաքացիական որենսգրքի 185 հոդ. համաձայն, անպայ-
ման պետք են վավերացնել տեղական գործադիր կոմիտեի
կամ քաղաքորհորդի կոմունալ բաժնում:



Յ Ա Ն Կ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ԲՆԴԱՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒԽՆՔՆԵՐ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՈԳՏԱ-
ԳՈՐԾՄԱՆ ՑԵՎ ԲՆԱԿԳՈՒԴԻՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Եջ

1. Քաղաքներում բնակարանային Փոնդը պահպանելու և բնա-
կարանային տնտեսությունը բարելավելու մասին . . .
2. Աշխատանքային կարգավագությունը կարգավորելու, պե-
տական սոցիալիստն ապահովագրության պահպանի
բարելավելու և այդ գործում չարաշահողների գեմ պայքա-
րելու միջոցառումների մասին
3. Ցերեանի քաղաքամերձ ավաններում բնակարանային Փոն-
դը պահպանելու, բնակարանային տնտեսության կառուլա-
բումը կարգավորելու և բնակվածք գանձելու մասին . .
4. «Հայկական ԽՍՀ բնակարանային որենսդրությունը» փո-
փոխելու մասին, համաձայն ԽՍՀՄ կենտզործկոմի և ժող-
կոմիտուհի 1937 թ. հոկտեմբերի 17-ի «Բնակարանային Փոն-
դը պահպանելու և քաղաքների բնակարանային տնտեսու-
թյունը բարելավելու մասին» վորոշման
5. ՀԽՍՀ «Բնակարանային որենսդրության» փոփոխության մա-
սին համաձայն ԽՍՀՄ կենտզործկոմի և ժողկոմիտուհի
1937 թ. հոկտեմբերի 17-ի «Բնակարանային Փոնդը պահ-
պանելու և քաղաքների բնակարանային տնտեսությունը
բարելավելու մասին» վորոշման
6. Ազգայնացված և քաղաքայնացված շենքերը բաշխելու, ող-
տագործելու, ինչպես նաև այդ շենքերը պետական հիմնար-
կություններին, ձեռնարկություններին ամրացնելու, պահ-
պանելու, ողտագործելու և արժեքը չի չեցնելու կարգի
մասին

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉ

7. Քաղաքներում, շրջանային կենտրոններում և բնակութական
ավաններում սահմանվող բնակարանային վարձի մասին . .

Յջ

8. Ամառանոցներում բնակարանային վարձ սահմանելու մասին
9. Բանվորական ավանների մասին
10. Բանվորատյուղացիական կարմիր բանակի ծառայողների և
զինսպարտների ու նրանց ընտանիքների արտօնությունների
մասին
11. Բգկբ կադրային հրամանատարական ու պետկազմի, գերա-
կետ ծառայության կադրային կրտսեր հրամանատարական
ու պետկազմի և գերակետ ծառայության կադրային չար-
քային կազմի, ԽՍՀՄ ՆԳԺԿ սահմանային ու ներքին պահ-
պանության զինվորական ծառայողների բնակվածքի կոպար-
ների մասին
12. ԽՍՀՄ ԿԳԿ առնելու կոմունալ տնտեսության համամիու-
թենական խորհրդի 1936 թ. ապրիլի 28-ի չրջարերականը

(Քաղաքածք)

13. Բգկբ հրամկազմի համար բնակվոնդ ստեղծելու մասին
14. Բանվորատյուղացիական միլիցիայի հրամկազմի հատուկ
կոչումներ ստացած անձերի բնակվածքի դրույքների մա-
սին
15. Գրական աշխատանքի գործառնություններին, նմանապես և նկա-
րիչներին, քանդակագործներին ու գիտական գործառնու-
թյուններին բնակարանային վարձի վերաբերյալ բանվորներին ու
ծառայողներին հավասարեցնելու մասին
16. Եկարիչների ու քանդակագործների բանվորական արհեստա-
նոցներով բանվածք բնակելի մակերեսի ավելցուկի արտօնյալ
վճարքի մասին
17. Վորոշում ՀԽՍՀ կենտրոնական Գործադրի Կոմիտեյի նա-
խադահության՝ աշխատանքի հերոսների արտօնությունների
մասին
18. ՀԽՍՀ «Աշխատանքի դրույք» շքանշանով պարզեցործված-
ների բնակարանային արտօնությունների մասին
19. Պետքականուների բնակ. արտօնությունների մասին:
20. Քաղաքայնացված և մասնավոր աների մեջ հիմնարկու-
թյունների բոնած շենքերի վարձի մասին
21. Ժողկոմիորդի 1937 թ. սեպտեմբերի 13-ի «Քաղաքայնաց-
ված և մասնավոր աների մեջ հիմնարկությունների բոն-
ած շենքերի վարձի մասին» վորոշումը զինվորական գերա-
տեսչության պատկանող այլ գերատեսչությունների կողմէց
բոնած շենքերի վրա տարածելու մասին
22. Քաղաքային խորհուրդների, տրանսպորտի և արդյունաբե-
րական ձեռնարկությունների կողմից կառուցված տների
բնակարանավարձի մասին

65

23. Հայպետքաղվարչության և զորամասերի հրամկադիմին ու աշխատակիցներին բնակարանով պայմանվելու մասին . . .
 24. Շնոքերի վարձավճարների, բնակարանավարձի և կոմունալ ծառայությունների վճարքների ժամկետանցման տույժի չափի մասին

ՅԵՐԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

25. Գիտական աշխատողների բնակարանային պայմանները բարելավելու մասին
 26. Գիտական աշխատողների բնակարանային պայմանները բարելավելու մասին ՀԽՍՀ կառավարության վորոշումը . . .
 27. Գիտական, գիտա-մանկավարժական աշխատողների պատրաստման մասին

62

63

67

(Քաղվածք)

28. Գյուտերի և տեխնիկական կատարելագործությունների վերաբերյալ կանոնադրությունը: Քաղվածք
 29. Գրնջների բնակարանային պայմանների բարելավման մասին
 30. Խորհրդային կոմպոլիտորների բնակարանային պայմանների բարելավման մասին
 31. Խորհրդային գրողների և կոմպոլիտորների բնակարանային պայմանները բարելավելու մասին

69

70

71

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

32. Բնակելի շենքերի փոխանակության պայմանների և կարգի մասին

75

76

77

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎՏԱՐՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻՑ

33. ԲԳԿԲ չարքերում չգտնվող անձերին թագմական և ծովային գործերի գործիրական կոմիսարիատին պատկանող տներից վարելու մասին
 34. ԽՍՀՄ նԳԺԿ որդաններին պատկանող բնակելի տներից ԽՍՀՄ նԳԺԿ որդաններում և զորքերում ծառայության մեջ չգտնվող անձերին արտարնակեցնելու մասին

82

85

35. Հրամանգիր ԽՍՀՄ նԳԿԲ և ԺԿԵ-ի 1931 թ. ողոսուսուի 17-ի մազմական և ծովային գործերի գործովրդական կոմիսարիատի մարմիններին պատկանող տներից ԲԳԿԲ չարքերում չգտնվող անձերին վարելու վերաբերյալ վորոշումը կիրարկելու մասին

36. Տրանսպորտի մարմիններին պատկանող շենքերից տրանսպորտի կողմանակի անձերին վարելու և տրանսպորտի աշխատողներին բնակեցնելու մասին

37. Զբաղված բնակարածություններն ինքնազլուխ մտնելու դեմ պայքարելու մասին

38. Դպրոցական շենքերն ոգտագործելու մասին

39. Ռւանողական հանրակացարաններից և ռւասումնական շենքերից կողմանակի անձերին վարելու մասին

40. ԲՈՒՀՀԵՐԻ, ԲՏՈՒՀՆԵՐԻ և տեխնիկալուների ռւսանողական հանրակացարաններից այն անձերին վարելու կարգի մասին, վորոնք ավլալ ռւսումնական հաստատության հետ կազմեցնունեն կամ խելեւ են կազմերը

41. Ինքնագլուխ կերպով բնակելի շենքերը գրաված անձերին վարելու կարգի մասին

42. ԽՍՀ Միության Դատավագլի 1938 թ. հոկտեմբերի 5-ի № 1448 հրամանը

(Քաղվածք)

43. Միլիցիայի և դատախազական որդանների պարտականությունները՝ գիմնարկներին, ձեռնարկներին ու կազմակերպություններին պատկանող տներից 1937 թ. հոկտեմբերի 17-ի որենքի 31 Հոդ. հիման վրա քաղաքացիներին վարչական կարգով վարելու

86

91

92

93

94

94

94

95

97

ՎԵՅՏԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

44. Հյուրանոցային տնտեսություն վիճակի և սպասարկման բարելավման միջցանումների մասին

99

ՅՈԹԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԳՆՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԴՄԻՑ

45. Պետական հիմնարկների և ձեռնարկությունների, կոոպերատիկ և հասարակական կազմակերպությունների կողմից մասնակոր անձերից շենքեր գնելու մասին

Կազմից Ար. Ներսիսյան
Պատ. Խմբագիր Կ. Ստեփանյան
Տեխն. Խմբ. Գ. Զենյան
Մրրադրիչ Հ. Դոլուխանյան
Կանորու սրբագրիչ Յ. Տեր.-Մինասյան*

Գատվեր № 233, տիրաժ 2000

Տակած № 233, տիրաժ 2000

Հանձնվել և արտադրության 31/VII 1940 թ.
Սոսրադրվել և տպագրելու 11/XII 1940 թ.

Գինը 1 ռ. 50 կ.

Առաք 1 ռ. 50 կոռ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65
Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердин № 65

Վճ 2023

ՀՀ Ազգային գրադարան



NL0215328

37. 347